

0. Գ 0 9. 0 0 8 0. 6

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(Խղացրված՝ դատիստուրյան
ձեռագրի իրականիքով)

որպէս V

9 (47.928) 4179
7-79 Դուռը ա. անոնքի աշխատակիցներ
5p.

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՍԵՅՅՎՅԱՆ ՊԱՐՍԿԱՍԱՆԻ ԵՎ ՕՄԱՆՅԱՆ

Զ(Կ7.925)

Դ-79

ՍՈՒՀԹԱՆՈՒԹՅԱՆ ՀԾԻ ՏԱԿ.

ՏԵՂՔՆԱԾ Է 1981 թ.

Ա. ՍԵՅՅՎՅԱՆ ՊԱՐՍԿԱՍԱՆԻ ՏԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.

«Պրավդան» Հայաստանի խորհրդայնացման 15 - ամյակին նվիրած իր առաջնորդողում տալիս է այս էպոխայի վերին աստիճանի ճիշտ, դիպուկ բնութագրումը : Այնտեղ ասվում է, որ 14-րդ դարից հետո հայ ժողովրդի պատմության մեջ սկսվում է ամենամռայլ շրջաններից մեկը : Բանն այն է, որ սկսած հենքթեմուրի արշավանքներից մինչեւ 19-րդ դարի սկիզբը, այսինքն ամբողջ 15, 16, 17 եվ 18-րդ դարերը հայ ժողովուրդը անընդհատ ենթարկվել է թուրքմեն ցեղերի, պարսիկների ծվ օսմանցիների անընդհատ հարձակումներին, որի հետեւանքով նա այդ դարերին ապրում է տագնապայի եվ երերուն մի շրջան : Այդ շրջանում ող մրայն տնտեսապես է քայլայվում երկիրը, այլ եվ այդ դեպքերը ստիպում են հայ ժողովրդի մի զգայի մասին հեռանալու իր հայրենիքից, օտարություն գնալու : Խելթում են Հայաստանի քաղաքները եվ քաղաքային կյանքը ապրում է կատարյալ անկում այդ արշավանքների ժամանակ կատարված ավերածությունների եվ գերեվարությունների հետևանքով :

Այս է այն բնդրանուր բնութագրումը, որը արվում է այդ ժամանակաշրջանին :

Ինչպես հայտնի է 15-րդ դարի կիսերին, Ագ-Կոյունլուները ուժեղանալով, ամրացնելով իրենց դիրքը Հայաստանի հարավային եվ արեվմտյան մասերում եվ հյուսիսային Միջագետքում, բայրուման մեջ են մտնում Կարակոյունլուների հետ, եվ 1467թվին Ալյուն Հասանի գլխավորությամբ նվաճում են Կարա-Կոյունլուների պետությունն են եվ իրենց իշխանությունը հաստատում



Հ179 A 2609

Նաեւ Պարսկաստանի Եվ Կարա- Կոյունլուներին Ենթակա այլ եր-
կըրների վրա :

Աւզուն-Հասանի գլխավորած Ագ-Կոյունլուների պետու-
թյունը իր արեվմտյան սահմանում հարեւան է դառնում արդեն
օսմանական պետությանը եվ օսմանցիները Ագ-Կոյունլուների այդ
նորաստեղն պետության համար դառնում են ամենառաջնորդ եվ
ամենավտանգավոր արխոյանը :

Օսմանցիները այս շրջանում արդեն ձգտում էին տարած-
վել դեպի արեվելք դեպի Հայաստան եվ ահա Ագ-Կոյուն-
լուների պետության առաջ հարց է դրվում կասեցնել օս-
մանցիների տարածումը դեպի Արեվելք եվ խփել նրան : Խփել
ոչ միայն ճակատից, այլ նաև թիկունքից : Օսմանցիներին թու-
լացնելու նպատակով Ագ-Կոյունլուները սկսում են բանակու-
թյան մեջ մտնել վենետիկյան հանրապետության հետ : Վե-
նետիկցիների եվ Ագ-Կոյունլուների միջնորդ կնքվում է մի
համաձայնություն, միացյալ կերպով օսմանցիներին խփելու
համար, ապա այդ համաձայնության հետեւանքով 1472
թվին Աւզուն Հասանը մի բանակով արշավում է դեպի
ֆոքր Ասիա, հույս ունենալով, որ իր այդ արշավանքի Տա-
մանակ օսմանցիների դեմ դուրս կգան նաեւ վենետիկցինե-
րը, մանավանդ, որ Թագրիկ նկան վենետիկյան Կատարինո
Զենոն այդ խոստումը տվել էր, բայց վենետիկցիները իրենց
այդ խոստումը չկատարեցին : Աւզուն Հասանը օսմանցինե-
րի կողմից մի շավ ջարդ ուտելով՝ վերադարձավ : Քրանից
հետո այլեզս չփորձեց բաղրավելու օսմանցիների հետ, թեև
վենետիկցիները նորից ուզում էին հրահրել նրան օսմանցի-
ների դեմ : Աւզուն Հասանի Տամանակ Ագ-Կոյունլուների
պետությունը այնուամենայնիվ պահեց իր ամբողջականությունը

ԵՎ ՕՍՄԱՆՅԻՒՆԵՐԸ ՀԿԱՐՈՂԱԿԱՆ ՆՎԱՅԵԼ ՆՐԱ ԿԵՆՍԱԿՑՅԱՆ ՈՐԵ-
ՎԵ ՄԱՍԻՐ :

Սակայն Աւոտու Հասանի մահրց հետո Ազ-Հոյունուների
պետությունը չի կարողանում պահպանել իր գերքը Առաջավոր
Ասիայում և կամաց-կամաց գլորվում է զեսի անկում։ Այդ պե-
տության քայլայման պրոցեսն ավելի ցցոն կերպով գրսեվորվում
է հատկապես այն Երկպառակություններից եվ գահակալական կորի-
ներից հետո, որը տեղի են ունենում 15-րդ դարի վերջերին։

15-րդ դարի վերջերին գահակալական կորիների հետեւան-
գով իշխանություն գլուխ են անցնում միաժամանակ մի քանի անձ-
նավորություն, այսինքն յուրաքանչյուր ոք իրեն իրավունք է վե-
րապահում իր թեկնածությունն առաջարքնու գահի համար, ժոխ-
տելով մյուսի իրավունքները։

Ահա այդ ներքին երկպառակություններն արդեն վկայում են
իշխող տան քայլայումը։ Հենց այդ ժամանակաշրջանումն է, որ
Ասորպատականի մի գուվառում սկսում է ուժեղանալ տեղական Մի
ցեղապետ։ Այդ Սեֆին էր։ Սա մահմեդական հոգեվորականության
կամին պատկանող, մի ցեղական էր, եվ որպես սովոր իրեն ճագու-
մը համարում էր Ալիի սերյուդից։ Այդ շեյխ Սեֆին եվ նրա հետ-
նորդները սկսում են շրջանում տիրում էին Արտեմի քաղաքին,
որը գտնվում էր Գիլանում։ Այստեղ Սեֆին բավական մօճ ապ-
գեցություն է ունենում եվ նրա հեղինակությունը, նրա դիրքը Երկր-
ուում ուժեղական ցեղերի մեջ բավական բարձրանում է։ Այդ Սեֆին
անունով ել ցեղը հետագայում ստանում է իր անունը Սեֆեվյան,
կամ Սեֆյան։

15-րդ դարի կեսերին Սեֆյան Ֆեղալական տան եվ Երվանի
Ֆեղալական տան միջնէ համարակի տեղի են ունենում բաշխումներ։
Այդ բաշխումների ժամանակ Ջնանշահը, Կարա-Կոյունլուների այդ

մեծ ինքնակալը պաշտպանելիս է Եղի Շիրվանի խանին, եվ ընդհակառակը հալածանքի էր Ենթարկվել Սեֆյաններին : Հալածանքը այնքան ուժեղ է Եղի, որ Ջունայիրը՝ Սեֆիի որդիներից մեկը, փախչում է Գիլանից Եվ գնում է Ալյոն Հասանի մոտ՝ Իրարբերքիր: Այդտեղ Ալյոն Հասանի կողմից Նա Մեծ ընդունելություն է գտնում Եվ մտնում է Ալյոն Հասանի բանակը որը կորի էր սկսել Զհանշահի դեմ: Ջունայիրը վերջում վերադառնում է Գիլան Եվ Շիրվանի խանի հետ բաղիման Մեջ մտնելիս սպանվում է : Ջունայիրի որդի Հեյդարը նույնպես գնում է Ագ-կոյունլուների մոտ, փեսայանում է Ալյոն Հասանին Եվ կարողանում է նորից տնր դառնալ Գիլանին . Նա տեր դառնալով Արտերիլին, Ալյոն Հասանի մահից հետո, 15-րդ դարի վերջերին էլի բաշխման Մեջ է մտնում Շիրվանի խանի հետ: Այդ պայքարի արդյունքը լինում է այն, որ Հեյդարը սպանվում է կռվում: Սպանվում էն նաև Հեյդարի երկու որդիները Եվ կենդանի է մնում միայն նրա մի որդին՝ Խսմայիր: Մի շարք ազբյուրներ տեղեկություններ են տալիս, որ Հեյդարի մահից հետո նրա որդի Խսմայիրը նույնպես ընկնում է Թշնամիների ձեռքը, բանդարկվում է, բայց հետո ապատվում է: Մեր՝ հայկական աշխարհուները, ինչպես օրինակ Զաքարիա Սարկավագը մի փոքր այլ կերպէ հաղորդում Խսմայիրի մասին: Նա ասում է, որ Խսմայելի հոր ԵՎ Եղրայրների սպանվելուց հետո, Խսմայիրը փախչում Եվ ապավիճվում է Աղթամար կղզում: Այնտեղ հայերը նրան հովանավորում են, ինամուս են, մինչեւ հարմար առիթ է լինում վերադառնալու իր երկիրը: Զաքարայի հաղորդան տեղեկությունը մեզ հաշանական է թվում, բայց դեռեկո ստուգման Մեծ կարիք ունի:

Փաստն այն է, որ Խսմայեն այդ կորիվների ընթացքում Խսմայիրը փախչում է Գիլանից, սակայն նոյն դարի վերջերին, 1490-ական թվականներին, Խսմայիրը վերադառնում է Գիլան, նրան

հաջողվում է իր շուրջը համախմբել որոշ ցեղախմբերի: Ցեղախմբերը, որոնք շիա դպրանանքին էին պատկանում: Այդ ցեղախմբերից էին՝ ուստայիթներ, շամլու, տեկլու, բհառլու, պյութիդար, կաջար եղ արշար ցեղերը, որոնք ունեիին մի ընդհանուր անուն «Կոլբաշ», կամ «Կարմրագլուխ»: Այդ ցեղերը ապրում էին Գիյածում և Զք-լանի շրջագայքում: Համախմբելով իր շուրջը այդ ցեղերին, հսմայիր սկսում է իր պայքարը Շիրվանի խանի դեմ: Խսմայիրն հաջողվում է նվաճել Բագուն, Շիրվանը եվ Ասրապատականի մի քանի այլ գավառներ: Նա նվաճելով Շիրվանը, պարտության մատնելով իր ախոյան Շիրվանի խանին, իր սուրն ուղղում է Ազ-Կոյունլուների դեմ: 1496 թվին նա ուներ արդեն այդ կոլբաշներից կազմված 16 հազարանոց մի բանակ եվ այդ բանակով հարձակում է Ազ-Կոյունլունու Ռուստեմի վրա: Օգտվելով այն հանգամանքից, որ Ազ-Կոյունլուների մեջ գնում էր ներքին երկսպառակություն եվ որ այդ ներքին երկսպառակությունները վերին աստիճանի թուայրել էին Ազ-Կոյունլուների պետությունը, հսմայիր փասորին սկսում է պայքարել այդ դինաստիան տայալելու եվ պարական մի նոր դինաստիա, մի նոր իշխանություն հաստիացնելու համար: Ճիշտ է թեև սկսել Ազ-Կոյունլուների օգնել էին Նրա նախորդներին, հատկապես Պետր Հասանի ձամանակ, բայց վերջին շրջանում այդ համերաշխությունը երկու տան օրջեց այլիք չկար: Ընդհակառակը հանգամանքները այնպես էին գաւառութել, որ Գիյածում աստիճանաբար հկորանալ սկսած սեփանները հակադրում էին Ազ-Կոյունլուներին եվ կանգնելով Պարսկաստանում ուժեղ պայտեցություն ունեցած շրի հոսանքը գլուխը, ձգում էին վերականգնել պարսիկների վաղուց կորցրած ինքնուրուցնությունը:

Ազ-Կոյունլու Ռուստեմը երկար չի կարողանում գիտադրել

համայնքի հարձակումներին եվ պարտություն է կրում։ Այդպիսով Գր-
լանն ու Շիրվանը դուրս են գալիս Ազ-Կոյունլուների ձեռքից եվ
այնտեղ հաստատվում է համայնքի ինքնուրույն իշխանությունը։

Այնուհետեւ մեկը մյուսի հետեւից սեփեվյան այդ նոր իշ-
խանությունը պարտության է մատնում Ազ-Կոյունլու Ահմեդին։
Մուրադին, եվ Ազ-Կոյունլուների վերջին մնացորդ Ելչենդին։ Այդ
ժողործ կատարվում է 1497-1502 թվերին։ 1502 թվին Շարուրի
ճակատամարտում վերջնականացն ջախճախելով Ելչենդին, համայնքը
փաստորեն նվաճում է։ Ազ-Կոյունլու ընդարձակ տիրությունը։ 1502
թվի այդ հաղթանակով նա վերջնում է նաև Սպահանն ու Թավրիզը
եվ իրեն հայտարարում է շահ, Քիմք դնելով Պարսկական տեղական
մի նոր գինաստիայի՝ Սեֆելյան գինաստիային։ Իսմայիլ այդ հաղթա-
նակից հետո պատմության մեջ հայտնի է որպես շահ Իսմայիլ, որն
իշխել է 1502-1524 թիվը։

Այդ կոյունլուների պետության մեջ մտնում էր ոչ միայն Պարս-
կաստանը, այլ եվ Անդրկովկասն ու Հայաստանը։ 1502 թիվ Հայա-
ստանը ամբողջապես անցնում է նոր Կազմակերպված պարսկական սե-
ֆեվյան գինաստիայի տիրապետության տակ։ Սեֆելյան գինաստիան
պարսկաստանում հաղթանակում է այդպես արագ Կերպով այն բանի
հետեւգանքով, որ այդտեղ՝ Պարսկաստանում այդ գինաստիայի առաջ
գալը գրավում էր որպես Պարսկաստանի վաղուց կորցրած ինքնու-
րությունը։ Վանն այն է, որ գինաստիայի ներ-
կայացուցիչն այսինքն իշխող տունը տեղական Փեղալական ինավերից
էին դուրս եկել եվ աշխատում էին համախմբել իրենց շորջը
պարսկական բնակչությանը ընդդեմ Յանքամատությունների,
ընդդեմ Ազ-Կոյունլուների թուրքմենական ցեղի տրապետությանը։ Այդ
մի հանգամանք, որը նպաստում էր սեֆեվյանների իշխանության ու-
ժեղացմանը, ամրապնդմանն ու ըսդարձակմանը։ Եվ Զ-րդ սեֆեվյան

այդ նոր դինաստիան պարսկական բնակչության մեջ որոշ ազդեցություն ուներ նաև այն առումով, որ նրա Ներկայացուցիչները սեփանուն էին, իրենց համարում էին Մահմադի մոտիկներից սերված գլխավորում էին շիա դավանանքի հետորդներին, որոնք ուժեղ էին Պարսկաստանում եվ կազմում էին պարսկկ բնակչության մեջ մարիսկ շիա դավանանքը Պարսկաստանում Աք-Կոյունլուների իշխանության կողմից հաշածանքի էր Ենթարկվում, որովհետեւ Աք-Կոյունլուները օյնանի դավանանքին էին պատկանում: Այս հանգամանքն էլ շահ Խամադի օգտագործել է բարեհաջող կերպով, հասնելով օտարամուս իշխանությունների դեմ պարսկկ բնակչությանը, որն իր հերթին Խոմայենին ընդունում էր որպես շիա դավանանքի պաշտպանողի եվ պարսկական պետության վերականգնողի:

Անդրկովկասը եվ Պարսկաստանը նվաճելուց հետո, շահ Խամադիը արշավում է նաեւ դեպի Միջագետք, գրավում է Բաղդատոր, Մոսուլը, Դիարբեքիրը, եվ այդպիսով կլորացնում է իր իշխանության Ենթակա տերիտորիան, ստեղծելով պարսկական մի նոր խոշոր պետություն, որի արեվմոյան սահմանը Հայաստանի կողմից հասնում էր Մինչեւ Ծահրատ գետը, եվ սահմանակից է դաշնում այն Ճամանակ՝ Մերձավոր արեվելքում ամենախոշոր, ամենամեծ պետությանը՝ Օսմանական պետությանը, որինց միջեւ 16-րդ դարի սկզբից սկսվում է ուժեղ մրցակցություն Առաջավոր Ասրային արքայի տեղում համար եվ այդ մրցակցության հետ կապված պատմական դեպքերի խոշոր մասը տեղի է ունենում հայկական Բարձրավանդակի վրա՝ Հայաստանում:

Բ. ՊԱՐՍԿԱ-ՕՍՄԱՆԱԿԱՆ ԿՌԻՎՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺՎԱՆՈՒՄԸ ԱՅԴ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Օսմանական սովորականությունը, որն այդ Ճամանակ իրենից նեկայաց-

նում էր աշխարհի խոշորագույն պետություններից Մեկը, շեր կարող հանդուրժել սեֆեվյան Պարսկաստանի առաջինազայումը դեպի Արևմուտք ԵՎ հենց շահ Խոմայիլի գահակալության առաջին տարիներից թշնամական դիրք է բռնում սեֆեվյանների հանդեպ:

Օսմանյան սուլթանությունը, ինչպես արդեն մեզ հայտնի է, հիմնադրվել է 13-րդ դարի վերջերից: Փոքր Ասիրայում նշան Թյուրքական մի ցեղ իր ցեղապետ Օսմանի գլխավորությամբ արշավանք է սկսում բյուզանդական Փոքր Ասիրական տերիտորիայի վրա ԵՎ գրավում մի շարք շրջաններ: Նրա հետնորդները՝ Մուրադ I-ինը, Բայազետը ԵՎ Մյուսները ոչ միայն նվաճում են ամբողջ Փոքր Ասիրան, այլև Բաղկանյան թերակղզին, ու առաջ են շարժվում դեպի կենտրոնական Եվրոպան:

15-րդ դարի վերջերին Արևմուտքում օսմանյինները հանդիպելով համեմատաբար ավելի ուժեղ դիմադրության, քան առաջներում, համարյա թե դադարեցնում են իրենց առաջրադացումը դեպի Արևմուտք ԵՎ այս անգամ իրենց հայաբը ուղղում են դեպի Արեվելք:

1453թվին օսմանյինները նվաճում են Կ. Պոլիսը, վերջնականապես լիկվիդացիայի Ենթարկելով բյուզանդական Կայսրության վերջին մնացուկը: Այդպիսով ամբողջովին իրենց ձեռքը վերցնելով Սեվ ծովյան ազականը, ոչ երկար ժամանակից հետո, օսմանյինները նվրոպայի առաջ փակում են ԵՎ Սեվ ծովյան ազականը, ԵՎ Միջերկրական ծովի ազականը: Հենց ահա այդ հանգամանքն է խոշոր չափով խթանում կատարելու աշխարհագրական մեծ գյուտեր:

Այդպիսի հանգամանքներում երբ 16-րդ դարի սկզբին Անդրկովկասում, Միջագետքի մի մասում ԵՎ Պարսկաստանում

հաստատվում է սեփեվյան նոր դինաստիան, նոր իշխանություն, որն Արեվելքում խոշոր ուժ դառնալու շանսեր էր կույց տալիս, օսմանական սուլթանությունը հենց սկզբից դրսում է այդ պետությանը որպես վտանգավոր արրոջանք Մերձավոր Արեվելքում եղ ձգտում է որ առաջ հարգածել նրան եվ թուլ չ'տալ վարդանալու:

Առաջին արշավանքը Օսմանյիների կողմից պարսիկների վրա կազմակերպում է Սելիմ Անողոքը, կամ Սելիմ Ահեղը, որն իշխել է 1512-1520 թիվը: Սելիմը մի շարք անգամներ նամակներ է գրու շահ համայիլին եվ սպառնագին տոնվ պահանջում է նրանից իրեն վրջել որոշ երկրներ: Շահ համայիլը համարյա թե այդ բոլոր նախակներին էլ պատասխանում է կծու արհամարանքով, բայց մրաժամանակ այդ նախաներում համայիլը հայտնում է, որ ինքը կորվ չի ցանկանու Օսմանյան պետության հետ: Համայիլին հարկավոր էր այդ շըրջանում համեմատաբար տեղական խաղաղություն, որովհետեւ Պարսկական նոր ստեղծված պետության համար հարկավոր էր ամրանալ: Նա նոր պետություն էր, ուներ բազականին թուլ կողմեր եվ նրան հարկավոր էր խաղաղ ժամանակամիջոց կազդորվելու եվ ամրապնդելու իր քիրքերը երկրում: Սահայն հենց Պարսկաստանը այդ թույլությունը ուշում էր օգտագործել Սելիմը եվ ամեն միջոց գործ երդնուն օր առաջ սկսելու պատերազմ պարսիկների հետ եվ շուտով նրա համար ներկայացած պատերազմելու արիթը:

Ինչպես հայտնի է Օսմանյիները պատկանում էին սյունի գավանանքին իսկ պարսիկները շիա գավանանքին: Բայսական երթար ժամանակ սյունի գավանանքին պատկանող մահմեդականները իշխանության գլուրը էին

կանգնել նաեւ Պարսկաստանում։ Եվ ահա այս անգամ բա-
նից դուրս է գալիս, որ Պարսկաստանի իշխանության գը-
լուրի է անցնում ոչ սյունի դավանանքին պատկանող իշ-
խանական տուն։ Սելիմ Ահեղը վիրավորված է համարում
իրեն այդ բանով եվ իր առաջ խնդիր է դնում ոչնչացնել
ոչ սյունի դավանանքին պատկանող նոր դինաստիան
Պարսկաստանում։

Դավանաբանական այդ հակամարտությունն էլ շտապեցնել
է տալիս Սելիմին պատերազմը սկսելու պարսկական նոր
դինաստիայ դեմ։ 1513 թվականին Օսմանական սուլթանու-
թյունը հաշվեհարգար է տեսնում իր պետության մեջ եղած
շիա դավանանքին պատկանողների հետ, որպեսզի պատերազ-
մի դեպքում նրանք չխանգարեն իրեն։ Նա գաղտնի կերպով
հաշվեառման է ենթարկում շիա դավանանքի հետևողներին
իր պետության ներսում եվ նրանցից մոտ 40.000 հոգի
կոտորել է տալիս։ Այս բանը նա կատարում է, որպեսզի
ապահովի իր թիկունքը հնարավոր ապստամբություններից,
երբ նա կամի Պարսկաստանի գեմ պատերազմը։ Այդ դեպ-
քից հետո, նորից նա մի սպառնական նամակ է գրում Բա-
մայիլին։ Իսմայիլը պատասխանում է այդ նամակին իրատ
հեգնանքով, նա հայտնում է Սելիմին, որ Սելիմը այնպի-
սի ոճով, այնպիսի տոնով է խոսում իրեն հավասար մի
իշխողի հետ հատկապես այն բանի հետեվանքով, որ նա
թուլություն ունի դեպի օպիումը, եվ որպես արհամարանքի
նշան մի տուփ օպիում է ուղարկում Սելիմին։ Վերջին
զնոպնելով այդ հեգնանքը սկսում է պատերազմը։

1514 թվին օսմանական վորքերը արշավում են
Պարսկաստանի վրա։ Օսմանցիները սկսվում մտնում

Են Միջագետք, բայց հետո այստեղից բարձրանում են
 Հայաստան եվ Հայաստանի տերիտորիայով են ա-
 ռաջ բազում: Խսմայիլը չի ճակատամարտում, նահան-
 ջում է, բայց այդ նահանջը ամենաճանր հետեւանքն է
 թողնում այստանի բնակչության վրա: Նա ամայա-
 ցնում քար ու քանդ է անում իր արեվմտյան սահմանները,
 այսինքն Հայաստանի մեծագույն մասը: Ավերում է գյու-
 ղերը, ոչնչացնում է բնակչության ունեցվածքը եվ տե-
 ղահան է անում բնակչությանը, որպեսզի դրանով գժվարա-
 ցնի օսմանական զորքերի առաջխաղացումը, իսկ ինքը
 գալիս ամրանում է Ուրմիա լճի արեվելյան մասում եղած
 մի փոքր ամրոցում Գլշանում: Այդտեղ էլ տեղի է ունե-
 նում օսմանական եվ պարսկական զորքերի առաջին ճա-
 կատամարտը: Այդ ճակատամարտին, ինչպես աղբյուրներն են
 նշում, օսմանցիների կողմից մասնակցում էր 120 հազարա-
 նոց մի բանակ, իսկ Պարսկաստանի կողմից 60 հազարա-
 նոց ձիավոր մի բանակ: Այս թշերը չափականցված են,
 հատկապես օսմանական բանակի նկատմամբ: Ձիշտ է, որ
 այս անգամ Սելիմն իր հետ բերել էր բարձական քանակու-
 թյամբ զորք, բայց 120- հազարի հասնել չեր կարող: 120 հազարի
 կարող չը հասնել որիշ հաշվով, այսինքն
 որ այդ զորքի հետ գնում էր նաեւ մեծ թիվ կազմող ամբողը
 թալան անելու համար: Օսմանական բանակը պինդած էր
 թնդանոթներով, մի բան որի պահպանությունը խոշոր չափով
 կդում էր պարսկական բանակը: Օսմանական բանակը կազ-
 մակերպված, կանոնավոր բանակ էր, իսկ պարսկականը
 չեր ներկայացնում կազմակերպված եվ կոնավոր բանակ,
 այլ բարիստած էր զգլբաշիներից՝ իրենց ցեղական միավորներով:

Պարսկական հեծյալ զորքը մի պահ ջարդում է օսմանական բանակի աջ թերը, բայց երբ օսմանական զորքի աջ թերը հետ է նահանջում, օսմանական հրամանատարությունը գործի մեջ է դնում թնդանոթները եվ թնդանոթի կրակի տակ ոչնչացնում է պարսկական հեծյալ զորքը : Մի քանի որ ճակատամարտելուց հետո 1514 թվի օգոստոսի 23-ին պարսկական բանակը չարաշար պարտվում է եվ հետև փախչում:

Սեւիս Ահեղը թեև հաշթում է եվ նվաճում է նույնիս թափրիզը, բայց ստրպված է լինում թողնել գրաված վայրերը, որովհետեւ օսմանական զորքի մեջ խռովություն է ըսկավում եվ զորքը չի ցանկանում առաջ շարժվել : Սեւիս ստրպված է լինում դադարեցնել արշավանքը դեսի Պարսկաստանի խորքերը եվ բանակը հետ տանել դեսի Միջագետք, այն Պարսկաստանից նվաճելու համար :

1515 թվին օսմանական զորքերը պարսիկներից գրավում են Ասորիքը, 1516 թվին Միջագետքի մի մասը, իսկ 1517 թվին նրանք մտնում են Եգիպտոսը : Եգիպտոսում Սեւիսը վերջ է տալիս Եգիպտական վերջին խալիֆին եվ յուրացնում է նաեւ մահմետականության մեջ կրոնական ամենաբարձր պաշտոնը՝ խալիֆի տիտղոսը : Այդպիսով նա դառնում է ոչ միայն Օսմանական պետության սուլթանը, այլև մահմետական աշխարհի կրոնական պետը՝ խալիֆը՝ միավորելով իր մեջ քաղաքական, եվ կրոնական ամենաբարձր պաշտոնները:

Այդ կորիզների ընթացքում Հայաստանից օսմանյիներին է անցնում Բարձր Հայքը, այսինքն Կարսո-Շրջանը, Կարին քաղաքով, Մրօ շրջանը; Երևանկայի շրջանը, Հին Ծոփքը եվ Դիարբեքիրի շրջանը: Այսից խոսքով Հայաստանի արեւմբեյան մի քանի գավառներն ամբողջությամբ անցնում

Օսմանական տիրապետության ձեռքը, իսկ Հայաստանի մնացած մասը դեռեվս շարունակում է մնալ պարսկական տիրապետության ներքո :

1517թվից հետո մի առ Ճամանակ վրնադադար է տեղի ունենում: Այդ վրնադադարը մասամբ բացատրվում է նրանով, որ օսմանցիները վրարշած երև իրենց արեւմոյան սահմաններում: Երա համար եւ ուշադրությունը չեն դարձնում Արեվելքի վրա: Քրանով ի հարկե պարսկական եվ օսմանական պետությունների միջնով եղած մըրզակացությունը Մերձավոր Արեվելքի համար չի վերածում եվ վերսկսվում են այդ կորիները Պարսկաստանի եվ Օսմանական պետության միջեւ 1532թվին: Այս անգամ Օսմանյան կայսրությունը գլխավորում էր Սուլեյման I-ինը, որի իշխել է որպես սուլթան 1520-1556թվում, իսկ Պարսկաստանում այս կորիների Ճամանակ գահ էր բարձրացել շահ Բամայիլի որդի շահ Թահամակը, որն իշխել է 1524-1576թվում:

Սուլեյման I-ինը առիթ բռնելով այն հանգամանքը, որ Բաղեշի փաշան ապստամբել էր Օսմանական պետության գետ եվ քաղաքը ուզում էր հանձնել Պարսկաստանին, 1532թվին արշավում է Պարսկաստանի վրա: Նա նոյնպես մտնում է նաև Միջագետք, ապա բարձրանում է Հայաստան եվ ասպառակում է Հայաստանի մի շարք գավառներ՝ Արլաթի, Արենեշի, Ալճալալի գավառները, ապա Արտմիոյի շրջանը եվ արշավում է Թավրիզի վրա: Նրա բանակի գլխավոր հրամանատարը այդ Ճամանակ իբրահիմ փաշան էր, որը Թավրիզը գրավում է 1534թվին, բայց կրկին Օսմանական զորքերը հետ են քաշվում, եվ չեն հաստատվում ոչ Թավրիզում, ոչ եւ Հայաստանի մի շարք բաղադրներում, որոնք ասպառակության էին

Ենթարկվել : Դրանից հետո մի տասնմայսակ ընդմիջում է տեղի ունենում, բայց վերսկսվում են կորվներն ոոր թափով 1546 թվին հենց Հայաստանի տերիտորիայի վրա : Այդ կորվների ընթացքում փոփոխակի հաջողություններ են ունեցել երկուստեք և պատերազմը ձգձգել են մինչեւ 1555 թիվը, ամբողջ Քսան տարի ասպատակության ենթարկելով եվ ոտնակորս անելով պատերազմի թագերաբեմ հանդիսացած վայրերի բնակչությունը՝ գերազանցապես հայ ժողովրդին : Ընդպորում ասպատակությունների են ենթարկվել Արարատյան դաշտը, Երեսանի նահանգը, Նախիջենվանը, Այունիքը, Ասպորականը, Խնոսը, Բասենը, Կարինը եվ Երվանքն : Ինչպես տեսնում էք համարյա ոչ շատ Հայաստանը այս կորվների ընթացքում ենթարկվում եր անլուր ոտնահարման եվ ավերածությունների : Այդ պատերազմների հետեւանդքները Հայաստանի բնակչության համար վերին աստիճանի ծանր է եղել : Ավերվել է Երկիրը, կրակի են մատնվել գյողերը, ֆիրիկական ոլոչացման են ենթարկվել մեծ թվով մարդիկ եվ տեղահան է արվել բնակչության մի մասը, ինչպես օրինակ, Սուլեյմանը բավական թվով հայերին գաղթեցնում է եվ տանում բնակեցնում Կ. Պոլիսում : Հայաստանի դաշտերի եվ այգիների մի զգալի մասը խոպանացվում է արշավող բանակի ձիերի ոտքերի տակ : Ականատեսներից մեկը՝ Մտեփանոս Մալմաստեյրին հետեւյալ կերպ է նկարագրում այդ դրությունը .

«Ոչ գեղ, ոչ քաղաք թողույին : Զամենայն հրով այրեցին զայգիքն ամեն կտրեցին : Զարտորայսն ամեն այրեցին, զամենայն մդով մաշեցին » :

Դեռք է ասել, որ Տամանակակցի այդ խոսքերի մեջ առանձին շափազանցություն չկա : Իսկապես, որ այդ արշա-

վանքների ժամանակ այրում եվ վոշնչացնում էրն ասեն թշ՝
որպեսզի հակառակորդը դժգարություններ կրի եվ չկարողանա
օգտվել Երկրում եղան պարենային եվ այլ հնարավորություն-
ներից : Այդ բոլորին ավելանում է նաև Մի նոր շարիք՝ Բեր-
ելս ամենավայրագը՝ Մանեահավաքը : Սուլեյման 1-ինը իր սոր-
թը Թարմացնելու համար Կարգադրում քրիստոնյաներից հավա-
քել Մանոկներին, որոնց օսմանցիները խնամում էրն զորա-
նուներում եվ գարձնում Մշտական կինզոր : Այդպիսիներից էրն
Կավճած Ենիշերիների Մեծ մասը :

Այսպիսով Հայաստանի բնակչության համար ստեղծվում է
ամենածանր վիճակ, որի հետեւանքով առաջանում է իոր դժ-
գոհություն ու զայրութ այդ տիրապետությունների դեմ, բայց
կոնկրետ քայլի դիմել, պայքարի ելեկ այդ ուժերի դեմ
Հայաստանը այդ ժամանակ ի վիճակի չեր : Ի վիճակի շեր,
որովհետեւ նախորդ Չրջանում Ֆողովուրդը խոշոր շափով
Ենթարկվել էր դաժան ռեժիսիր : Քրիստոնյան ոչնչացումը
Մոնղոլների եվ նրանց հետնորդների կողմից, բնակչությանը
նվազել էր, շատերը թողել և չվել եին օտար Երկրներ, եվ
տնտեսապես քայլայվել էր : Մակայն հենց այդ մոայլ եվ
դաժան օրերին էլ սկսում է բնակչության Մեծ, առաջին
հերթին վերնախավային մատում, Յագել այդ ճանր ռերիշ-
րանությունից ազատվելու գաղափարը : Բայց այնդաբար
այդ մասին մոածողները այդ գործը Կապում էին դրան,
այն էլ Արեվմուտքի օժանդակության հետ :

Մի հանգամանք, որը տրադիրուն կերպով իր հետ
բնուել էր հայկական հոգեվորականությունը :

Ահա այդ ժամանակ Ստեփանոս Սալմանակյին, որ
Քողիկոսական էր, սկսում փորձում էր Հայաստանի

Արևակը թեթեկացնել Օսմանական պետության հետ բանակցությունների մեջ մտնելով, որի համար նա գնում է Կ. Պոլիս, բայց երբ տեսնում է, որ օսմանցիները մեծ հաջողություն չեն ունենում Պարսկաստանի հետ մղած կռիվներում եվ Հայաստանում օսմանցիները ոչ պահանջերու են կատարում, իրաժարվում է այդ մտքի եվ իր հայացքն ուղղում է դեպի Արեվմուտք : Սալմաստացին շարունակում է իր ճանապարհը գետի եվրոպա հոյս ունենալով, որ պատեղ կլսեն իր թափանքները եվ կը օգնեն Հայաստանին ազատագրվելու Պարսկական եվ Օսմանական տիրապետություններից : Թե ինչ է անում նա եվ ում հետ է բանակցում, այդ մասին շատ կցկութ տեղեկություններ կան : Կա մի տեղեկություն, որ նա ինչ որ գիմում է ուղարկել Հռոմի պապին, բայց նրա այցը եվրոպական երկրներին ոչ մի օգուտ չի բերում հայ ժողովրդին եվ վերջինս շարունակում էր տառապել պարկա-օսմանական արշավանքների ավերիչ հարվածների տակ :

Ստեփանոս Սալմաստացին վերադառնում է Հայաստան 1551 թվին ձեռնունայն եվ ականատես է լինում այն արհավիրքներին, որոնք կատարվում էին Հայաստանում պարսկա-օսմանական կռիվների ժամանակ :

Օսմանցիների եվ Պարսիկների միջնև 1555 թվին կնքրվում է իրազության մի պայմանագրիր : Այդ պայմանագրով օսմանական տիրապետությանն է անցնում Հայաստանի մի շարք շրջաններ եվս : Այս անգամ նախկինում օսմանական տիրապետության անցան շամաններին ավելանում են նաև Վասպորտականը, Ալաշկերտը եվ բասենի հովիտը :

Այդ դաշնագրով վերջանում է պարսկական եվ օսմանական մրցակցության առաջին համարը, որը սկսվել էր 1514 թվից

ԵՎ ՄԵՎԵԼ ԷՐ ՄԻՆԵՎ 1555 ԹՒԾԸ:

ԹԵ ԵՎ 1555 ԹՎԻՆ Այդ ԵՐԿՄ ԽՈՉՈՐ ԿԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՋԵՎ ԿՆՔՎՈՄ Է ԽԱՂԱՂՈՎԹՅԱՆ ԴԱՀՆԱԳԻՐ, ԱՅՆուամենայիր
այդ ԽԱՂԱՂՈՎԹՅՈՒՆՆ ԵՐԿԱՐ ՃԱՄԱՆԱԿ ՀԻ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՄ:

1576 ԹՎԻՆ ՄԵՌՈՒՄ Է ՉԱՀԻ ԹԱհԱՄԱԿԸ, ՈՐԻՆ ԽԱՂՈ-
ՎՈՄ ԵՆ ՄԻ ՔԱՆԻ Այլ ՉԱհԵՐ, ԲԱյԿ Այդ ՉԱհԵՐԻ ՉԱՀԻ ԲԱՐՁՐԱ-
ՆԱԼՐ ՄԵԾ ՄԱՍԱՄԲ ԿԱՄԱՐՎՈՄ Է ԴԱՎԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԽՈ-
ՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՎ ԱՎԱՆՈՎԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՎ: ՄԻ ԿՈՂՄԻՒ Այդ
ՆԵՐՔԻՆ ԽՈՎՈՎԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄԵՐՍ ԿՈՂՄԻՒ ՊԵՎԵԿՆԵՐԻ ԽԱճԱՐԱԿԻ
ԽԱՐՃԱԿՈՄԸ ՊԱՐՏԿԱՍՏԱՆԻ ՎՐԱ ԱՐԵՎԵԼՔԻՒ, ԲԱՎԱԿԱՆԻՐ ԹՈ-
ՒԱԿՈՄ ԷԻՆ ՊԱՐՏԿԱԿԱՆ ԿԵՏՈՒԹՅԱՆ: Ահա այս ԽԱճԳԱՄԱՆՔԸ
ՕԳՄԱԳՈՐԾՎՈՄ Է ՕՄԱՆԿՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՒ ԵՎ ՆՐԱՆՔ ՆՈՐԻԿ՝ 1578
ԹՎԻՆ ՊԱՄԵՐԱԿՄ ԵՆ ԽԱՅՏԱՐԱՐՈՄ ՊԱՐՏԻԿՆԵՐԻՆ: ՕՄԱՆՅԱՆ
ԿԵՏՈՒԹՅՈՒՆԸ այն ՃԱՄԱՆԱԿ ԳԼԽԱՎՈՐՈՄ ԷՐ ՄՈՒՐԱԴ 3-ՐԴԸ, որը
Իշխել է որպես ՍՊԵՅՏԱՆ 1574-1595 թվերին: Մուրադ 3-րդի
ՃԱՄԱՆԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿՐԿԻՆ ՈՈՆԱՏՈՒ Է ԱՐՎՈՄ ՕՄԱՆ-
ԿԱՆ ԿՈՐՔԵՐԻ ԿՈՂՄԻՒ: ՕՄԱՆԱԿԱՆ ԿՈՐՔԸ ՄՈՍՈՒՖԱ ՎԱ-
ՀԱՐԻ, ԿԱՅ ԻՆՉԿԵՑ ԱՍՈՎ ԵՅ՝ ՀԱԼԱ ՎԱՀԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ-
ԹՅԱՄԲ ԱԿՍՈՄ Է ԱՍՊԱՏՈՎԱԿԵԼ ԱՄԲՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԸ: ԲԱՎԱԿԱՆ
ԵՐԿԱՐ Է ՄԵՎՈՄ ՄՐԿԱԿԿՈՎԹՅԱՆ Այդ ՇՐԺԱՆԸ, ՈՐՆ Ի ԽԱՐԿԵ,
ԱԿԱՐՍ ՕՄԱՆԱԿԱՆ ՊԱՄԵՐԱԿՄԻ ԵՐԿՐՈԴ ԲՈՍԱԿԻ Է ԵՎ
ԱԿՍՈՄ Է 1578 թվի ԵՎ ՄԵՎՈՄ Է ՄԻՆԵՎ 1590 թվը:
ԿՐԿԻՆ Այդ ԿՈՐԿՆԵՐԻ ԸՆԹԱԿԳՈՄ ՊԱՄԵՐԱԿՄԻ ԹԱՄԵՐԱԲԵՄԸ
ԳՈՎԱԿՈՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՊԱՄԵՐԱԿՄԻ ԱՄԲՈՂ ԱԿ Խ ԱԿ-
ՐԱՓԸ ԵՎ ԽԱՐՎԱՃՆԵՐԸ Առաջին հերթին ԵՎ ՄԵԾ ՄԱՍԱՄԲ ԿՐԸ
Է ԽԱՅ ԽՈՂՈՎՄՈՐԴԸ:

1587 ԹՎԻՆ ՊԱՐՏԿԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՎԹՅԱՆ ԳԼՇՐԻՆ Է ԱԿ-
ՐԱՓԸ ՉԱՀԻ ԱԲԱՍ 1-ՐՆԸ: ԾԱՀ ԱԲԱՍ ԵՐԲ ԱԿՍՈՄ ԷՐ

ԹՎԻՆ Ա ՀՀ/9

իշխանության գլուխը, Պարսկական պետությունունց գտնվում էր Վերին աստիճանի Յանր կայության մեջ։ Տեղի էին ուժնում Ներքին ապստամբություններ զանազան խաների, Քեռդալների կողմից։ Մյուս կողմից Պարսկաստանը հարձակման էր Ենթարկվում ու վրեկներից եվ երրորդ կողմից կազմակերպվում էին դավադրություններ կառավարող տան ներտում։ Ի վերջո՝ չորրորդ կողմից, օսմանական վորքերը անընդհատ հարձակումներ էին գործում Պարսկաստանի վրա եվ գավառ-գավառի հետեւից նվաճում էին։ Այդ բոլորը ստեղծել էր Յանր կայություն Պարսկաստանի համար եվ Պարսկաստանին մնում էր միայն հաշություն ինդրել օսմանցիներից։

1590թվին շահ-Աբաս I-ինը հատուի պատվիրակություն է ուղարկում Մուրադ 3-րդի մոտ խաղաղություն բնորելու համար։ Օսմանցիները համաձայնվում են եվ կնքվում է խաղաղության մի նոր դաշնագիր, որի համաձայն Պարսկաստանը կորցնում է բավական ընդարձակ երկրամասեր։

Ըստ այդ դաշնագրի, բայց այն դրամական եվ նյութական տուժանքների, որ պետք է հատուցեր Պարսկաստանը, օսմանական պետությանն են անցնում ամբողջ Հայաստանը, Վրաստանը, Ալոռպատականը, Թավրիզ քաղաքով, եվ Միջագետքի մի մասը։ Այդ պայմանագրով էլ փակվում է պարս-օսմանական կռիվների երկրորդ էտապը։

Արեվելքն ուսումնասիրողներից ոմանք գտնում են, որ շահ Աբասի այս վիճումները տակտիկական բնույթ էին կրում, որ շահ Աբասը ցանկանում էր խաղաղ մի շրջան, վերադասավորելու իր ուժերը եվ կազմակերպելու իր բանակը,

վերականգնելու երկոր տնտեսական ընկած վիճակը, որպեսի՛ նոր հարձախման անցեր օսմանական պետության դեմ:

Եվ իսկապես պատմական փաստերը ցուց են տալիս, որ Տահ-Աբասի քաղաքականության այս գնահատականը ճիշտ է դուր եկել:

1590 թվի կնքված դաշնագրի հետո առ ժամանակ Սեֆեզ-յան Պարսկաստանը եվ Օսմանյան պետությունը շագարում են Հայաստանի տերիտորիայի վրա պատերազմելուց: Բայց այդ դադարը բավականին կարծատեվ է լինում: Պարսկաստանը ստիպված էր շատ ծանր պայմաններով հաշուություն խնդրել օսմանյաներից: Բայց այն վիճումները, որ արեւ օսմանյիներին, չեր համարում ընդմիշտ կորուրած մի բան, այլ ընդունում էր որպես ժամանակավոր:

Եվ իսկապես, 1590-ական թվականներին Պարսկաստանում տեղի են ունենում մի շարք փոփոխություններ: Ծահ-Աբաս I-ի հոգևորից մեկն էր բանակի վերակազմակերպումը: Հաւտքի է, որ Սեֆեզյան Պարսկաստանի սկզբնական շրջանի բանակը կազմված էր կռվվաշրներից և այդ բանակը ոչ թե անմիջապես Ենթարկվում էր շահի հրամանատարության, այլ այդ կռչութաշիների ցեղապետների հրամանատարությանը: Մի հաճախանք, որը վերին աստիճանի դժվարեցնում էր օսմանական կազմակերպված բանակի հմտ կռվելը նմ իջեցնում էր պարսկական բանակի մարտունակությունը:

Եվ ահա շահ-Աբասը մոտերվում է ազատվել այդպիսի բանակից: Բանակի վերակազմումն գործում Պարսկաստանին օգնության են հասնում անգլիացի երկու եղբայրներ - Անոնի և Ռոբերտ Շերլիները: Նրանք անգլիական սպաներ երև եկել եին Ասրա մի հիմնական մոադրությամբ՝ անօգրական

առեվտրի համար բակա ստեղծելու նպատակով։ Եվ առա նրանք ժամանում են Պարսկաստան այն ժամանակ, երբ արդեն Հայ Արասր խաղաղություն էր կնքել օսմանցիների հետ։ Այդ անգլիացի երկու եղբայրները իրենց ճառայությունն են առաջարկում Պարսկական արքունիքին եվ դառնում շահ-Արասր խորհրդականները։ Նրանց խորհրդով, Նրանց մասնակցությամբ շահ-Արասր Կալբաջ զորքը համարյա թե կիսով չափ կրծատում է։ Նրանց փոխարեն Մշտական վիճվորական ճառայության է վերցընում 10.000 հեծյալ եվ 12.000 հետեւակ զարձու զորք։ Կան տեղեկություններ, որ այդ զորքի մի զգալի մասը հազմկան էր վրացիներից եվ հայերից, որոնք անցել են Պարսկաստան եվ Մահմեդականացել էին։

Այդ ՀՀ- հազարանոց բանակը կոչվում էր Թվանքչիների բանակ։ Բայի սրանից, օգտվելով այն հանգամանքից, որ այդ եղբայրները եվ նրանց հետ եկած այլ մարդիկ գրտեյին թնդանոթներ ձուլել, ծահ-Արասր կազմակերպում է թնդանոթներ ձուլելու գործը եվ Պարսկական բանակը, որ մինչեվ այդ չուներ թնդանոթներ, այժմ արդեն վիճվում էր թնդանոթներով, որոնց քանակը մոտավորապես 500-ի էր հասնում, իսկ ոտք այդ ժամանակի ասիական մի պետության համար փոքրիկ թիվ չեր։ Այս միջոցառումներով Պարսկաստանում ստեղծվում է կանոնավոր եվ մշտական բանակ։ Ճիշտ է խաղաղ ժամանակ նրա թիվը քիչ էր, բայց պատերազմի ժամանակ այդ թիվը կարող էր կրկնապատկվել նույնիսկ ծովապատկվել։ Բանակում սահմանվում է ուժեղ գիւղիպլիս, կարգապահություն, եվ զորքին սկսում են տալ վիճվորական կրթություն։ Այդպիսով Պարսկաստանում արդեն 17-րդ դարի սկզբին առկա էր մի բանակ, որը իր մարտունակությամբ արդեն հետ շեր մնում ամանական

բանակրի , իսկ օմաւական բանակը այդ ժամանակա կազմակերպարքան եկ ուժեղ բանակներից մեկն էր:

Այսուհետեւ, որպեսսի Ծահ-Աբասը ակատվի Կըպըլըաշիների ցեղախմբերի հետապնդութիւն , « հովանավորութիւն » եւ հրակողոթյունից , նա կազմակերպում է Մի այլ միավորում , որին տալիսէ միրոթյան բնույթ եւ անունը դնում է շահսելվանների ցեղ կամ ցեղային խմբավորում , այսինքն շահին սրբողների մուրյուն : Իւս , ի հարկե , միրոթյուն չեր այժմյան իմաստով , ոչ էլ ցեղախումբ , այլ պարզապես շահին մոտ կանգնած մի խմբավորում , որը գտնուում է հենց իրեն շահի համար վստահելի մի հենարան եւ կարճ ժամանակամիջոցում շահսելվանների այդ միրոթյան մեջ մտնում են բազմաթիվ մարդիկ , որոնց շահը տալիս է որոշ արտոնություններ , որամաշրում է ընդարձակ տարածություններ : Ծահսելվանների ցեղախմբերի կազմակերպութը խոշոր նշանակություն ուներ տվյալ դեպքում Պարսկական արքունիկի համար , նրա իշխանությունն ու ազդեցությունը երկրու ամրապնդելու տեսակետից :

Ի վերջո նա մի ուրիշ բարեփոխություն էլ է մոցնում : Երկրի տնտեսական վիճակը վերին աստիճանի քայլքայլած էր : Այդ քայլքայլածությունը ծանր կերպով անդրադառնութեան էր նաև պետական հնարավորությունների , պետական միջոցների վրա , իսկ Ծահ-Աբասին հարկավոր էր Մեծ քանակի գումարներ : Այդ նպատակի համար , իր գանձարանը ֆինանսապես ապահովելու համար , նա բավականին մեծ շափով զարկ է սկսում տալ ներքին եւ արտաքին առնվտրի . օրինակ մետաքսի առեվտրի նկատմամբ պետական մոնոպոլիա է հայտարարվում : Այխատում է խոշոր շափով մետաքս եւ այլ իրեր երկրորդ արտահանել եւ պետական գանձարանը ապահովել խոշոր եկամուտով :

Նույնիսկ նա տանում է մի այնպիսի քաղաքականություն առել-
տրի վերաբերյալ, որը որոշ շափով հիշեցնում է մերկանտիլիկ-
մի քաղաքականությունը : Նա ներմուծվող ապրանքների վրա դը-
նում է բավական խոշոր մաքսեր : Ի հարկե որոշ երկրներին
նա տալիս է արտոնություններ այդ խնդրում, ինչպես օրինակ
Անգլիային : Այնուհետեւ որպեսզի երկրի միջոցները դուրս չը-
գնան, հաստատում է երկրի ներսում մի շարք ուխտատեղեր:
Ինն այն է, որ Պարսկաստանի մեծ քանակությամբ մար-
դիկ գնում էին Մեֆկա, իսկ դրա համար հսկայական գումար-
ներ էր պետք : Ահա նա երկրի ներսում ստեղծում է բազմա-
թիվ ուխտատեղեր եվ սահմանափակում է երկրի դուրս
ուխտատեղեր այցելելը : Այդպիսով նրա վարած այդ քաղա-
քականությունը զգալի շափով նպաստում է Պարսկաստանի
տնտեսական կյանքի աշխուժացմանը, առելքորի ճավալմանը
եվ խոշոր շափով ապահովում է պետական գանձարանը ֆի-
նանսական միջոցներով : Իսկ այդ ձեռնարկումն արդեն հնա-
րավորություն են տալիս Շահ-Աբասին ավելի մեծ գործողու-
թյուններ սկսելու :

Ծնորհիվ երկրի ներսում ձեռք առած այդ միջո-
ցառումների, Պարսկաստանը 17-րդ դարի սկզբին քաղաքա-
կանապես բավականին ուժեղանում է, պետական օրգանիզմը աժ-
րանում է եվ նախկին ցրվանությունը, կենտրոնախույս տրամա-
դրությունները եվ գործունեյությունը տարբեր խաների մոտ հա-
մեմատաբար նվազում են, իսկ այդ ամրացնում է երկրի քաղաքա-
կան վիճակը : Եվ ահա այդպիսի պայմաններում Պարսկական
արքունիքի առաջ ճառանում է մի հարу : Այն է՝ հետ վերց-
նել օսմանյիներից այն տերիտորիան, որ նրանք ստիպված
եին վիճել օսմանյիներին 1590 թվի դաշնագրությամբ :

Այդպիսի տեսրենց Պարսկաստանում ավելի ուժը կերպով է սկսում արտահայտվել 1602-ից 1603 թիվը : Բան այնէ, որ Պարսկաստանի համար պատճառը հայտարարելու բավականին նպաստավոր պայմաններ կային ոչ միայն իր ներքին հրաշորության եվ ուժեղացման տեսակետից, այլև արտաքին քաղաքական պայմանների տեսակետից :

Եթե Պարսկաստանը 1590 թիվի գաշնագրից հետո այրել էր վերելքի շրջան, քաղաքական, տնտեսական եվ պետական տեսակետից, ապա դրա հակառակ օսմանյան սուլթանությունը այդ տարիներին ոչ թե ապրել էր ամրացման եվ վերելքի շրջան, այլ հակառակ՝ նա թուլանում էր : Թուլանում էր երկու պատճառով :

Նախ եվ առաջ այն պատճառով, որ հենց այդ թվականներին օսմանական լայնաճավալ պետության մեջ, հատկապես նրա փոքր Ասրական մասում, բռնկվել էր ուժը գյուղացիական ապստամբություններ : Փոքր Ասրան օսմանական տիրապետության տակ ընկնելով, սկսվում էր ձեզակերպել որպես մի ֆեոդալական երկիր : Էնգելսը մի հետաքրքիր դիտողություն ունի այդ մասին : Իր նամակներից մեկում էնգելսը խոսելով ասրական արտադրական եղանակի մասին, Ասրայում հողի պետական սեփականության լինելու մասին, ասում է, որ Ասրական պետություններից օսմանյան պետությունն էր, որ 16-17-րդ դարերում գարձավ ֆեոդալական տիրապետություններից մեկը : Այստեղ էր որ հողի ֆեոդալական սեփականությունը արդեն գերակշռող երեւոյթ դարձավ : Եվ հենց այդ ֆեոդալական պրոցեսի ուժեղացումը երկրում, օսմանական սուլթանության մեջ, իր հետ բերում էր գյուղացիության իրավական սորմացում եվ տնտեսական

ծանր շահագործում։ Ահա այդ ճնշումների դեմ էր, որ 16-րդ դարի վերջերին Թյուրքիայում բռնկվում են գյուղացիական ապստամբություններն ու շարժումները։

Գյուղացիական ապստամբություններն օսմանական պետության ներսում սկսվել են 16-րդ դարի 2-րդ կեսից ել լայն ճավալ ընդունեց դարի վերջերին։ Կմենախոչոր ապստամբությունը տեղի է ունեցել 1596 թվին, եվ տեղել է բավական երկար ժամանակ։ Այդ ապստամբությունը ընդհատումներով տեղել է մինչեւ 17-րդ դարի առաջին քառորդի վերջերը։ Այդ գյուղացիական ապստամբությունները բավականին լայն ճավալ էին ստացել եվ ներդրավել էին համարյա ողջ փոք ասիական երկրները, Հայաստանի արծվմոյան մի մասը, հատկապես բարձր Հայկը – Կարնո շրջանը, նույնպես դառել էր ապստամբության կարեվոր վայրերից մեկը։

Ահա այդ գյուղացիական ապստամբությունները խրստ կերպով թուլացնում էին օսմանյան պետության ռազմական ունակությունները եվ հարվածում էին օսմանյան սուլթանթյան հիմքերին։ Այդ ապստամբությունների ճնշումը մեծ միջոցներ եվ երկար ժամանակ էր խլում օսմանյան բռնակալներից։

Բայց գյուղացիական այդ ապստամբություններից, զանազան բարտախնդիր անձնավորություններ, ինչպես օրինակ թեկեր, շեյխեր, աղաներ, նույնպես ապստամբել էին կենտրոնական կառավարության դեմ եվ իրենց ինքնակար էին հայտարարել։ Ստեղծվել էր մի տեսակ երերուն վիճակ օսմանյան պետության համար քաղաքական ներքին դրության տեսակետից։ Եվ այդ երերուն վիճակը բավական երկարաձգվում էր։ Այդ ապստամբությունների մասնակցողներին մեր պատմիշները

անվանել են ջալալիներ, որոնք բազական երկար ժամանակ շանապան գալառներ ասպատակության էին ծննդարկում։ Նրանք նույնիսկ ասպատակության են ենթարկել Երեխակի շրջակայիշը։

Բայց այս ներքին երերուն վիճակից, ներքին քաղաքական աննպաստ վիճակից, օսմանյիները հարված հարվածի հետեւից կրում էին նաև Արեվմուտքում։ Եռանձնապես հայտնի է օսմանական նավատորմիցի ոչնչացումը Եվրոպական ուժերի կողմից, որը ճանր հարված էր օսմանյիներին։

Ահա այդ պայմանները գալիս էին նպաստելու Պարկաստանին, օսմանյիների դեմ պատերազմ հայտարարելու գործում։ Պարսիկները տեսնում էին, որ իրենց դեմ կանգնում է ոչ թե նախկին, քաղաքական ուժի տեսակետից համեմատաբար կայուն պետություն, այլ արդեն երերուն, ինտ գնացող Մի պետություն։ Եվ Շահ-Աբասը 1603 թվին, աշնանը, օսմանական պետությանը հայտարարում է պատերազմ, իսարտելով 1590 թվի գազագարու։

Պատերազմի առիթը սահմանային Մի Միջադեմ էր, երբ օսմանական Մի փոքր ջոկատ մտել էր պարկական սահմանն եվ հարձակվել էր Սալտանու վրա։ Ահա այդ դեպքը բավական էր, որպեսի պարսիկները սկսելին պատերազմ։ Շահ-Աբասի բանակը արշավում է օսմանյիների վրա, սահմանագլուխն ջարդում է օսմանական առանց այն էլ փոքրաթիվ վորքին եվ պաշտում ու վերցում է Թավրիչը, առանց մեծ ջանք գործադրելու։ Այդպիսով Թավրիչը նվաճվում է 1603 թվի հոկտեմբերի 21-ին։ Թավրիչը նվաճելուց հետո

Պարսկական բանակը առաջ է խաղում դեպի Հայաստան։ Մտնում է Ճուղա, որն այդ ժամանակ հոչակավոր էր իր հարստությամբ։ Ճուղայափառերը մեծամեծ նվերներով դիմավորում են Շահ-Աբասին եվ Ճուղայի փողոցներում փոշան գորգերի վրայով Շահ-Աբասին առաջնորդում են դեպի քաղաքագլուխ Խաչիկի բնակարանը։ Այս մտնում է Նախիճեվան եվ կարճ ժամանակ պաշտելուց հետո նվաճում է այն։ Այնտեղից պարսկական զորքերը արջավում են Երեվանի վրա եվ Երեվանը Երևար ժամանակ պաշտեման են Ենթարկում։

Պարսկական բանակը շատ քիչ դիմադրության է հանդիպում եվ մեծ հաջողությամբ առաջ է խաղում։ Դա ունի իր պատճառը։ Նախ եվ առաջ օսմանական զորքը բավականին թուլացել էր այս սահմանամերձ շքանում, թվով էլ քիչ էր, բայց բայց այդ պարսկական բանակի արագ առաջիրազայմանը նպաստում էր տեղական բնակչության վերաբերմունքը, լոյալ, նույնիսկ բարյացակամ վերաբերմունքը։ Բանն այն է, որ օսմանյան կարճատեղ տիրապետությունը Ատրպատականի և Հայաստանի արեվելյան մասերի վրա ստեղծել էր այդ բնակչության համար համեմատաբար ավելի խիստ ոեմին, քան պարսկական տիրապետությունը նախկիններում։

Տեղական բնակչությունը, պարսկական այդ արջավանքներին գրամավորում էր վերին աստիճանի լոյալ կերպով։ Առաքել Դավրիժեցին, որն այդ գարք պատմիչներից մեկն է, բավական մասնամասն կերպով խոսում է բնակչության վերաբերմունքի մասին։ Եթե նա խոսում է եւս կապուհանակ մասին, ողոնք հարացնել

իրն եվ փախել Տաթեվ եվ այստեղից էլ մտադրվում են դրմել պարսկական շահին, ասում է հետեւյալը. —

«Եվ պատճառ գնալոյ սոյս առ շահն այս եր, Կի հավաս եւակ եվ սոոյզ գիտերին, թէ շահն պատրաստվալ է զալ ի աշխարհն հայոց, քանի յառաջ քան զոս Բակումբ ունանք յաշխարհեն Առողջառականի իշխանք եվ կողմնակալք Տահիմեդականք եվ քրիստոնեայք, գնաս յեալ երև առ Թագավորն պարսիկ, վասն կի յոյժ չարաշար Նեղությամբ Նեղերին զնոսա պահն Օսմանցոց Տակը հարկապահանջութեամբ, եվ կեղեքմամբ կրկերն եվ կողոպտերին և հավատոց կողեճություն (իստություն) առներն և այլ բացում առապանձը, չարշարերին, ոչ Միայն զայցն հայոց այլն զայցն վրաց և զՄահմետականաց, և զայտ այնք Նեղության գնացին առ Թագավորն պարսիկ, կի թերեւն նոյն Դյուրություն գոյցն պերծեալք ի Տասայութեան Ծննդանցոյ »:

Այսուհետեւ պատմերը թվարկում է գնացողներին՝

«Դասի խան անոն ուն յակօտն քրօնակ՝ որ եր ՄԵՅ իշխան և կողմնակալ աշխարհին Տարաց ... առաջեակ կի պատմություն յուր ... առ շահն, կի եկեալ քորհեց պինքն ...

Սոյնպես և Մյուս իշխան յակօտն Տարաց պրում ստեղ Ալամաս, ողի Հայթաբեկ, սա ոչ թէ զայցն առաքեաց, այլ ինքն գնաց առ շահն. Նաև Թագավորքն վրաց ուներն կամք, կի պարսիկք ուշքործ զաշխարհն, քանի ոգառվ շահի վշտացեալք երև յ օսմանցոց ոչ Միայն զայտ Նեղութեանցն օսմանցոց, այլ Տաճախանդ կամ ըմբռնմանն ՄԵՅ Արքոն խանին Թագավորք իրանց,

չոր ըմբռնեալ օսմանցիքն տարան ի Սուամբօլ և անդ սպածին, այլև զթոռն սորտ եկա խափով տարան ի Սուամբօլ և զնա եկա սպանին . . . : Նաև որդին Ալեքսանդր թագաորին կարեթու . . . : Նաև Եղբայր Աթաբեկ Իշխանին Սոմբիթու . . . և այլք յոլովք կային յազգեն վրաց առ թագաորն պարսիկ : Իսկ յաշխարհին Աղուանից և յաշտն հայու գնացին Սարուիտան բէկն և իր Եղբայր և այլն ի յՈսկանապատ գեղջէ . Օղլան քեշիշն, և իր Եղբայր Զայրիբէկն ի Հաթերք գեղջէ . Զալալ բէկն իր Եղբայր որդիվոյքն ի խաշենոյ : Մելիք Սուջումօն ի Դրակա . Մելիք փաղիկն ի Քոչիկ՝ գեղջէ . Մելիք Էմբէն ի Բրուժ գեղջէ . Մելիքսեթ Եպիսկոպոսն ի Վերին Զամկայ ի Մելիքչատայ գեղջէ . Մելիք Հայկակն ի Քշոտց Երկրէն՝ ի Խանաձար գեղջէ : Այլև չորս գեղ ի Դրակակայ Երկրէն Միահաղոյն շուեսր և գնացին յերկիրն պարսիկ . . . այլև Երեք մասն ի Տողովրդոյ՝ Թաշտ Կոչեցյալ տեղին՝ որ է ի գավառին Գողթան՝ մերձ յԱզուլին՝ գնացին յերկիրն պարսիկ . . . : Եվ է պատճառ Դրակակեցու և Դաշտնեցու գնալոյն՝ Յանր հարկապահանջությունն, Կեղեքելն և Գողոստելն և Գուտեհութիւնն առնելն, և անրնայ, սպանանելն Կըրիստոնեայս (Առաքել Դամբիւ Տեսք . էջ - 8 - 10).

Առանձին կասկածի Ենթարկել պատմիչի վկայությունը հիմք չունենք : Ըսդհակառակօ, Եթե խոսքը Վերաբերյուն է Յանր հարկապահանջությանը և Տողովրդի Կեղեքմանը . լրացույրը գրաստեր ավելի շատ կարելի է բերել ոչ մրայն դրամական հակապահանջության, այլ և աշխատանքային պարհակի, կոոր և բեզառի մասին : Այս առումով իսկա-

պես այդ ժամանակ Ասորպատականի և Հայաստանի Տօղով վլորդները Յանք հարկապահանջության են Ենթարկվել: Եկ ահա այդ բնակչությունը հույս ուներ, որ Պարսկական տիրապետությունը նրան թեթեվություն կրերեր: Ի հարկե տնտեսական շահագործման տեսակետից որեւէ թեթեվություն պարսկական տիրապետությունը չեր բերի, բայց կամայական ճնշումների և կրօնական հալաձանքների տեսակետից կարող եր որոշ տարբերություններ լինել: Համենայն դեպք բնակչությունը կարծում էր, որ նոր եկող Շահ-Աքասը կարող էր թեթեվացնել իր գրությունը, դրա համար էլ բնակչությունը այդպիսի բարյացակամ վերաբերմունք ուներ դեպք պարսկական առաջիազարդությունը: Եթե աշխատավոր ժողովուրդը, գյուղակրությունը փարուշում էր օսմանցիներից, հոյս ունենալով, որ Մյուս պետության մոտ իր գրությունը կարող էր լավ լինել, ապա տիրող խաչը ուրիշ շարժառիթ ուներ որոշնալու օսմանական պետությունից: Բանն այն է, որ օսմանական պետությունը ավելի կենտրոնաձիգ պետություն էր և ավելի խիստ ռեժիմ էր ստեղծում քրդական այդ սեղակետների համար, թեկերի, հայկական մելիքների և Քեղական այլ տարրների համար: Պարսկական պետությունը կենտրոնացման այն սրստեմը չուներ: Ինչ որ օսմանցիները: Ընդհակառակը, այստեղ սեղակետները ավելի ինքնուրույն են, իսկ այս հանգամանքը նպաստում էր, որպեսզի որ մրայն լոյալ վերաբերմունք ունենան դեպք Պարսկաստանը, այլև իրենք մըջամտեն, որպեսզի պարսկաները զան և այդ վայրերը նվաճեն: Ահա պարսկական առաջ խաղաղը բանակի հաջողությունները մասմբ բակարպում

ԵՅ Զաև բնակչության ցուցաբերած այս վերաբերությունը:

Պարսկական բանակը Մոտ Երև 8-ամրս պաշարում է Երեվանը: Երեվանը դարձել էր օսմանական պետության համար մի կարեվոր զորագայան: Երեվանի փաշան - Թահրաղը որ 1590թվից հաստատվել էր աշխարհ, որոց գործ էր կատարել քաղաքը ամրապնդեցը տեսակնորսը: Նա կառուցել էր Երեվանի բերդը և քաղաքը դարձրել էր դժկարանվան մի ամրոց: Երեվանուուժ Տաքանակին օսմանցիները կուտակել էին բազարան Ռվով կորք և ապահովել այն պարենով, որի շնորհիկ, նրանք ցուց տվեցին դրմադրություն և քաղաքը պարսիկների կողմից նվաճեցուի և Միայն 1604թվի ամառը: Մակայն Մինչև Երեվանի նվաճումը պարսկական բանակը զորավարներ ԱՄԻՐՋԱԿԻՆ բանի և Ալահիվերդի խանի հրամանատարությամբ առաջ-տակում են Հայաստանի զանազան քաղաքները ու գաղտ-ներ, ինչպես Փրինակ Վասպուրականը, Ալաշկերտը, Խոնու, Ծիրակը, Կարսը և այդ շրջաններից բաշմաթիվ մարդկանց տեղահան անում և բերում Արարատյան գաշտը:

Երեվանի նվաճումը հետո Պարսկական բանակը ամենի է ուժեղացնում իր ասպատակությունները դեպի արեկ Մուտք, բայց 1604թվի աշնանը օսմանական պե-տությունը որոշ չափով ճնշելով գլուզակիան ապրու-տամբություններն ու Ջալալիների խոռվաթյունները, պատ-րասությունն է տեսնում հարձակման անցնելու պար-կական բանակի վրա: Այդ ժամանակ օսմանական զահի վրա նստել էր Ահմեդ 1-ինը (1603-1617): Նրա կար-գադրությամբ օսմանական մեծ կեցիր Ջզալ-օզիլ Ար-շան կորքը կենուունացնում է Քոյրումում և կարծ:

Բերելով բանակը, հարձակման է ածցնում:

Ծահ - Աբասը տեղեկանալով սամանական բանակի առաջիաղացման մասին և կասկածելով իր ուժերի վրա, բռնում է նահանջի ճանապարհը, իսկ պարսկական բանակի այդ նահանջին հետեւում էր բնակչության տեղահանումը և նրանց ունեցածքի, գյուղերի և շեների այրություն ու ոչնչացումը: Հենց այդ ժամանակ էլ տեղի է ունենում Արարատյան դաշտի բնակչության մեջ զաղթեցումը: Ծահ - Աբասը կարգադրում է գաղթեցնել Արարատյան դաշտի, Ծիրակի, Նախիջեվանի և Ջուղայի բնակչությանը և այդ բոլորին էլ Քշել Պարսկաստան: Ենդահանվածների մեջ էին ոչ Մրայն նշան վայրերի բնակչությունն, այլ նաև այն բնակչությունը, որոնց պարկական վորքերը իրենց առաջակությունները համարական գաղթեցրել էին Վասպուրականից, Տարոնից, Ալաշկերտից և այլ վայրերից ու բերել երեսանի շրջանը:

Արարատյան դաշտի բնակչության տեղահանումն առաջ պատմում է ժամանակակից պատմության Առաջել Դաշրիւերին: Նա գրում է,

« Իսկ ավերիչն աշխարհայ... թաշաործ Ծահ-Աբաս ոչ անսակ բանից հայու: Այլ կոչեաց վնարարար իր առաջի իր, եւ կարգեաց ի նոյանէ վերականուն եւ վարրիս բնակչաց երկրին, իրաքանչիւթը գալառաց՝ իրաքանչիւթ իշխան իրով զօրով վարող եւ քշող ձողովրդեանն: »

Եւ վԱմիրգունայ խանն՝ յատուկ գաղաքին երեսանայ եւ երկրին Արարատու, եւ նորին մերձակայ մասնաւոր գավառացն: Եւ հրամայեաց նոյա շահն,

ուր եւ կարասցեն ձեռն արկել, արտասահման արարեալ վարեսցեն, եվ ոչ թողոցուն ամենեվին շունչ կենդանի, եթէ քրիստոնեայ եւ թէ մահմեֆական, զհավանեալսն բանիւ եւ ոչ հավանեալսն եւ զստունգանողոսն հրամանաց թագաւորին, սրով՝ եւ մահուամբ՝ եւ գերությամբ:

Եւ զորապետացն՝ յետ ընդունելոյ կայսպիսի զաշարհակորածն եւ զստորիկ հրամանի ի թագավորեն, եւեալ իւրաքանչիւր զօրավար իւրով գնդաւն՝ դրմերն յիւրաքանչիւր հրամատալ զավառն աշխարհին հայոց, եւ իրեվ հողմաբառն հուր ընդ եցեցն ընթացեալ, հայծեակ տագնապաւ զաշվաղակի զամբնայն բնակիչն գավուացն կորպեալք յիւրաքանչիւր բնակութեանց, եւ արտասահման արարեալ յիւրաքանչիւր տեղեաց, իրեվ զջուիրս բազմության հասրի եւ անդեռոց զառաջեաւ արարեալ՝ բռնությամբ զարեալ՝ անեալ բերեալ հասուցին ի զավառն Արարատու, եւ կլայնանիստ դաշտն սորա լին ձագէ ի ձագ. քանչի ի մտորուտ լերնացն գառնուոյ մինչ ի յեկըն երասխայ միջի գետոյն լայնությանն եր բանակին իսկ զերկարութրունն գովիմբ կշռաց դու, բայց ես ասեմ աւուր միոյն ճանապարհ, եւ յայլուր տեսի՝ որ հինգ ճանապարհ երն դրեալ: Եւ է՛ր նոր փոխեալ թուականն հայոց եւ մտեալ ի լո՛դ. յառաջնում ամսյանն հայոց նավասարդի. որ քշեսին զերկիրն: Եւ պարսիկ զօրքն որք գնացին ի քշել զերկիրն, ուստի եւ հանեալ զժողովրդան քշեին, եթէ ի գեղօրէից եւ թէ ի քաղաքաց, զամբնույն շենս, զուուն եւ բնակութրունս հուրբ այրեալ անբնայաբար հրկեց առնեին: Այս զհամբարս խոտու եւ կյարդի ցորենոյ և գարսոյ և կայլ պիտոյից, զամբ-

նայն արեալ վատներին : Այսպէս աւերեալ թափոր արարին զաշխարհն վասն զօրացն օսմանցից չի Մի մնաց է ինչ ռոճիկ նոց , և վատենցեսորին նոքա : Այս Եւեալ ժողովուրդին զայն տեսեալ սրտակուորք լիսին , և Մի գարկցին յետս » :

(Առաջնա Դավրիժեսի , էջ 27-29):

Այդ տեղահանումը այդ սրբ ամենամեծ աղետն է լրում բնակչության համար : Բնակչությունը ոչ մի-
այն զրկվում է իր կայթի , իր կարողությունից , այչ տեղահանման ընթացքում նրան մի զգալի մասը կո-
տորվում է : Մեն զոհեր են լրում գլխավորացեն Արաք-
քետից անցնելու ժամանակ , երբ մի կողմից օսմանա-
կան բանակն էր կրնկակոր հետեւում պարսկական
բանակին և գաղթեցվող բնակչությանը , իսկ մյուս կող-
մից պարսկական բանակը սուրը ձեռքին ստրվում էր
ժողովորդին անցնել գետի մյուս ափը և մահվան սպա-
ռայիքի տակ բնակչությունը լեցվում էր գետու և
զոհ դառնում Արաքսի ալիքներին : Այդ աղետալի գող-
թեցումը կրկնվում է մի քանի անգամ , որովհետեւ
բնակչության մի մասը ճանապարհի կերպ թագուն
կերպով հետ էր փախչում , շատերն էլ հենց տեղում
թագծվում էին լեռներում և շերն գնում : Դրա հա-
մար Շահ-Արար կարգադրում է նրանց և գաղթե-
ցնել : Այդպիսով Շահ-Արար կազմակերպած գաղթը
մի մեծ չարիք էր հայ ժողովորդի համար , որին սով-
ուում էրն թողնել իր հայրենիքը և թափառել օտար
երկուերում :

Բնակչության տեղահանումը կատարել էր

տալիս երկու նպատակով : Նախ նրա համար , որ ամայացներ երկիրը և դրանով գժվարացներ օսմանական բանակի առաջ խաղաղութը , նրա պարենային մատակարարութը և դրանով իսկ թուղացներ և կազմակուծեր այդ բանակը : Բայի այդ նպատակից , Եսի-Արար հետապնդում էր նաև այն , որ Երեվանի , Գյումրիի , Ձուղարք արհեստավորներին և առետրականներին տեղափոխիր Պարսկաստան , այնտեղ արհեստագործությունն ու առևտուրը զարգացնելու համար , իսկ Արարատյան դաշտավայրի գյուղացիներին տեղափոխում էր Պարսկաստան այնտեղ բամբակի մշակությունը զարգացնելու համար : Պարսկաստան տեղափոխված հայերը տեղավորվում են Պարսկաստանի զանազան գավառներում , սակայն նրա մի զգացի Տասը , հատկապես Ձուղարք արհեստավորներն ու առետրականները բնակեցվում են Պարսկաստանի Տայրաֆաղաք Սպահանում , ուր նրանց համար հատկացվում է առանձին շրջան , որն անվանվում է «Նոր Ձուղա» : Նոր Ձուղան 17-րդ դարից սկսած զառնում է հայ առետրական կապրուալի ամենակարենի զաղթավայրերից մեկը , նա Միամամանակ հետագա դարերում կատարում է նաև կուլուրական իրուրության իրուրությունը :

Պարսկական բանակը բնակչության տեղահանումից և այն Պարսկաստան տեղափոխելուց հետո , պատրաստվում է գիմադրելու իրեն հետապնդող օնանական բանակին , որը աննպաստ հանգամանքների և պարսկական զորքի անսպասելի հարձակումներից բարձրական ուժամասն էր եղել արգել : 1605 թվի

աշնանը օսմանական բանակը Ձ ղալ-օղլը Մինա փա-
շայի գիրավորությամբ կարողանում է հասնել Թավ-
րիկի մոտերքը, ուր նրան գիրավորում է պարսկական
բանակը և Սոֆյան անունով Մի գյուղում երկու բա-
նակների միջև տեղի է ունենում Մի ճակատամարտ,
ուր օսմանական բանակը շարադար կերպով պարուղու-
մ է և հետ է շարուղում: Այդ ճակատամարտից հետո
օսմանցիները այլեզս նոր հարձակման շեն դրույտ,
սակայն հաշտություն չի կնքվում և կորիզները շա-
րունակվում են նաև հետագա տարրներին, մինչև
1612 թիվը: Այդ ճամանակ կնքվում է Մի պայմա-
նագիր Պարսկաստանի և օսմանցիների միջև, ըստ
որի վերահաստատվում է 1555 թվի սահմանադրծը
երկու պետությունների միջև և Պարսկաստանը
պարտավորվում է որոշ բանակի մետաքս տարր առ
տարի վճարել օսմանցիներին:

1612 թվի հաշտությունից հետո, որոշ ժամանակ
պիծագաղաք է տեղի ունենում Պարսկաստանի և օսմա-
նցիների միջև - բայց Հայաստանում փաստորեն խա-
ղաղություն չի հաստատվում:

Բանն այն է, որ դեռ ևս հաշտությունից առաջ
Հայաստանում ասպատակություններ են կազմա-
կերպել Ջելալիները և ահա 1612 թիվի հետո էլ
այդ Ջելալների հարձակումները Արարատյան գաշտը
վրա երեվանի և նրա շրջակա գյուղերի վրա հա-
ճախակի են գաղտնում: Այդ ասպատակությունները,
բնակչության գաղթեցումը և պատերազմը Հայաստա-
նի տնտեսական կյանքը էլ ավելի քայլայեցին, իսկ

պահասը լրացրեց սովոր, որ 1606 թվի սկսվեց Երկրում
մնացած բնակչության մեջ և տեղեց 4-5 տարի:

Այդ տարիներին դաշտերը մնում են անմշակ, ավեր-
վում են այգիները, խոպանանում են արտերը, որի
հետեւանքով չքավորությունը բնակչության մեջ ճայր
աստիճան ուժեղանում է: Աղքատությունն ու սովոր
հասնում են այն աստիճանին, որ շատ դեպքերում ջր-
նողները հողոտել ու կերել են իրենց երեխաներին:

1612 թվի հաշտությունից հետո՝ 1613-14 թ.թ. Հա-
յաստանում համեմատաբար հանդարդ վիճակ է ստեղծ-
վում, սակայն հազիվ էր այդ տարիներին մի քիչ կա-
դուրվել Երկիրը, և ժողովուրդը պատերազմներից և
սովոր մի փոքր շունչ քաշել, երբ նորից օսմանյա-
ների և պարսիկների մրջե Հայաստանում վերսկսում
են պատերազմական գործողությունները ավելի մեծ
թափով: Պատերազմի վերսկսման պատճառը այն էր,
որ Շահ-Աբասը շեր կատարում 1612 թվի դաշնագրու-
թյամբ իր վրա վերցրած պարտավորությունները: Այդ
դաշնագրությամբ Շահ-Աբասը պարտավորվել էր տարե-
կան երկու հարյուր ուղտաբեռ մետաքս տաւ օսմանյա-
ներին, բայց շուտով դադարեցրեց մետաքսի վճարումը:
Եվ հենց պայմանագրի այդ կետի խախտման հետեւած-
քով էլ նորից սկսվում է պատերազմը: Պատերազմի
թատերաբեմը գարձայլ ու գարձայլ Հայաստանն էր,
հատկապես Արարատյան դաշտը: Վերսկսված կորիզները
շարունակվում են երկար ժամանակ և տեսվում են մին-
չեւ 1627 թիվը:

1627 թվին կնքվում է խաղաղության նոր պայ-

Բանագիր օսմանցիների և պարսկաստանի միջեւ :
Պայմանագրում համարյա թէ մտնում են նոյն պայ-
մանները , ինչ որ 1612 թվին , միայն այն փոփոխու-
թյամբ , որ 200-ուշտաբեռ մետաքսի փոխարեն ,
Պարսկաստանը պարտավորվում էր տակու 100-ուշ-
տաբեռ մետաքսի : Մակայն այդ խաղաղությունն էլ
տեղական չի լինում , որովհետև 1628 թվին մտ-
նում + Շահ-Աբասը և պատերազմական գործողու-
թյունները նորից վերսկսվում են :

Շահ-Աբասին Պարսկաստանում հաջորդում է
իր թոռ Շահ-Սեֆին (1628-1642) որի ժամանակ
սկսված կորվները օսմանցիների դեմ մի քանի տարի
տեղեւոց հետո դադարեցվում են 1639 թվին :

Այդ նոյն թվին կնքվում է խաղաղության մի
նոր , ըստ հերթականության III դաշնագիրը օսման-
ցիների և սեֆելյան՝ Պարսկաստանի միջեւ : Մի դաշ-
նագիր որից հետո բավականին երկար ժամանակ այդ
երկու պետությունների միջև հաստատվում է խաղա-
ղություն : Այդ դաշնագրով Հայաստանը բաժանվուր-
այդ երկու պետությունների միջև : Համաձայն այդ
դաշնագրության Պարսկաստանի՝ և օսմանյան տուրքա-
նության միջև սահմանը Հայաստանի վրայով անցել է
հետեւյալ գծով . Լոռու Արքաշայ գետով հասել է
մինչև հայկական պարը , այնուհետև այդտեղից դեպ
արեւելք միջև Մասիս , Մասիսից ուղիղ գծով դեպի
հարավ - մինչև Բաղդատ : Բաղդատը անցնում էր օս-
մանցիներին , իսկ երեվանը մնում էր պարսկականներին :

Ահա այդպիսով Հայաստանը բաժանվուր է այդ

եղու պետությունների միջև, ընդ որում Հայաստանի պղալի մասը այս պայմանագրով Պարսկաստանը կիշում է օսմանյան սովորանությանը : Պարսկաստանին անցած մասը հետագայում անվանվում է Պարսկահայաստան, իսկ Թուրքիայինը Թուրքահայաստան :

Պարսկաստանին է մնում Շիրակի մի մասը Գյումրիով, Արարատյան գաշտը, Ապարանի շրջանը մինչև Ղարաբղիիսայի լեռները, Սյունիքը ամբողջությամբ և նոր բայացետի շրջանը, իսկ Հայաստանի մնացած մասերը անցնում են օսմանյիներին : Այդ խաղաղության դաշնագիրը իր ուժը պահում է մինչև 1720-ական թվականները, այսինքն համարյա մի ամբողջ դար :

Գ. ՎԱՐՉԱԿԱՆ ՍԻՆՏԵՄԸ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՄԿ-
ԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՍԵՖԵԿՅԱՆ
ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԵՎ ՕՍՄԱՆԿԱՆ ՍՈՒԼԻՒ-
ՆՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ.

Դեռ ևս Շահ-Աբասի ձամանակ, հենց Շահ-Աբասի նրավանքների սկզբի տարիներին, Անդրկովկասում ձեմակերպում են մի շարք խանություններ : Այնպես, որ 1639 թվի դաշնագրությունից հետո Անդրկովկասում գոյություն ունեին Երեվանի, Նախիջեվանի, Գանձակի, Շաքրի, Շիրվանի խանություններ և այլն :

Բայր այդ խանություններից Անդրկովկասում Պարսկական տիրապետության տակ ընկած էին նաև Վրացական թագավորությունը, Զանգեզուրը և Ղարաբաղի հայկական թելիքությունները, որպես քաղաքական և տարածական առանձին միավորներ : Այդ վարչական միա-

Վորներից Պարսկահայաստանի տերրուրիայի վրա էին
գտնվում Երեվանի, Նախիջեվանի խանությունները ու
Այսիքի հայկական Մելիքությունները : Բայր այս Պարս-
կահայաստանի առանձին շրջանները մտնում էին վշ-
ական թագավորության (ամրող Գուգարքը) և Գանձա-
կի խանության Մեջ :

Երեվանի խանությունը կազմակերպվում է Մոտավորացին 1605 թվին, երբ ամբողջ Արարատյան գաշտը նորից վերանվաճվում է Պարսկաստանի կողմից։ Շահ-Աբաս I-ը կազմակերպելով Երեվանի խանությունը, այդ խանության գլուխն է դնում իր անվանի զորավարներից Մեկին։ Ամրրայունա-խանին։ Երբ Երեվանի խանությունը կազմակերպվում էր, Արարատյան գաշտում տիրում էր Բագականին անմիջաբար վիճակ։ Տեղահան էր արվում բնակչությունը, բնոքան էին դարձել Արարատյան գաշտի այգեներն ու անդաստանը։ Արարատյան գաշտը ենթարկվում էր օսմանական զորքի հաճախակի հարձակմանը և ջալալիների ասպաստակություններին։ Տնտեսական կյանքը վերին աստիճանի ընկած վիճակում էր, բնակչությունն էլ Շահ-Աբասի կազմակերպած գաղթից հետո այնքան էր նորացել, որ կարելի էր Արարատյան գաշտով մի քանի տասնյակ կիլոմետր անցնել և բնակելի վայրի շը հանդիպել։ Ամրրայունա խանը, որպեսզի իրեն հաճանչած խառնությունը այդ վիճակից դուրս բերի, օգտվում է պատրակական գրությունից և Պարսկա-օսմանական այդ ընդհարությունների ժամանակ հարձակվում է Հին Բայակետ, Ալաշկերտի և Թյուրքահայաստանի այլ շրջանների վրա և այդ վայրերից տեղահան է անում բնակչու-

թյանը և բերում ու բնակեցնում Արարատյան դաշտում:

17-րդ դարի պատմագիր Զաքարյա Սարգսվակը հաղորդում է, որ Երեվանից Կաղարջապատ ձգված տարածության վրա ընկած մի շարք գյուղեր բնակեցվել, են այդ վայրերից բերված բնակիչներով. օրինակ Գոյգմբերը, Ճաֆարաբաթը, Արբաթը, Փարաքարը և այլն: Ամրրգյունա - խանի այդ ձեռնարկումն ունեցավ այն արդյունքը, որ այդ ներգաղթումների հետևանքով նորից Արարատյան դաշտը լեցվեց խիստ բնակչությամբ: Այդ դարի մատենագիրները թե Առաքել Դավրիմեցին և թե Զաքարյա Սարգսվակը գովասանքով են խոսում Ամրրգյունա - խանի այդ ձեռնարկման մասին: Այդ գովասանքի մեջ կա տեսդենց Ամրրգյունա - խանին որպես շինարար պատկերացնելու և նրան բարձրացնելու համար: Դեպի Ամրրգյունա - խանը այդպիսի վերաբերմունք է ստեղծվել նաև նրա համար, որ նա հայ հոգեվորականությանը, առևտրական տարրերին հովանավորել է, իսկ նա այդպիսի քաջարականություն էր վարում, որպեսզի նրանց միջոցով հայրին ավելի մոտեցնի պարսիկներին և հեռացնի նրանց օսմանյիներից: Մակայն այդ քաղաքական պատճառներից բայի, Ամրրգյունա - խանի նկատմամբ առաջացած գրական վերաբերմունքը ունի նաև օբեկտիվ պատճառներ:

Բան այն է, որ Ամրրգյունա - խանը ոչ միայն մեծ մասմբ հայերով վերաբնակեցնում էր Արարատյան դաշտը այլև իր խանության Տամանակ նա մի քանի ձեռնարկումներ է կատարում Արարատյան դաշտը քայլավաճ դրությունից գորս բերելու համար: Այդպես օրինակ՝ ճա-

ները, որոնք գիշացն էին կորպսների Տամանակ, այնուհետեւ վերանորոգել է տալիս ջրանցքները, առուները : Այդ ձեռնարկումների նպատակն էր նպաստել Արարատյան ջաղոփր գյուղատնտեսության՝ հատկապես այգեգործության զարգացմանը : Բայց այդ վերաշինելի տակիս մի շարք գյուղեր և ավաններ :

Ձիշտ է սակայն, որ այդ կառուցումների վրա Ամբր-գյունա-խանը գործադրել է մեծ շափով կոռայրին աշխատանք, որն այդ Տամանակ այնքան տարածված է եղել, որ Զաքարյա Սարկավագը պատկիսի մի առաջ առաջմում : Նա ասում է, որ անքան երկար Տամանակով էին մարդիկ կոռի գնում, որ առաջ էր դաշտը, թե հորը նախքան իր որդու ճնունդը տանում էին կոռ և թուլ շեին տալիս վերադառնալու Մինչև այդ նորա Ֆին որդին կը մեծանար և ինքը կը գնար կոռ, որ հորն ապատեհն կոռից : Բայց մատենագիրը, նշելով կոռայրին աշխատանքի Տանը լինելը, ավելացնում է : Որ Ամիրգյունա-խանը « ի տեղիս թեթեվացոյ զհարկն, և եքարձ զ Ցանք լուն ի պարանոց է՝ ուսմկայ » (Ա. Թաս էջ 46) : Ի հարկե ուսմիկների վսից ֆեղալական Տանը լուծը զի վերանում, երեկ պատմիքը զանց է առնում այն, որ կոռայրին աշխատանքը ոչ պահան Տանը լուծ էր, սակայն այդ աշխատանքը կատարվում էր ջրանցքների, բերդերի, առուների և հասարական այլ ձեռնարկումների կատարան Տամանակ :

Ամիրգյունա-խանի հիշյալ ձեռնարկումները նպաստում են երեվանի խանության տնտեսական

Կյանքի վերականգմանը . նոյն երեվոյթն ենք տեսնում նաև Նախիջեվանի խանությունում :

Այժմ անցնենք խանությունների վարչական կառուցվածքի մասին :

Անդրկովկասյան խանություններում խանը հանդես էր գալիս , որպես լիակատար իշխող և բարձրագույն մարմին : Խանությունները փասողութեան գուգրիկ իշխանություններ էին , ուր խանը Միահեծան տեր և տնօրին էր խանության ներքին կյանքի բոլոր ասպարիկներում : Խանը նշանակվում էր շահի կողմից , բայց կային խանություններ , որտեղ այդ նշանակումը ձեվական բընույթ էր կրում , և խանի պաշտոնը ստանձնելը ժառանգական իրավունք էր դառել : Այդպիսի խանություններ էին Անդրկովկասում Գանձակի , Ծաքիրի , Շիրվանի խանությունները : Այդ խանություններում խանի պաշտոնը ժառանգաբար անցնում էր որդու որդի : Շահը Միայն հաստատում էր այդ անցումը : Այսինքն ամեն անգամ երբ որ խանի մահից հետո նրա որդին էր բարձրանում խանության գլուխը , շահը նրան տալիս էր գրություն , այդ պաշտոնի մեջ հաստատելու մասին : Սակայն Անդրկովկասյան խանությունների մեջ երկուսը - Երեվանի և Նախիջեվանի խաները այդ ձեվով շենք հաստատվում իրենց պաշտոնում : Այստեղ խաները նշանակվում էին շահի կողմից և նրանց պաշտոնը ժառանգական իրավունքը շեր վերաբեր ամեն անգամ շահը փորելով Երեվանի և Նախիջեվանի խաներին ուղարկում էր ըուսուսին նոր հան : Ձիստ և երեսակն

խանության մեջ 1-ին խանից հետո խան է ծառուս
Ամբրոյունա - խանի որդին, բայց դա մի բացառիկ
երեվույթ էր, որից հետո այլևս չի կրկնվում:

Խանությունները բաժանվում եին մահաւների,
որոնց թիգը տարբեր խանություններում տարբեր քա-
նակի է եղել:

Երեվանի խանությունը բաժանված էր 13 մա-
հաւների և ընդգրկում էին բազականին ընդարձակ
տարածություն: Երեվանի խանության մեջ մասնում
էին Արարատյան դաշտը ամբողջությամբ, Շիրակ՝
Մի մասով, Ապարանի շրջանը ամբողջությամբ, Ծաղ-
կաձորի, Աշուարակի, Թալինի շրջանները, Սելյան
և հարավային ափերին ընկած շրջանները, որից
խոսքով այժմյան հայապետի մի մասը, ապա Կոտայ-
քի և Վեդիի շրջանները:

Մահալաններում խանի կողմից նշանակվում էին
կառավարիչներ, որոնք տարբեր խանություններում
կողվում էին զանազան անուններով, ինչպես օրինակ
բեկ, մելիք, նայիք, միրբողուկ: Երեվանի խանությու-
նում մահալի կառավարիչները կոչվում էին Միրբո-
լուկներ: Մահալի կառավարիչի պաշտոնը երբեմն դառ-
նում էր Տականքական, բայց դա տարածված երե-
պոյթ չեր, մեծ մասամբ նրանք փոփոխվում էին,
նայած խանի ցանկության ու իսլամի:

Մերբոլուկների պարտականությունն էր, խանից
մահալի հարկերի շաբթ ստանալու հետո բարչել հար-
կերն ու տուրքերը մահալի գյուղերի միջև: Հետե-
ամանական մուտքեր դրանքական

հարկերը, վենել Մահալի բնակիչների մեջ առաջացած
փոքր վեճերը, քննել Մահալի Մանր պաշտոնյաների Մա-
սին եղած բողոքները, այնոհետև ի կատար ածել խանի
իրահանգներն ու վճրուները, ինչպես նաև դատարանի վը-
ճրուները։ Մահալի Կառավարիչը իրավասու էր պատժել
մի շարք հանցագործությունների մեջ բռնված մարդկանց։
Բայց այդ պարտականություններից գործների ընթացքում
միրբուուկները պարտավոր էին իրենց մահալներից որոշ
թվով կինված ուժ հավաքել և նրա գլուխն անցած գալ
խանի տրամադրության տակ։

Մահալներում բայր այդ միրբոլուկներից կայրն նաև
հետեւյալ վարչական պաշտոնները : Խանը բայր ընդհանուր
մահալի միրբոլուկից յուրաքանչյուր գյուղում նշանակութ
էր գյուղապետ, որը կոչվում էր յուկբաշի, քծոխորա
կամ մելիք : Գյուղապետները գյուղերում հանդիս եին
գալիս, որպես խանի ներկայացուցիչները : Այս գյուղա-
պետները իրենց տրամադրության տակ ունեին յասա-
ռուներ : Այն գյուղերը, որոնք պատկանում եին այս գամ
այն բեկին, խանքին, մելիքին և այլն, չեին ունենում
իրենց առանձին գյուղապետոր : Այդտեղ գյուղապետի
պարտագանձունները գրվում եին գյուղի տիրոջ վրա:
Բայր մահալներում եղած պաշտոնյաներից, խանը իր
տրամադրության տակ ուներ նաև այլ պաշտոնյաներ,
թնջան օրինակ հարկանավաքներ, վեսիր-նապիրներ
(խորհրդականներ) անքարդարներ, քաղաքագլուխներ կամ
ոստիկանապետներ և շառուներ :

Խաչը ուներ շուրջ իր պարզաբն ուժը, որը բաղկաց-
ած է բարձրացնելու առաջնահատություններից:

ասվում էր Տաղաթներից, այսինքն պատական տուրքերից ազատ Մարդկանցից։ Նրանք բնակում երեւ մեծ մասամբ գյուղում, հաճախ հանդրսանում երեւ ովյալ գյուղի հալչաճատերը, իսկ այդ կալվածքը ստացել երեւ իրենց Տառայոթյան համար և իրենց շենքով ու ձիով հարեւ եղան Ժամանակ գալիս երեւ իրան տրամադրության տակ։

Խանության վարչական սրբութիւն մեջ էր Բանուս նաև դատական գործը։ Որպես Ընդհանուր սովորություն, որպես Ընդհանուր օրենք, խանության դատական գործը գտնվում էր մահմեդական հոգեվորականության ձեռքին, բայց առանձին շեցքերում կատարվում էր բացառություն, օրինակ Երեվանի խանության մեջ հայերի Միջն Ֆագան Երեվանի խանության մեջ հայերի Միջն Բանուս հանձնվում վեճերը, որոնք Տանը բնույթ երեւ կրում հանձնվում էին Հայրանին լուծելու։ Սակայն վերջին հաշվով էին հՀայրանին լուծելու։ Սակայն վերջին հաշվով խանության մեջ բարձրագույն դատավորը դարձյալ հանդես էր գալիս ինքը՝ իրան։

Դատական նշառակություն ունեղող հանչափները միշտ կողմից։ Դատական միշտ դատվում էրեւ իրան, կողմից։ Դատական մեջ շեկավարվում էրեւ զուրանի ընվարության մեջ շեկավարվում էրեւ զուրանի ընկարությունը և բնակչության մեջ եղան սովորություններով։ Դատարանի հաճան պատրիժների մեջ թիւ տեղ շնորհելու ֆիզիկական տանջանքները և մարմնական այլանոցական հԱթարթելը։ Ինչպես օրինակ, քիթ, ականջ, ձեռք կորելը, անգամահատելը։ Եատ էր ուրանվան նաև արյան սեղմանություն սովորություն, գատարանը, այլ կերպ

ասած շակին, ընդունելով սփյորովթը, հանձնում էր դատապարտյալին տուժածի ազգականներին և յօնով էր տախի վարչել նրա հետ ինչպես կը ցանկանային:

Ահա վարչական այն սիստեմը, որ գոյություն ուներ իսանություններում: Որոշ առանձնահատկություններ, յուրահատկություններ տարբեր իսանություններում եղել են, սակայն իսկան տարբերությունն չի եղել նրանց միջև: Խանություններում եղած բոլոր պաշտոնիաները, պատկանելին են եղել տիրող դասակարգին, այսինքն եղել են իրենց ժամանակի խաներ, բեկեր, մելիքներ, նրանց մի մասը միաժամանակ ստացել են հատուկ վարձատրություն իրենց պաշտոնը վարելու համար, բայց տարբեր վայրերում այդ վարձատրությունը տարբեր է եղել: Օրինակ, մի շարք իսանություններում այդ վարձատրությունը տեղի է ունեցել ոչ թե գրամով, այլ գրա փորմարեն տվյալ պաշտոնիային տվել են Մի ամբողջ գյուղ, կամ նույնիսկ մի քանի գյուղեր: Այդ գյուղներից տվյալ պաշտոնյան իրավունք է ունեցել համարելու տուրք, որը կոչվում է «Ծյուլֆ»: Սակայն բոլոր իսանություններում չեն, որ պաշտոնյաներին վարձատրել են մյուլֆով, առանձին իսանություններում նրանք ստացել են ռոնիք: Այդպիսի խանություններ են եղել Երեզանք և Նարիջականք իսանությունները:

Բայց հիշված իսանություններից, Անդրկովկաստմ պարսկական տիրապետության ենթակա էին նույն

ությունները : Մենք Արամտանի Տասին առանձնա-
պես կանգ շենք առնի , բայց առանձին հետաքր-
քրություն են ներկայացնում Այունիքի մելիքու-
թյունները : Այդ մելիքությունները տեղավորված են
Նախկին պատմական Այունիքի հյուսիս արեվելյան
մասում , կամ այժմյան Ղարաբաղում : Ի հարկէ
նրանք մրայն Ղարաբաղում չեին տարածված , այլ կային
նաև Զանգեզուրի շրջանում : Իրենց սովորություննե-
րով , իրենց ներքին վարչական ձեւերով այս մելի-
քությունները տարբերվում են իանություններից :
Այդ մելիքությունները նախ և առաջ հայկական իշ-
խանություններ են , որոնք չեին մտնում իանություն-
ների մեջ , պաշտպանում են իրենց ներքին ինքնու-
րույնությունը և անսիրացիոն ենթարկվում են շահին :
Նրանք իրենցից ներկայացնում են Այունյաց Նախկին
հայ ֆեոդալական տների մնացորդներ՝ և որպես այդպի-
սիներ իրենց կալվածներում կամ մելիքություններում
իշխում են ժառանգաբար և հանդիսանում են մե-
լիքությունների լրակատար տերն ու տնօրիններ : Մե-
լիքները նույնական զյուղերում նշանակում են իրենց
ներկայացնությունը , գյուղապետները ; Բայց պաշտօնեյու-
թյան այն շանչը , ինչ որ մենք տեսանք իանություն-
ներում , այս մելիքություններում մենք չենք տեսնում :
Նախ այն իմաստով , որ մելիքությունները աշեմ փոքր
տարածություն ունեն և ինքը մելիքը ամբողջապես
տնօրինում էր ամբողջ գործը . իրեն ենթարկելով այդ
փոքր շրջանը և վեցական այդ գյուղերը համարե-
լով մելիքի սեպականությունը , ենթարկվում են

հենց իրեն մելիքին և հարկը անմիջապես վճարում էին
մելիքին :

Պարսկաստանի վարչածեվի հետ ճանոթանալուց
հետո, մեզ անհրաժեշտ է ճանոթանալ նաև հողային
այն հարաբերություններին, որոնք առաջանում են
Պարսկահայաստանում:

14-16-րդ դարերի խոշոր քաղաքական իրար-
անցումները Հայաստանում իրենց կնիքն են թողել
Հայաստանի ներքին կյանքի, ինչպես և սուրբալական
հարաբերությունների վրա: Արագ փոփոխվող տիրա-
պետությունները, նորանոր իշխանությունների հաս-
տառումը այդ դարերում Հայաստանում իրենց ազ-
գեցությունն են թողել Հայաստանի հողային հարա-
բերությունների վրա:

Մոնղոլական պետության անկումից հետո Հա-
յաստանում հաստատվում են, ինչպես տեսանք, թուրք-
մենական մի շարք ցեղերի իշխանություններ: Անու-
հետեւ 16-րդ դարում Հայաստանը նվաճում է սեֆ-
ևյան Պարսկաստանը և օսմանական իշխանությունը:
Տիրապետող այդ ցեղերն և պետությունները մահմե-
դական աշխարհին էին պատկանում: Իսկ այդ եր-
կրներում հողը ընդհանուր առմամբ համարվում էր
պետական սեփականություն: Բայց այդ ընդհանուր
սկզբունքը կյանքում, հատկապես 17-18-րդ դա-
րերում, բայմասրին կերպարանափոխությունների էր
ենթարկվում: Բայր այդ Հայաստանում, որտեղ այդ
պետությունները հաստառում են իրենց գերիշխա-
նությունը, դեռևս շատ հիշ շրջանից գոյություն

Անն ին հողատիրության որոշ ձեզեր , որոնք թեև պատմական այդ
նրկարաւոնվ ժամանակաշրջանում ենրարկվել թիւ փոփոխո-
թյան , կրել թիւ բազմապիսի ազդեցություններ , բայց
այնուամենայնիվ , հողատիրության որոշ հին ձեզերը դեռ-
եկս իրենց գոյությունը պահպանում էին : Այդպիսի
պարագաներում պարսկահայաստանում 17-18-րդ դարե-
րում նշանակ հողային տիրապետության ձեզերը ունեցել
են բազմապիսի բնույթ եւ նրանց ուսումնասիրությունն
ու մեկնաբանումը հանդիպում է որոշ բարդությունների:
Եթէ մենք խմբավորենք հողատիրության ձեզերը , ապա
այն ժամանակ դուրս է գալիս , որ պարսկահայաստա-
նում գոյություն են ունեցել պետական սեփականու-
թյուն կազմող հողեր , այսինքն երբ այդ հողերից գոյու-
թյուն օգտվելու դեպքում պետությունը վճարում էր
զայրին օգտվելու դեպքում պետությունը վճարում էր
եւ պետքական հարկը եւ ռենտան , այնուհետեւ վ
մյուլքադարական հողատիրություն . երբ այդ հողերի
կանոնությունը ի՞ո մասն ունըր կալվածատները եւ գյո-
ղական պետական հարկը վճարելուց հետո վճարում
զայրին պետական հարկը վճարելուց հետո վճարում
էր նաև կալվածատիրոջ հատուկ տուրք , ռենտա ,
որը դարսկահայաստանում կոչվում էր "Ծյուլք":
Երբ երրորդ գոյություն ուներ հողի անհատական
սեփականություն : Այսինքն , որ այդ հողը Ծյուլքադարա
կան չէր : Այդ հողի վրա կարգադրություն կարող էր
անուն էր Միայն հողատերը : Այդպիսի հո-
ղեր էին Գլխավորապես այգիները եւ տնատեղերը ,
բայց կան բազմաթիւ փաստներ , որոնք ապաստում
են , որ բայց այգիներից եւ տնատեղերից , առանձին

տնտեսությունների և մարդկանց սեփականությունն ՅՅ
կազմել նաև վարելահողերը : Վարելահողերի սեփակա-
նություն կազմելու փաստերը պայտուն կերպով գրտելոր
վում են վանքերում : Հայկական վանքերը բայր
մյուլքադարական գյուղերից ունեցել են բավականին ըն-
դարձակ հողային տարածություններ, որոնք հացածէլ են
այդ վանքերի անօրինական տնտեսությունը և նրանց սե-
փականությունը :

Օրինակ՝ հջորիածնի վանքը Փարավարի և հջորիածնի
միջև ընկան ամբողջ տարածությունը սեփականացրել
էր և օգտագործում էր որպես վարելահող : Այնուհետև,
գեղարդի վանքը Զանգիբասարի շրջանում ուներ բազմաթիվ
հողային տարածություններ եվ այլն: Պետք է ասել, որ այդ-
պիսի հողեր միայն վանքերը չունեին, այդպիսի հողեր ունե-
ին նաև բնեկերը, Տելրբները եվ խաները:

Պարսկահայաստանում՝ առաջանում է հողատերերի մի
ամբողջ խավ, հանձինս խաների, բեգերի, Տելրբների, խոջա-
ների եվ վանքերի, որոնք ոչ միայն ունեին մյուլքադարա-
կան գյուղեր, այլ եվ սեփական, անձնական հողամասեր:

Պարսկահայաստանում մյուլքադարական գյուղերն ու սե-
փական հողամասներ ունենալը տարածված երեւոյթ էր
գերազանցապես նրեվանի եվ նախիջեվանի խանություններում:

Պարսկահայաստանի մյուս մասերում՝ Գոգարքում եվ
Սյունիքում հողատիրության ձեզերը մի փոքր տարբեր-
վում էին առաջիններից: Գոգարքում ավելի շատ տա-
րածված էր վրաստանում եղած հողատիրության ձեզը,
այսինքն հողը պատկանում էր քեռաշին եվ այդ հոդի

Վրա բնակեցված գյուղակին հանդիսանում էր նրան
ճորտը: Սյունիքում նույնպես հողը հանդիսանում էր
Տեղիքի ջեղալական սեփականություն եւ գյուղակին
նույնպես անձնական կարվածություն ուներ Տեղիքի:

Այս ինչ երեվանի ու Նախիջեվանի խանություննե-
րում հողատիրությունն ամենատարածված ձեզի մյուլ-
քաշարության պայմաններում ոչ հողն է հանդիսանում
Տյուլքադարի անձնական սեփականություն եւ ոչ էլ
գյուղակին է անձնապես կարված Տյուլքադարի:

Հետաքրքիր է Տի երեվույր, ու խոզաների - հարուստ
առեվտրականների Տյուլքատու գյուղեր ձեռք բերե-
լու եվ հողային Ընդարձակ տարածություններ ունենա-
լու երեվույրն է Պարսկահայաստանում՝ առանձնապես
Երեվանի խանությունում: Օքնակ՝ Երեվանի խոզաների Տե-
ղական կը ունեցել է Մի շարք Տյուլքատու գյուղեր, որոնց բնույթը
է Եղվարդը, Աղբագավիրը, Նորքը: Կարգում խոշոր
առեվտրականներից Տեհը 17-րդ դարում տեր էր շար-
ժել Ընդարձակ աշքրծերի, վարելահողերի եվ բազմաքա-
նակ անասունների հոտերի:

Խոշոր կալվածատեր էրն նաև Տահմեղական եւ
հայկական հոգեվորականները: Այս շրջանում խոշոր Խո-
հայկական վանքերից աշքի էրն Ընկնում Քջմիաքանը, Օհա-
շատեր վանքերից աշքի էրն Ընկնում Քջմիաքանը, Օհնիք, Տարեվը,
Նավանքը /Աշտարակում/, Գեղարդի վանքը, Բզնիք, Տարեվը,
Սանահնի, Հաղբատի եւ այլ. վանքերը: Բոլոր տեղերում,
որտեղ եղել են վանքեր, նրանք ունեցել են իրենց կալվածք-
ները, գոտը կամ Տեհ շաքով: Վանքապատկան հողերի
տարածությունը խոշորանում է առանձնապես 17-րդ դարի

Կենտրոն սկսած : Կտնք սակայն, որ վանքերը Հայաստանում դեռևս շատ վաշ ժամանակաշրջանից ինչպես մեզ արդեն հայտնի է, հանդես էին գալիս որպես խոշորագույն կալվա- ճատերեր : Բայց 15-16-րդ դարերում բաղաբական անու- դարձների հետեւանքով Կորությ էին իրենց կալվածքների մի գգալի մասը : Իսկ 17-րդ դարի առաջին կեսից, երբ Քաղաքական անսուժարձը այլեւս այնպիսի հախուսն կեր- պով տեղի չդիմումում, եւ սկսեցնալում է համեմա- բար խաշաշ մի շրջան, վանքերը նորից ընդարձակում են իրենց կալվածքները : Օրինակ՝ Էջմիածինը, 17-րդ դա- րում արդեն ուներ շաւոջ 17-ի համար Մյուլքատու գյու- ղեր, որոնց թվումն էին՝ Երեւանի խանության ամենախո- շոր գյուղերը – Վաղարշապատը, Օշականը, Մաստարան, Կշտարակը եւ այլն : Բայց Մյուլքադարական գյուղերից Էջմիածինն ունեցել է որպես սեփականություն նաև բա- վականին ընդարձակ տարածության այդիներ եւ վարելա- հուղեր : Էջմիածինը այգիները գտնվում էին Վաղարշա- պատում, Օշականում, Կշտարակում, Փարաքարում, Երե- վանում եւ այլ վայրերում : Մոտավոր հաշվով Էջմիածինը 17-րդ դարի վերջերին ունեցել է շուրջ 250 հեկտար խաղողի այգի, իսկ 18-րդ դարի վերջերին խաղողի այ- գիների տարածությունը, եթե շատնք եռապատկվել է, ապա կրկնապատկվել է : 18-րդ դարի կնաքրին նշել են մի քանի 10-ամյակներ, երբ Էջմիածինը Մյուլքատու գյուղերի րիվը հասել է 20-23-ի : Այդպիսի ընդարձակ կալվածքներ եւ Մյուլքատու գյուղեր ունեին նաև Տահմանդարը՝ հոգեվորականները : “Մյուլքը” որպես

տուրք, որպես հողատիրության մի ձեվ Հայաստանում տարած-
չած երեվոյթ և զարնը Թուրքմենական ցեղերի տիրապետու-
թյան ժամանակից մողովորդի մեջ «Այուլք» տերմինը ու-
նի Մի քանի հասկացողություն: «Այուլք», բառայի նշանա-
կում է ունեցվածք, կալվածք: Բայց մյուլքը հողատիրու-
թյան ձեվի հետ նշանակում է բերքի այն մասը, որը վճար-
վում է անմիջական արտադրությունը:

Աղյուր այն գյուղերը, որոնք կալվածատիրոջ վճարում
են մյուլք, այսինքն իրենց տարեկան բերքի որոշ մասը, ան-
կանգել ոն մյուլքատու, կամ մյուլքադարական գյուղեր:

Մյուլքի շափու, այսինքն կալվածատիրոջ վճարող բեր-
քի մասը, տարրեր ժամանակներում տարրեր է ողել:
17-18-րդ դարերում նա կազմել է բերքի մի տասերորդը:

Ինչ իրավունք ուներն կալվածատերերը մյուլքադարական
հողերի վրա: Մի հարց, որը վերին աստիճանի հետաքրքիր է
այդ հողային հարաբերությունները պարզեցնելու տեսակետից
եվ որը դեռ մինչեվ հիմա էլ լրիվ կերպով պարզված չէ:

Հարցը այն է, որ մյուլքադարական գյուղի կալվածքը գյուղ-
ուն կալվածատիրոջ հսկողության տակ, այդ փաստ է, բայց
որ մյուլքատիրոջ իրավունքները սահմանափակվում են մի-
այն մյուլքի ստանալով, այդ նույնպես փաստ է: Ինչ նշանա-
կում այդ: Այդ նշանակում է, որ մյուլքատերը մյուլքադար-
կան հողերը գյուղապետի վերաբերությունները չուներ:

Մյուլքատերն իրավաու չեր հանձն գյուղապետին այդ
հողի վրային եվ Մի ուրիշին տալ, մյուլքատերն իրավաու
չեր այդ հոցը Մի ուրիշին վաճառելու: Եվ ի վերջու մյու-
լքադարական հողի վրա աշխատող գյուղապետ անձնական

ննրակա շեր կալվածատիրոջ: Ի հարկե գյուղապէ անձնական ազատությունը բացարձակ իմաստով շպետք է ընդունել: Կան այնպիսի փաստեր, որ խոսում են մյուլքատիրոջ որոշ իրավունքների մասին մյուլքատու գյուղապէ նկատմամբ, ինչպես օրինակ հջորհածնի եվ Սուզնու գյուղապիների դեպքը: Այդ գյուղից երկու ընտանիք, 18-րդ դարի վերջներին թողնում են գյուղը եվ փախչումգընում են Զարաքլիսա, ներկա կիրովականը: հջորհածին իմանալով այդ մասին հատուկ գրություն է գրում Զարաքլիսայի խանին, այսինքն կալվածատեր կառավարիչին եվ պահանջում է հետ վերադարձնել այդ գյուղապիներին, պարհառաբանելով, որ նրանք գաղտնի են փախչի: Միաժամանակ սպառնում է Զարաքիլիսայի այդ կառավարիչին, որ երե նա հետ չուղարկի, ապա Հերակլի միջոցով բռնույամբ կսովորի նրան հետ ուղարկելու նրանց: Ինչպես տեսնում ենք այս փաստը ստիպել է տալրի մեկ մուածելու, որ գյուղապէ անձնական ազատությունը բացարձակ իմաստով չէ, որ այծուամենայնիվ, մյուլքատիրոջ հագողությունը եղել է գյուղապէ նկատմամբ եվ մյուլքատեր շահագրգուված է եղել, որ իր մյուլքատու հողի վրայից շինուան գյուղապիները եվ այդ նա անում եր որոշ բռնություն, որոշ ճնշում գործադրելով մյուլքատու գյուղապիների հանգեց, նրանց հողին ամրացնելու համար. թե՛ այդ չե՞տ բջնում իսկ սուրյուններում գոյություն ունեցած կարգ ու կանոններից:

Իսկ երե թեոդալն այդ շահագրգուվածությունը հանդեն չբերեր, մյուլքատու գյուղում եղած գյուղապիները կարող են հեռանալ եվ այդ կալվածատերը կդադարեր կալվա-

Յատեր Մինըուց, որովհետեւ նրա կալվածատիրական ուժը հենց իրանումն էր, որ նա ստանում էր որոշ նկատուտ այդ հողերի բերքից դրան «մյուլք»:

Ահա այդպիսի հարաբերություններ չեն եղել անմիջական արտադրողի եվ մյուլքատեր թեոդալի միջեւ: Ինչպես էր առաջանում մյուլքադարական իրավունքը: Կյա հարցը բազականին քննության և առնվազ անկյալ ժամանակներում, բայց մի ընդհանուր կարծիքի շեն հանգել:

Բանն այն է, որ այդ մյուլքերի վճարումն Անդրկող կասում տարբեր խանություններում ունեցել է տարբեր բովանդակություն: Մի քանի խանություններում, ինչպես օրինակ՝ Գանձակի, Շաքի, Օրբելի, Զարաբաշի խանություններում մինչեւ 19-րդ դարը մյուլքը վճարվում էր պետական պաշտոնյանի որպես ռուսիկ: Կյարնքն, եթե խանութիւնը բեգերից եվ տիրող շասակարգի մյուս մարդկան ներկա, բեգերից եվ տիրող շասակարգի մյուս մարդկան սկզբունքը պաշտոնյան այլն. ահա այդ պաշտոնի համար նրանք ստանում էին իրավունք մյուլք ստանալու որեւէ գյուղի կամ գյուղաբնմբիկ: Այդ գյուղերը մյուլքը վճարում էին տվյալ անձնավորության այնքան ժամանակ, որքան մասնակ նա կանգնած էր լրում այդ պաշտոնի գը-ժամանակ ևս կանգնած էր լրում այդ պաշտոնի գը-լուրը: Իսկ եթե հեռացվում էր պաշտոնի, ապա պրկուն նաև իրենց հանձնված գյուղերից մյուլք վերցը-նելու իրավունքից, եթև այնպես, ինչպես մի պաշտոնյա աշխատանքից հեռանալուց հետո այլեւս չեր ստանա իր ռուսիկը: Բայց այդպես չեր եղել նրեցանի եվ իր ռուսիկը: Բայց այդպես չեր եղել նրեցանի եվ նախիջնվանի խանություններում: Այդ խանություններում մյուլ-

թի գանձումը մյուլքադարի կողմից, այսինքն մյուլք ստանայու իրավունքը, կապված չի եղել պետական պաշտոն վարելու համը չվարելու հետ. այլ խոսքով ասած այդ տեղ մյուլքը չեր գանձ վուս որպես ոռեմիկ իրենց վարած պաշտոնի դիմաց:

Երեվանի եվ նախիքեվանի խանություններում պետական պաշտոններն ոռեմիկը ստանում էին անմիջական պետական գանձարանից: Կյադպիսով մյուլքի ստացումը այդ խանություններուց կապված էր ոչ թե պետական պաշտոն վարելու հետ, այլ մյուլքատիրով կալվաճատիրակած իրավունքների հետ:

Բազմաթիվ փաստեր կան, որոնք ապացույում են թե երես վանի խանության մեջ մյուլքատիրերը ժառանգաբար տիրել են մյուլքատու գյուղին եվ այդ մյուլքատու գյուղը ժառանգաբար անցել է որդու-որդի: Եթե մենք մի կողմ թողնենք մյուս փաստերը եվ վերցնենք Միայն վանքերը, ապա այդ ինքըստինքյան կապացույի, որ բազմաթիվ գյուղեր գարեր շարունակ եղել են այս կամ այն վանքի մյուլքատու գյուղեր: Կյադ վանքերը որեւէ պետական պաշտոն չեն վարել եվ չերին էլ կարող վարել բայց այնուամենայնիվ, նրանք մյուլքատու գյուղեր են ունեցել:

Կյանքը ոչ թե մեկ երկու, այլ տասնյակներ:

Այսուհետեւ մի հետաքրքիր գրքում, ԱՎՄԲՌ-ում, որը գրվել է 18-րդ դարի 60-70-ական թվականներին հՀՄԻՒԱՅՆ կարողիկոսի՝ Սիմեոն Երեվանցու կողմից եվ որում գրանցված է թղմիածնում եղած կալվաճագրեր եվ այլ դոկտորներ, վերին աստրհաններ հետաքրքիր փաստեր կան 18-18-րդ դարերում Պարսկահայաստանում եղած հողային հարաբերությունների համար: Կյադ գրքում կարելի է գտնել բազմաթիվ փաստեր, թե ինչպես բայց վանքերից նաև անհատ խաներ,

բեկնր, մԵլիքներ, խողաներ ունեցել են մյուլֆադարական գյու-
շեր, իրավական են եղել իրենց մյուլֆատու գյուղերը նվիրել
վահառել ուս որ չանկանային: Հետևիակես, եթե երեվանի
խանության ՄԵԼ այդ մյուլք ստանալու իրավունքը կանչ-
ված լիներ պետական պաշտոնի հետ, մյուլք ժամանուը
այդ ուրիշին նվիրելու կամ նախկին իրավունքը չեղ ունենա,
եվ ու իլ մյուլքը ճառանգաբար կանցներ կըս որդինե-
րին կամ մոտիկ ազգականներին:

Մյուլքը, որպես թեոդալական իալվաճատիրության
մի ձեվ առաջացել է բազմապիս նշանակներով: Այնու-
առաջ երեվանի խանության ՄԵԼ նախկին կալվաճատեր-
րը, ինչպես օրինակ վանքերը եվ տեղական աշխարհիկ
թեոդալները պահպանում երեւ իրենց նախկին կալվաճատի-
րական իրավունքները մյուլֆային հարաբերությունների ձե-
վով: Կյանք փոփոխությունները սկսել է տեղի ունենալ 7-
ունի 15-րդ դարից: Հողատիրության նախկին ձեվը տեղի
է տվել մյուլֆադարական հողատիրության ձեվին Պարսկա-
հայատանուց Թուրքիան ցեղերի եվ ապա դրանցից պար-
կական տիրապետության ճամանակ եվ նրանց ապահովու-
թական տակ: Բայս այդ, մյուլֆադարական հողատիրությու-
թյան տակ: Բայս այդ, մյուլֆադարական հողատիրությու-
թիր առաջացել է հետագա շրջանում՝ 16-18-րդ դարերուն
առաջացել է հետագա շրջանում՝ այսպիս է լիում մյուլքը վճա-
ռատ է դառնույ, ստրկված է լիում մյուլքը վճա-
ռատ այս կամ այժ կալվաճատիրուը: Կյանեց պատշա-
րել այս կամ այժ կալվաճատիրուը: Կյանեց պատշա-

Հ կալվածատրոց կամ վանքի կողմբու հանգած առ-
վի ջրով: Այսուհետեւ Մյուլֆատու կարող էր դառ-
նալ նաև այն ժամանակ, եթե այդ գյուղը զանա-
պան բեկերի, բաների կամայականությունից ազատ-
վելու համար մտնում էր որեւէ թերթալի հովանավո-
րության տակ: Ապա, եթե գյուղը ընկնում է Ցանք
պարտիք տակ, ստրկված է լինում այդ պարտիքը վե-
րելու համար դառնալ Մյուլֆատու:

Թվարկված դեպքերը դեռ նկատուած այս
աշխաներն ու ձեւվերը, որոնցով Մյուլֆիկ ազատ գյու-
ղը կարող էր մյուլֆատու դառնալ, շատ դժութուց
բնի հանապարհով էրն ստրկում գյուղին Մյուլֆ
վհարելու: Կյա հանապարհին դիմում էր եւ վան-
քը, եւ բեկը եւ խանը: Այս բուրրի հետո պետք
է ասել նաև այն, որ Մյուլֆը ստանալու իրավուն-
քը կարող էր առաջանալ նաև Երեվանի եւ նա-
խիքնանի խանություններում պետական պաշտոն վա-
րելու հետ կապված: Կյա տեղի է ունեցել ավելի շաշ
շրջանում քան 17-18-րդ դարերը, քայլ հետագա-
յում վերակցել է այդ սովորությունը եւ Մյուլֆատի-
րությունը դառնել է ժառանգական իրավունք ան-
կար այն բանից, թե վարում է Մյուլֆատերը պե-
տական պաշտոն՝ թե ոչ:

Մյուլֆի առաջացման հարցով վբաշվողներից
ոմանք գտնում են, որ նա կարող էր առաջանալ
նաև կամավոր նվիրատվությամբ, այսինքն գյու-
ղական համայնքը իր շանկությամբ իր վկրի էր փա-

թաթում մյուլք վհարելու պարտավորությունը :

Այդպես է կարծում Թ. Ավդաբեկյանը . Եթ նա խոսում է իջմանի վանքի և մի քանի գյուղերի Միջնարանի մյուլքը պոանալու առթիվ տեղի ունեցած բանական թուրքուների մասին : Այդ միանգամայն թյուր հասկացողություն է : Այդպես մոաճողները զանց են առնում տրետևական և բրազական այն ճնշումների մասին, որ գործադրել է հջմանից այդ գյուղերի նկատմամբ՝ նրանից նոր ստանալու համար : Ի հարկե ֆեոդալական հապարակարգի ներսում մեքանիքան իրավունք ձեռք բերելը կարող էր տեղի ունենալ բազմաթիվ ձեմերով : Խնձավանդ . Եթ սենք գործ ունենք մի այնպիսի պետքթյան հետ, ինչպիսին էր Պարսկական պետությունը : Պարսկական պետության մեջ թե՛ կայրն որոշ օրենքներ, բայց այդ օրենքները շատ գեղագույն ժեղական բան են դասում և նրանք կապահած են իրանի շահի քահանուցներից : Ծահի բերկից թան մի պատահական շահի քահանուցներից, կամ ընդհանառակը տալ չոր և չոր դաշ իր իրավունքներից, կամ միքատու զարձել որեւէ զյուղ և կամ կալվածքներ կամ միքատու զարձել որեւէ զյուղ և կամ մյուլքը պատել նրանց բայց այնուամենայնիվ բնոց գյուղերի համայնքը իր շահնիությամբ իրեն տեսական սորհապահ մեջ ընդ դար:

Բայս միքատու գյուղերից, կայրն նաև այնպիսիները, որոնք ոյուշական են : Տյուլական են այն գյուղերը, որոնք իրենց, հողային ամրություն հարկերն ու տուրքերը, այսինքն և օրույն և պետության վեարդու բակրան տաշին են, վեարդու են և պետության վեարդու բակրան տաշին են, վեարդու են և պարագաներով : Պետությանը այդպիսի գյուղեր հողային հարկ այլին չեն վեարու :

ինչպես էր առաջանում տյուլական գյուղը : Ծահի կամ խա-
նը մելիքին, բեկին կամ խանին նվիրում էր գյուղի բակրած
տվյալ անձնավորության կողմից շահի կամ խանի նկատմամբ
ցուցաբերած աշքի ընկնող ճառայության դիմաց, իսկ բակրած,
գա հողային այն հարկն էր, որ գյուղացին վճարում էր պետու-
թյան : Ահա այն դեպքում, երբ գյուղը և իր մշուչը, և իր բակ-
րած տալիս էր կալվածատիրոջ, կողվում էր տյուլ կամ տյուլա-
կան դյուզ : Սակայն կարող էր լինել դեպք, երբ նոյն գյուղը
մյուշը վճարում էր Մի ֆեոդալի, իսկ բակրած ստանում էր նվեր
Մի ուրիշ ֆեոդալ : Այդպիսով տվյալ գյուղը ենթակա էր Մի-
նում երկու տարրեր ֆեոդալների, բայց ինչը, գյուղը տվյալ
դեպքում անվանվում էր տյուլական գյուղ : Ի հարկե բակրածին
են այն դեպքերը, երբ մյուշն ու բակրած գյուղը վճարում էր
Մի կալվածատիրոջ :

Հողատիրության ձեւերի մասին մեր բերած փաստերը սե-
ծագույն մասով վերաբերվում է Երեվանի խանության : Բեկ
այդ ձեւերը այս կամ այն շափով ընդհանուր են եղել նաև Մյուն
խանությունների համար, սակայն պետք ասել, որ առանձին
տարրերություններ, նրբություններ Անդրկողմանյան խանություն-
ներում հողային տիրապետության ձեւերի վերաբերյալ եղել են :

Նոյնին Պարսկահայաստանում, այն մասերում, որոնք կիս
էին Վրաստանին, ունեին իրենց յուրահատկությունները :
Լոռիում, որը ույժ ձամանակ կայսար էր Վրաստանին, տիրապե-
տող ձեւը հողային տիրապետության բնագավառում այն էր, որ
գոյություն ուներ Վրաստանում : Հենց դրա հետեւան-
քով և նոյնու բավականին ամուր կերպով հաստակված էին
նորտատիրական կարգերը : Լոռու - Սանահնի, Հաղբարի, Պարսկա-

Քրայի շրջաններում գյուղական տներին խոշոր հողատերեր, որոնք կարման մեջ էին դնում իրենցից անմիջական արտադրողին, գյուղացուն: Պահուս էին գյուղացիներին ճորտական պայմաններում և տնորինում էին իրենց կալվածները, հողամասերը, որոնք հանձնված էին գյուղացիներին մշակելու: Այդ հողերն հանդիրանում էին ֆեռալի սեփականությունը:

Այդպիսի խոշոր կալվածատերեր էին Սանահնի և Հաղբարի վանքերը, ինչպես և Արղությանների ֆեռալական սունը: Ի հարցեք բայց սրանցից կայիրն նաև ուրիշ կալվածատերեր:

Որոշ յուրահատկություններ հողային հարաբերությունների բնագավառում ունեին նաև նարաբաղի մելիքությունները: Այստեղ էլ հողը պատկանում էր մելիքին և գյուղացիները ստրաված էին մելիքի համար կատարել այնպիսի պարտավորություններ, որոնք գալիս էին շատ երես շրջաններից: Ճարտական կարպածությունը պահպանվել էր նաև այդտեղ, և այդ այնքան ուժեղ էր, որ երբ մելիքը գաղթում էր, իր հետ վերցվում էր նաև իր ենթակա գյուղացիներին որպես իր ճորտեր: Մելիքություններում, մելիքը հանդիրեն երգախո, որպես աշեառիազոր ֆեռալը, որի սոհնեց հանդիրեն երգախո, որպես իշխանություններին: Մելիքություններում առաջարևաբար իշխանություններին այդ կապաճքներին: Մելիքություններում սակայն կայիրն հողային այնպիսի տարածություններ, որոնք մելիքի անմիջական սեփականությունը չեն կազմում. և Ենթակա էին այլ կալվածատերերի կամ պարտական պետությանը: Բայց դրանից, մելիքություններում կայիրն սակայն աղօնտականէտը, որոնք գերակա էին մելիքներին և ֆեռալական կարպածությամբ կապած մելիքների հետ:

Ահա այս հարաբերությունները, որոնք 17-18-րդ դարերում Անդրկովկասի խանություններում և հանգացեն Երևանի

խանության մեջ տիրապետող հարաբերություններ էին։ Դեսք է Յարդգանը Մի հանգամանք, որ այս շրջանի հողային հարաբերությունները դեռ ևս լավ ուսումնասիրված և լուսաբանված չեն։ Եղել են մարդիկ, որոնք փորձել են Անդրկովկասյան խանություններում եղած հողատիրության ձևը ներփայացնել որպես կուլեկտորի հողադիրություն։ Այսինքն, ոչ թե առանձին ֆեոդալն է դեմք բեկի, խանի, մելիքի, վանքի, հանդես գալիս որպես հողի տեր, կալվածատեր, այլ այդ բոլոր կալվածատերերը որպես պետական պաշտոնյաններ, որպես պետական ճարպայողներ միասին տիրում են ամբողջ հողեն, այլ կերպ առաջ հողը նրանց «կուլեկտորի» սեփականությունն է։ Հարցի այսպիսի Մեկնաբանումն անհիմն է, այդ պատմական իրականությունը չէ առաջնային նրեվանք և նախինելվածք խանությունների նկատմամբ։ Ըստհակառակը Պարսկահայաստանում 17-18-րդ դարերից հողի մասնավոր սեփականությունը սկսում է տարածված երեխովթ դառնալ, այդ մասին են խոսում բազմաթիվ փաստեր հողի վաճառքի կտակելու, նվիրաբերելու վերաբերյալ, որոնց մեջն հանդիպում ենք ինչպես հրապարակած, նույնպես և շիրատարակված գոկումթենտներում։

Պարսկահայաստանում հասարակությունը այս շրջանում, ինչպես նախորդ շրջաններում բաժանվում էր հիմնականում երկու զասակարգի, ֆեոդալների՝ հողատերերի և գյուղակիության։ Ֆեոդալական դասակարգը ուներ բայտարշետ էտիկական կազմ, հայ մելիքներ, Աղօնքորականություն, պարսիկ խաներ, մահմեդական հոգեվորականություն, թյուրք շեհիեր, խաներ և այլն։ Այդ ֆեոդալական կազմից, բայր հայ

կալվաճատերերից մյուս բոլորը ազատված էին որեև տեսակի
հարկ չճարեցու . Նրանք մրայն պինդորական պարտավորու-
թյուն էին կատարում պետության հանդեպ : Հայ կալվաճա-
տերերից հոգնվորականները և նրանց ունեցվածքը երբեմն-
երբեմն ազատվում էին հարկատվությունից . այսպես օրինակ
հջորիանի վանքը և նրա միաբանությունը մեծ ժամանք ազատ
էին հարկատվությունից : Մյուս հայ կալվաճատերերը , որպես
նվաճած և հայատակ ձողովրդի , իրենց կալվածների համար
պարսկական պետությանը վճարում էին որոշ տուրք : Ի հար-
կե նրանք այդ գումարը կորչում էին իրենց ենթակա աշխա-
տավորությունից :

Պարսկահայաստանի գյուղաբնակչությունը նույնպես իր էտ-
սիրկածան կազմով մրատարր չէր: Այն բաշկացած էր գլխավո-
րապես հայ և ադրբեջանական գյուղաբնակչությունից, որն առանց
ինքը բնակչության հարկանու էր:

Գյուղակությունը իր ներում բաժանված է եղել երեք
բանակներում՝ մեջը վետել և մյուս կազմանարկոց և
բարի. Այդ խմբերից մեջը վետել է մյուս կազմանարկոց և
բահրած պետությանը. Մյուսը կազմել է բերք 1/10- մասը,
իսկ բահրած կազմել է 1/5- մասը :

Երկրորդ խումբը գյուղի մասին է: Առաջն պատահան հարկերը:
Նա վճարել է Միայն պետական հարկերը:
Երրորդ խումբը Գյուղական քայլածառքային, այդ այն շերտն է, որը
Երրորդ խումբը Գյուղական քայլածառքային, իսկ այդ այն շերտն է, որը
հողակուրք էր և նա ֆեռդայի կողմից, իսկ այդ կողմից, սու-
նում էր որոշ պայմանով հող, մշակում էր այդ և այդ մր-
շակումից հետո եկամուռը բաշխվում էր իսկ և ան-
շակումից հետո եկամուռը բաշխվում էր իսկ և ան-

իորոք թերթիկ գուրս զալով այն ամենը - ինչ որ խանը տը-
պէլ էր գյուղացուն օգտագործելու, ինչպես օրինակ . գյուղա-
տնտեսական գործիքների արժեքը, սերմացուն և այլն : Այսպի-
սի գյուղացիները ռանչպարներ էին : Երեվանի խանության
մեջ նրանք անվանվում էին յահրիքարներ և փարաբեյարներ .
18-րդ դարի վերջերին այս ռանչպարները փասորեն սկսու-
են վերանվել օրավարձով աշխատողների : Նրանք արգել-
սկումնեաշխատել խանի հողերի վրա, ստանալով ԿՌ
տնտեսական բոլոր գործիքները և մրայն աշխատանքի
վերջում նրանք եկամուտիկ ստանում էին որոշ վարձ, իսկ
ամբողջ արդյունքը անցնում էր խանին :

Թե բահրան և թե Մյուլֆը վճարվում էր բնարդյուն-
քով, սակայն հողային որոշ տուրքեր, ինչպես օրինակ՝ պը-
ղատու ծառերի և խաղողի այգիների հարկը վճարվում էր
դրամավ :

Այնուհետև, որպես կանոն վճարվում էր նաև գլխահարկ:
անկախ այն բանից, որ գյուղակին Մյուլֆարարական էր կամ
Մրայն բահրա էր տալիս, թե հողապորկ էր : Հայերը ի տար-
բերություն Մահմեթական ազգաբնակչության գլխահարկը վճ-
արում էին կրկնակի շափով : Այնուհետև գյուղացիությունը
վճարում էր նաև անանահարկ : Բայց այդ բոլորիկ պար-
կական խաները բնակչությունից քատում էին մի քանի այլ
տուրքեր զանազան անվան տակ : Այդ բոլոր տուրքերը գյու-
ղակիությունից գուրս էին քատում իր տարեկան եկամուտի
2/3-ից մինչև 4/5-ը, նրա տրամադրության տակ թողնե-
լով իր գյուղայան պահպանման համար ամենամեծ իրայ
միջոցները :

Այդ հարկերից դուրս Հայաստանում. ԲԵ Թյուրքա-
Հայաստանում, գոյություն ունեին նաև Եկեղեցական
բազմապիսի տուրքեր : Անկախ այն բանի, որ հոգեմոռա-
կանությունը ի գերս վանքերի խոշոր քեղծաշներից էր,
ամբողջ հայ բնակչությունից հավաքում էր նաև այլ տուր-
քեր : Այդ տուրքերի թվումն էին նվիրական տուրքերը և
պտղի տուրքը : Նվիրական տուրքը հավաքվում էր երեք տա-
րին Մի անգամ :

Հջմիանքն կաթողիկոսարանը նվիրակ էր ուղարկում բոլոր հայաբնակ շրջանները և նվիրատվություններ եր հայութում: Նվիրակին պարտավոր էին բոլոր նվերներ տալու: Ձեզականորեն դա նվեր էր համարվում, բայց փաստորեն դա պարտավորություն էր: Որոշակի չափ չէր սահմանվել, դա պարտավորություն էր: Դա թողնվում էր նվիրատ ինչքան պետք է նվեր տային: Դա թողնվում էր նվիրողի ցանկությանը: Բայց եթե նվերը գրի էր լրաց, ապա բոլորի հրաժարվում էր այդ վեցունետու, այդպիսով ստիպենակը հրաժարվում էր այդ վեցունետու, այդպիսով ստիպենակը « նվիրելու » ավելի շատ:

ջաներ էջմիածնին տալիս էրն յուրաքանչյուր տարի իրենց շը-
ջանին յուրահատուկ արտադրանքից, բերքից բաժին։ Օրինակ՝
Հռուց շրջանը տալիս էր պղնձեղեն և փայտեղեն։ Նոր Բա-
յակետը տալիս էր յուղ, պանիր։ Մեղրու շրջանը՝ շորացրած
միրգ։ Արարատյան գաշտը հացահատիկ և այլն։ Այդպիսի շը-
ջաների թիվը 10-նյակներից ավելի էր։ Այդպիսի նվերնե-
րի քանակը չի չի եղել։ Օրինակ՝ Վանի շրջանը այդպիսի
«նվիրատվության» հետվանքով երբեմն տվել է էջմիած-
նին 1000-ից ավելի անառողջեր։

Կալվածատերերից և գյուղաբներից բայի Պարսկահա-
յաստանում կար առեվտրականների և արհեստավորների
արդեն բավականին ստվար մի խաչ, որի մեծագոյն մասը
ապրում էր քաղաքներում և քաղաքատիւ ավաններում։
Արհեստավորությունը այս շրջանում արդեն ուներ իր հար-
քարությունները և զգալի թիվ էր կակտում երեվանում,
Նախիջեվանում և Երեվանի խանության մի քանի ավաննե-
րում։ Առեվտրականներն ու արհեստավորներն եւ վճարում
էին թե՛ հասուկ հարկ իրենց եկամուտից և թե գլխահարկ։

Այս մի փոքր ճանրանանք, թե ինչ պիճակումն էր վար-
չածնը Թյուրքահայաստանում։ Թյուրքահայաստանում արեվ-
ելյան շրջանները, այսինքն այն շրջանները, որոնք հայությա-
նում եին հայաբնակ վայրեր, սեն մասամբ բաժանված էին
փաշայությունների։ Այդպիսի փաշայություններ եին կարսի,
Քուպրուսի, Բիթլիսի, Վանի, Բայակետի փաշայությունները
և այլն։ Փաշայությունների գլուխը կանգնած էին փաշաներն
ինչպես պարսկական խանություններում, համարյա նոյնպես
էլ փաշայություններում, փաշան լիարաց անձնագորությունն էր

ՀԵՂԱԿԱՆ ՀԱՐԱՄ ՏԵՍԱԿ 19-ՐԴ ԴՐԻ ԿԵՏԵՐԸ:
ՆԵՐԸ ԽԵՎՈՈՄ ԵՆ ՄԻԱՅ 19-ՐԴ ԴՐԻ ԿԵՏԵՐԸ:
ՀՈՂԱԿԱՆ ՀԱՐԱՄԵՐՆԵՐԻ ՄԵջ Պարկապահութեան և Թյու-

Քիայում որոշ տարբերություններ են մուսուլմանական հպատակների
և երեք կատողությունների:

- Եռեք կատեգորիայի :
1. Այն հողերը, որոնք տրվում են մուսուլմանական հպատակների
2. Այն հողերը, որոնք տրվում են ոչ մուսուլմանական հպատակների
Երկրորդ կարգի հողերը համարվում են պետության կողմէց
նվաճած հողեր և տրվում են նախկին տերերին պայմանական

Կերպով օգտագործելու համար նրանք պետական հողերն են:

բաժիններ) տիմարի . և (մեծ հողաբաժիններ) սյամետի : Այս հողամաս-սերը ինչպես ասացինք տրվում էին աղաներին, բեգերին, զինչո-րականներին, պայմանական օգտագործման համար : Բայց կարող էին լինել դեպքեր, երբ այդ հողակտորների պայմանական տերը ծառան-գական գարձներ այդ հողերը :

Հողատիրության վերաբերյալ սկզբունքը բղիում էր ըուռածից, իսկ ըստ զուռանի հողը սուրանի սեփականություն էր : Այնպէս որ, այդ երեք կատեգորիաների վրա էլ տարածվում էր թագավորի իրավունքները հավասարապես, որպէս բարձրագույն իշխողի : Բայց դա ձեզական մի բան էր, որ տրադիցիոն կերպով ընդունված էր մուսուլմանական երկրներում :

Փաստորեն այստեղ մենք ունենք մի երեվոյթ, այն որ թուր-քիայում ձեզակերպվել էր ֆեոդալական հարաբերություն քաջա-կանին նման արեվմտյան Եվրոպայի ֆեոդալական հարաբերու-թյուններին : Այդ պայմանական հողատերերն էին բեգերը, սին-վորականները, աղաներ, որոնք տիրելով այդ կալվածքներին իրենց էին ենթարկում նաև այդ հողերի վրա ապրող ընակու-թյանը : Տորտական կախվածության մեջ էին դնում նրանց իրեն-ցից : Թուրքահայաստանում այդպիսի հողատերերի թիվը քիչ չէր, իսկ այդ հողատերերի մեծ մասը քյուրդ բեգեր էին, քյուրդ աղաներ էին, որոնց նկատմամբ և քյուրդ և հայ աշ-խատավորությունը ճորտական կախվածության մեջ էր գտնօ-վում : Գյուղացին հողն օգտագործելու համար որպէս ընդհա-նուր սկզբունք վճարում էր բերքի մի տասերորդը : Վճարում էին քրիստոնյաները և մուսուլմանները : Սակայն դրանից բայց ոչ մուսուլմանները, ոչ մահմեդականները պարտավոր էին

մուծել հոգայիրն մի նոր տուրք որը կոչվում էր խարաջ-կամ խարջ-
խայի այդ վճարում էին նաև գլուխարկ, որպես նվաճված տղովորք:
Թյուրքահայաստանում բնակչության համար առանձին Զանու-
թյուն էր նաև անանահարկ:

Հետաքրքիր մի երեվոյթ եր կառարվութ դրանից հետո : Բժ-
շեց, աղաները, օգտվում եին այն հածամանքից, որ եթե հողն օ-
տագործում են քրիստոնյաները ծրանցից կարելի է կրկնափ հարկ
վերցնել, նրանք իրենց հողամասերը տալիս եին ոչ մահմեցա-
կաներին արեւորով և վերցնում եին նրանցից այդ երկու համեր-
յալ սուրբը՝ խարաջը և գլուխարկը, հատկապես խարաջը : Մուս-
լուկացին այս վիճակն եղել թյուրքահայաստանում հողային
վորապես այս վիճակն էր թյուրքահայաստանում : Բայց
հարաբերությունների ու հարկացին սրստեմի բնագավառում : Բայց
պետք ասել, որ այդ կարգը բոլոր տեղերում, բոլոր ժամանակ
սրստեմատիկ կերպով չի կիրառվել : Բանն այնէ, որ լինելով
այդպիսի Ծովիանուր կարդ, կանոն, այդ Ծովիանուր կարդն ու
կանոնը զանց էր առնվում բեգերի, խաների, աղաների կոշիկ
և թյուրքական ծանր լուծը, պլյուս դրան քրդական բեգերի
և թյուրքական ծանր լուծը, պլյուս դրան ամրոջ գահանությամբ ծան-
րառածում առաջին հերթին իր ամրոջ գահանությամբ ծան-
րառում էր նայ աշխատավորության ուժերին :

Բժ Պարսկահայաստանում և թե թյուրքահայաստանում
ստեղծված վարչական արեգելյան այդ բռնակալական կարգ-
ստեղծված վարչական արեգելյան այդ բռնակալական կարգ-
ը ամբողջությամբ ծանրանում էին աշխատավոր ժողովրդ
ուժերին : Դրան պլյուս այն, որ աշխատավորությունը տնօքում
էր նաև սուրբական այն ծանր պայմանների ներք, որոնք
ստեղծվել էին այս շրջանում : Բանն այնէ, որ աշխատավոր
գյուղական ոչ միայն վերտյան երկնակարերն ու տուրքերը, որոնք
գյուղական ոչ միայն վերտյան երկնակարերն ու տուրքերը, որոնք

նշանակված էրն կառավարության կողմից օրենքով, այլ հաճախ գյուղաբն ստիպված էր ծանր պարտավորություններ կառարել ֆեոդալի համար, թեև իրավական տեսակետից, իսկ այդ իրավականը թյուրքիայում և Պարսկաստանում վերին աստիճանի իսարուս էր, գյուղաբն համարվում էր անձնապես ազտ, բայց նրա այդ անձնական ազատությունը ոչ մի շաբուշ էր թեթեվայնում նրա տնտեսական և իրավական դրույթունը: Իրավապես, և տնտեսապես նա ստրկացված էր: Բայր այդ ստրկական վիճակից, գյուղաբն ստիպված էր ֆեոդալի համար, պետական պաշտոնյայի համար, պետության համար կրծմի տեսակ տուրք ևս՝ կոռը: Օրինակ՝ Երեվանի խանության մեջ 17-րդ դարի սկզբին կոռի կիրառությունը շաբերի է հանում: Ամրագյունա խանը, երբ ձեռնարկում էր Մի շարք շենքերի կառուցման, առուներ հանելուն, այգիներ տնկելուն խոշոր շաբուշ կոռ է վերցնում Խողովրդիկ:

Կոռային աշխատանքի սրստեմը բավականին տարածված է եղել նաև Թյուրքահայաստանում, Թյուրքահայերը մինչև վերջերս ել քորդ բեգերի համար տալիս էին «ստրկա», որը կոռի մնացուկն էր:

Մի քանի խոսքով կանգ առնենք նաև վելիքություններում եղած գյուղաբնության դրության վրա: Վելիքություններում նույնպես կային Մի շարք պարտավորություններ, որ գյուղաբն պետք է կատարեր մելիքի համար: Նրանք մելիքներին վճարում էին մալգուհետ (տասնորդ): Այնուհետև յուրաքանչյուր տուն Մի ոսկի, որն ողարկվում էր կամ խանին, որի հսկողության տակ այդ մելիքն էր, կամ շահին, դա կոչվում էր Գյուն փուր: Ապա յուրաքանչյուր 25 տուն Մի Տառակ:

առն Մի աղօսիրն պարտավոր էր տալ մելիքի տանը Յառա-
յելու համար։

Բայրի այդ գյուղը տավս էր մելքին, սկսած բերլու համար
մի վար անոշ, մի գյուղ, մի ձրապան, մի եղանակ: Կանայք
մելքին համար պետք է բուրդ գցեին, բանջար հայլաքեին և
այլ տնային գործեր կատարեին: Մելքին տան կատարպան ա-
սեն մի հարսանիքի ժամանակ հասուկ նվերներ պետք է բեր-
ին մելքին: Այդ գույքական չըր, եթե գյուղակին հարսանիք
կատարեր, որս համար պետք է նա նույնին հասուկ նվերներ
տար մելքին: Նոր տարվան յուրաքանչյուր տուն հասուկ
նվերներ պետք է բերեր և ինչ եւ որ լիներ այդ նվերը պետք
է անպայման ոչ պակաս քան 20 կուտեկի արծողություն ունենար:
“ ուստի պարսկահայ աշխատավորության

17-րդ դարի ընթացքում պարևառայ աշխատավորության
շահագործման համար ավելանում է նաև մի ուրիշ հանգա-
մանք: Ծավալվում են վանքային կալվածքները, որոն հետ
միասին հոգեվորականության պահ մասը, հատկապես բարձր
հոգեվորականությունը սիռում է ձեռք բերել հողային ընդար-
ձակ տարածություններ: Այդ հոգեվորականությունը գործ գործու-
թանքից տեղափոխվում են գյուղերում և սկսում են վրացուն
կալվաճքների օշակում: 17-րդ դարի պատմէքներից մեկը՝
Կալվաճքների հետեւյալ տեղեկությունները և տարս՝ «...Ան-
դրակրիստերն հետեւյալ տեղեկությունները և տարս՝ «...Ան-
դրակրիստերն աշքին հայոց՝ յորաքանչիւր սեղազուր
նայն վանօրայիշ աշքին հայոց՝ յորաքանչիւր սեղազուր
ուներ յուր պիծու առանձին, այդի և բորսուան, փեթաք,
և ոռու, և մարտ, և համբարտունյ և շմուռուսայունց,
ուներ վանօր համբարտունյ վանիս մատու արարեաւ Եւ-
թան բաժանենք: Եւ վայե ամենայն բնքեանք, և աղջա-
նու՝ և բորբանց համեմաց արարեաւ Յարեաւ ի պես կարեաւ»
(Համբարիսեաւ, էջ 220).

Նույնպիսի տեղեկություններ է տալիս նաև՝ Դարանաղեցին. Ասքում է
«Եվ վանօրեից աբեղայքն . . . թողեալ էին զլուսազարդ
վանորայան, սփուեալ էին ի գեղորայսն և անցեայքն
այգին և թուրասուանք և հօտք խաշանց և աջանոց
բաշմութիւն ստացէալ էին իբրեւ զմի ի մեծատանց աշ-
խարհականացն և կալեալ էին ի կանանց տանտիկնացն
ի վարձու և զանունաքն հաց թուր էին դրեալ . . .»
(Դարանաղեցի, էջ 296):

Այդպիսով 17-րդ դարի հենց սկզբից մենք տեսնում ենք
հոգեվորականության մեջ ձգտում դեպի աշխարհիկ կյանքը,
դեպի սեփական տնտեսություն ունենալը և իրենց տնտեսության
արդյունքի զգալի մասը վաճառքի էր հանում:

Հոգեվորականության մեջ տեղի ունեցող այս երեվույթը իր
հերթին էլ ամելի Ֆանրացնում էր գյուղապետության միջակը:
Այդպիսի Ֆանր վրեակում ապրող գյուղացիների մեջ էլ 17-րդ
դարի սկզբից ուժեղանում է գժգոհությունը կալվածատերերի,
առանձնապես հոգեվոր կալվածատերերի գեմ: Դա արտահայտ-
վել է Մի շարժումով, որի կենտրոնը սկզբում եղել է Գան-
ձասարը (հյուսիսային Շարաբաղ) իսկ հետո տեղափոխվել է
Երեվան: Այդ շարժումը շարժման ղեկավարի անունը էլ մեր
պատմության մեջ հայտնի է որպես «Մերկուրի շարժում»:

Ծարժումը տեղի է ունեցել 1610-20 թ.թ.: Ծարժման մասին
դժբախտաբար մենք քիչ տեղեկություններ ունենք: Նրա մասին
տեղեկություններ են տալիս միայն Երկու պատմիչներ - Դարա-
նաղեցին և Զաքարյա Սարկավագը: Պետք է ասել, որ այդ եր-
կու պատմիչների տվյալները եւ թերի են և կերպին ասորհա-
նի տեղեկություն: Երկուսն եւ թշնամաբար են լցում գեպի այդ

շարժումը և երկուսն էլ ձգտել են այդ շարժումը զի՞սավորող ան-
նավորությանը՝ Մեխլունին ներկայացնել որպես սնոտիրապաշտ և
բարիտարինդիր մի անձնավորություն։ Դրա համար էլ Ծննդ այդ
տվյալներին պետք է ըունեանք պատշոթյամբ և վերապահորեն։
Մեխլունի իսկական անունը Մեկ հայտնի չե։ «Մելքոն» նրա
մականուննեւ։ Նա սկզբնական շրջանում եղել է Գանձասարի
վանքում որպես սարկավագ։ Գանձասարի Կաթողիկոսը նրան օգ-
տագործել է գյուղապահներից հատարելիս, Մեխլուն սերտ շքրան մեջ
Օրին Ապահանում երկու տարի անցկացնելուց հետո նորից
Շամարի վրայով վերադառնում է Տուսաստան, սպասյա 1711
թվին ճանապարհին, հայրը հաստած Կոտրաբան, մեռնումէ:

Ինչպես պետք գնահատել Օրին այդ ամբողջ գործունեությունը: Ամենը առաջ նրա գործունեությունը հետապնդում էր
Հայաստանի պատագրությունը Պարսկական ուրիշականություններ:
Այդ տեսակերպից գա քանորդեն ներկայացնում էր պատագրական
շարժում: Այդ շարժման քաղաքական հենարանը հանդիսանում
էր հայ առելքորական բորժուական և մելիքությունները Հա-
րաբաղում: Ինչպես սկզբներում տօսանք, Պարսկաստանում այս
շրջանում հայ առելքորականների համար ստեղծվում էր բաժա-
կան անձնուկ և աննպաստ պայմաններ: Թե Հայաստանում և թե
Պարսկաստանի այլ վայրերում հայ առելքորականներում այս և
չունեն այն ընդունելությունը, թե որ Մամանակ կար Ծահ-
աբանի Տամանաց: Այդ տեսակերպից հայ առելքորական բոր-
ժուական ձգումը էր ունենալ իր սեփական երեխով և պե-

տությունը, որտեղ ինքը կունենար գործունեության ազատ ՖԱ պարեկ : Երկրորդ՝ իսրայել Օրին վերակենդանացրել հայերի ՄԵՐ ազատագրական պայքարի ոգին, սերը գետի հայրենիք, ինքը հանդիսանալով շավագույն հայրենասերներից ՄԵԿԸ : Երրորդ՝ Օրին կոտրել հայկական կղերականության դրվանագրուական տրադիցիան, երբ Հայաստանի ազատագրության գործը կապում էին պապականության հետ, Հայաստանի ազատագրությունը Պարսկաստանից կապել Առևաստանի հետ և պատմականորեն հանդիսացած հայ Տողովրդի բարիոր ուսումնականությունը հետ կապողը : Օրին հանդիսացած 17-րդ դարի վերջերի և 18-րդ դարի սկզբների հայկական իրականության քաղաքական խոշոր գործիչը : Նա Հայաստանի ազատագրությունը կապել նաև Անդրկովկասյան Տողովրդների՝ Վրաստանի հետ, հայ-վրացական միացյալ պայքարի հետ : Այդ տեսակետից հետոյի մի շարք մեղադրանքները և բնութագրութները Օրին անձիրու են և անտեղի :

Օրին գործում էր շատ համարձակ, նույնիսկ իրկարության հասնող համարձակությամբ, բայց նա չի փորձում որիսկի ենթարկել Տողովրդին : Նոյնիսկ, երբ Օրին հայկական իրականության մասին Պետրոս I-ին կամորքից առաջ Պֆայլցի Կուրֆյուրստին տվել է չափականչափան տեղեկություններ, կամ երբ հայերի անունից դիմումներ է հորինել, այդ նա չի արել Տողովրդի հանդեպ զարամուռեն, իր այդպիսի գործողությունը չի ուզուել Տողովրդի գետը. ըստհակառակը նա իր ամբողջ սրտով ցանկացել է արագացնել հայ Տողովրդի ազատագրությունը պարսկական ուրիշակետությունից : Ճիշտ է Օրին ունեցել է նաև թե-

Թեթևներ իր գործութեան զրցւում, ինչպէս
օրինակ հակառակորդի թերագնահատումը, ժողովրդի
ապստամբության նախապատրաստելու գործու և այլն,
բայց այդ թերությունները երբեք իրավունք չեն տակիս
որան բարտագուշակ եամ բարտարնդիր անվանելու, ինչ-
պէս ասում է եռու:

Եղան թերություններից մեկն էլ այն էր, որ Օրին գոր-
ծութեան ձամանակ ապատագրական շարժումը շար-
ձակ մասսայական շարժում: Ընդհակառակություն գա և այս
վերնարանի, այն էլ նրա համեմատաբար նեղ շրջաննե-
րում: Այդ շարժումը ժողովրդի սեփականություն գար-
ձակ միայն Օրին մահից հետո: իսկապէս ժողովրդական
ապատագրական պայքարը Պարսկական տրրապետության
և օսմանական նվաճութերի դեմ ճակաԱլլում է 1722-23.
-թվերի միջն 1730-31 թվերը: Եկ ահա թե ինչու հատ-
կապէս այդ ձամանակաշրջանում այդ շարժումը վերած-
վել իսկական ժողովրդական ապստամբության:

1721-թվին Ռուսաստանը վերջացնում է հյուսրսային
պատերազմը հաղթանակով: Ռուսական վենքի հաջողություն
համբավը տարածվել էր ամբողջ Պարսկաստանում, հե-
տեվապէս նաև Հայաստանում ու Վրաստանում: իսկ այդ
փոքր ոգեպորտերուն չեր առաջացնում Անդրկովկասում.
Մանավանդ Օրին գործութեան հետեւանքով հայերն սՅօ
սպասելիքներ ուներն ռուսական օգնությունից և ոչ միան
հայերն էին սպասում այդ օգնությունը ռուսական պետու-
թյունից այլ և Վրաստանուց: Բայր այդ արդեօ լուրեր էին
պտուինք, որ Պետրոս Շ-ը արշավանք է սկսում գերի Անդր-

կովկաս, որ և դառագ իրականություն 1722 թվին : Իսկ այլ բոլորի գիմաց Պարսկաստանում Հյուսեյին շահի Տամանակ ավելի էին սաստկանում Կամայականությունները, հարկապահանգությունը, քամահան վերաբերմունք դեպի Տողովուրդը : Եսայի Կաթողիկոսը իր մի փոքրիկ գործում նշումէ, թէ ինչպիսի նոր հարկեր են դրվում Տողովորդի վրա և ինչ սոսկալի բանություններով գանձվութեն այդ հարկերն ու տուրքերը : Այդ գրությունը երկրում առաջացնում է իրու դժունություն պարսկական աթրապետության դեմ : Յարական արքունիքը Հայաստան է ուղարկում 1716 թվին Մինաս Վարդապետին և նրա վրա հաօտուկ պարտականություն է քնում տեսակցություն հայկական ղեկավար շրջանների հետ և իմանալու, թէ նրանք որպանով պատրաստված են ռուսական զորքին ընդունելու : Դրա համար Մինաս Վարդապետը այստեղ է, և Գանձասար, և հջմբածին և երբ նա վերադառնում է Տիուաստան, այդ Տամանակ արդեն Անդրկովկաս էր մտել յարական զորքը :

Այս մի պատճիրակություն Արտեմի Օլինսկու ղեկավարությամբ էր ուղարկվում Պարսկաստան 1717 թ., որին հանձնարարված էր զազունի կերպով ուսումնասիրել Պարսկաստանի դրությունը և ցեկուցել Պետրոս I-ին : Այդ պատճիրակությունը 1717 թվին արդեն ճամարիրում էր : Եղ Օլինսկին և Մինաս Վարդապետը Պետրոս I-ին հաղորդում են անհրաժեշտ տեղեկություններ Պարսկաստանի դրության մասին և գրանով իսկ արագացնում ռուսական զորքերի մուտքը Անդրկովկաս :

Այդ Տամանակ Պարսկաստանը ապրում էր Կորսիկա-

զան մոմենտ: 1722 թվին Պարսկաստանում բռնկվել էր ազ-
վանների ապստամբությունը: Աղվանցիները արշավել էին
Սպահանի վրա, պարտության են մատնել Հյուսեյին շահին,
գերել նրան և հաստացել Սպահանում: Մյուս կողմից հե-
ղիները Կովկասյան լեռներից արշավել էին Վրաստանի և
Հայաստանի վրա, ասպատակել այդ երկրները, և Կազմա-
կերպել մի շարք քաղաքաների կողոպուտը: Պարսկաստա-
նում ստեղծված քաղաքական վիճակը գրգռում էր և օսմա-
նական սովորանության ախորժակը և ոռուսական ցարիկ-
ութիւն և երկուսն էլ ստեղծված իրադրությունը համարում
հարմար առիթ ու արշավում դեպի Անդրկովկաս: Ռուսական
ցարական կառավարության առաջ Յառանում էր մի կարե-
վոր խնդիր, այն է՝ Կասպիական ափերի շուտափության վա-
սն խնդիրը: Որովհետեւ, եթե ռուսական կորդերը խ-
մանակին չհասնեին գառարական ափերը, այդ ափերը
կարող էին նվաճվել Օսմանյան սովորանության կողմից,
իսկ Օսմանյան սովորանության հետ գլուխ դնելը մի քիչ ավե-
լի լուրջ գործ էր: Ահա այս հանգամանքը առիթ տալիս, որ-
պեսպի ռուսական կորդը առաջ խաղա դեպի հարաց: Այդ
արշավանքը սկսվում է 1722 թվին:

Քաղաքական այդպիսի իրադրությունն Անդրկովկասում
ուժեղ կերպով խթանում էր հայերի և վրացիների մեջ ազա-
տագրական շարժումը: Այդ շարժման գլուխ կանգնում են
երկու հոգի, մեկը՝ Վրաստանի թագավոր Վահրամանց VI-ը,
և մյուսը՝ Գանձասարի Եսայի Կաթողիկոսը: Այդ երկուոր
դաշտում են շարժման ոգեշնչողը: Վահրամանը VII-ը,
որին բիշ հաշանանքի շեր ենթարկել Պարսկաստանի շահը,

վերադարձել էր իր երկիրը և մեծ եռանդրով նվիրվել Վրաստացությունից ազատելու գործին, որի համար նա ջանում էր Կազմակերպել Անդրկովկասյան ժողովութերի Միացյալ պայքարը Պարսկաստանի դեմ: Կազմակերպում է հայ-վրացական մի Միացյալ բանակ: Վարչութիւնը այդ ձեռնարկումը ընդունելություն է գտնում Տողովութիւնի Կողմից և Թթիլիսիի հայ Խոբալակները իրենց սովորութիւն հակառակ մեծ խանդավառությամբ մօտնում են Վարչութիւնի Կազմակերպված բանակը, որպես զինվորներ: Նպատակը պարզ էր. Կազմակերպել Երկու Տողովորդի Միացյալ պայքարը Պարսկական տիրապետության և Մրամատանակ Օսմանական առաջիրազակող բանակի դեմ:

Վարչութիւնը օգնում էր հայերին զինվելու, այդ գործին անմիջապես մասնակից էր լինում նաև Եսայի Հանան Ֆալալյանը, որը այդ օրերին իր ճանանակը մեծ մասմբ անց էր Կացնում Վարչութիւնի բանակում:

Ծնորիիվ ազատագրական գաղափարների Ֆավալյանը Հայաստանում և Պարսիքաղում սկսում են Կազմակերպվել հայկական գնդեր: Առաջին հայկական բանակը, Կազմակերպվում և հաստատվութ է Ֆրաբերդի մոտ, որը կոչվում է «Մեծ Սղնար»:

Երկրորդ ուազմական կենտրոնը դառնում է Ծովիր Մուտերքում մի փոքրիկ բերդ, որը կոչվում է «Փոք Աղնար»:

Երրորդ կենտրոնը դառնում է Շափանը:

Աշդունով ստեղծվում են երեք ուազմական ճակատ, պրվորական կենտրոններ: Այդ երեք կենտրոններում հաշվառում են շուրջ 20.000-ի հասնող զինված բարդիկ:

Օրինակ ՄԵԾ և Փոքր Աղնախներում հավաքվում են 120-
զինված մարդիկ, իսկ Ղափանում 7000-ից միքի ավելի:

Զինված այդ ուժին հրամանատարական կազմ է մասու-
կարարվում Վրաստանի հայերից, որոնք արդեն զինվորական
որոշ կրթություն ստացել են Վարստանդի բանակում։
Այսպես օրինակ Ղափանի զինված ուժերի հրամանատար
է ուղարկվում Դավիթ բեկը, որ իր հետ տանում է մոտ 30,
հոգի։ Այդպիսով 1722-23 թվականներին Այունիքի, որը
ուրիշ կերպ կոչվում էր Ղարաբաղ, այդտեղի հայերը՝ նույն
կաթողիկոսի, Ավան յուղը աշու և ուրիշների գլխավորու-
թյամբ հյուսիսային Ղարաբաղում, իսկ Դավիթ բեկի գլխա-
վորությամբ Ղափանի շրջանում ապստամբում են Պարսկա-
կան տիրապետության դեմ և ապառում են Այունիքը։
Ըստը 7-8 տարի ապստամբները դառնում են իրենց երկրի
տերն ու անորենը։ Ապստամբ հայերի ու վրացական պե-
տության միջև ստեղծվում է հայ վրացական սերտ համա-
գործակցություն, որը մի կողմից ուղղված էր պարսկա տի-
րապետության դեմ, նրանից ապառվելու համար, իսկ մյուս
կողմից ուղղված էր Անդրկովկասը արշավող օսմանի-
ների դեմ։ Հայ-վրացական այդ միությունը սեծ հոգած
էր կապում ուսուական առաջիազարդ բանակի հետ։
Վախտանգը և նույնի կաթողիկոսը խնդրանք-խնդրանքի
հետեւից ուղարկում են Պետրոս I-ին, որպեսի նա շա-
պեցնի ուսուական բանակի առաջիազարդությունը և օգնությունը։
Պետրոս I-ը չէր զլանում կերակրել այդ մարդկանց ըրուի
խոսումներով։ Ուսուական բանակի արդեն նվաճել եղ
Վասպական աքերը- Շերբենքը, Գիլանը և հասել էր մինչև

բաշտ քաղաքը, առանց որեվէլ լորջ գիմադրության ուս .
դիպելու: Մնում էր Բագուն նվաճելը, ինքը՝ Պետրոս
անձամբ գլխավորում էր այդ արշավանքը, սակայն նա
Կովկասում քիչ մնաց, ընդամենը մի քանի ամիս, որից
հետո վերադառնում է Թուսաստան, կարգադրելով իր հրա-
մանատարներին շինուանալ կասպիական ափերից:

Այսուհետև ռուսական կառավարությունը բանակու-
թյունների մեջ է մտնում Հյուսեյին Շահի որդի Թահ-
մակի հետ, որը, գործում էր Պարսկաստանի հյուսիսային
մասում: Նրա հետ Թուսաստանը բանակությունների մեջ
է մտնում դաշինք կնքելու համար և դաշինք կնքելու գրա-
վականը Պետրոս I-ի կողմից համարվում էր այն, որ եթե
Պարսկաստանը խոստանա կիցել կասպյակի ափերի մրժան
գավառները, ապա ինքը Պետրոս I-ը իր բանակով կօգնի
Թահմակին, հետ կշպրուի ծոմանական բանակը և կազատի
Սպահանը աղջաններից: Սակայն Պարսկա թագավորությունը
չի համաձայնում և պահանջում է հետ քայլել գրավված
վայրերից:

Ռուսական արշավանքներից քիչ հետո ծոմանական սու-
բանը նոյնպես կազմակերպում է արշավանք դեպի Անդր-
կովկաս, ձգտելով ինքը տեր դանալ Պարսկաստանին
պատկանող այդ Թատերին: Ծոմանական բանակը մուտք է
Վրաստան, ձգում է նվաճել Վրաստանը, մտնում է Արարատ
յան դաշտը, Վրաստանի վրայով հասնում է Միջեւ Դակ-
ձակը, սակայն Դանձակը նվաճել անմիջապես ըր կարողանում,
պարունակում է և հետեւ շարունակում: Այսուամենայնիւ նրա
կորքերը ամրածում են Անդրկովկասը որով Թատերում:

Օսմանական զորքերը դրանից հետո 1724թ. հարձակված
են Երեվանի խանության վրա : Երեվանի խանը թույլ գի-
մաղրությունից հետո փախչում է և ամրանում Երեվանի բեր-
դում, թռչներով ամբողջ Տողովուրդը արշավող օսմանյան բա-
նակի արհավիրքին, բայց անսպասելի կերպով օսմանական
բանակին մեծ դիմադրություն են ցույց տալիս Կարգիր և Երե-
վանի հայերը : Կարգիրում հայերը կուտահել էին մեծ թվով
զենք և զինվաճ ուժ, որը անձնվիրաբար պայքարում էր օս-
մանցիների դեմ իր ծրկիրը պաշտպանելու համար : Կարգի-
րիները դիմում են Երեվանի խանին, որ օգնի իրենց, խանը
չի օգնում և օսմանցիները վերցնում են Կարգի : Այդպի-
սի ուժեղ դիմադրության օսմանցիները հանդիպում են նաև
Երեվանի հայերի կողմից : Երեվանի խանը փախչում է Միջնա-
բերդ և քաղաքը պաշտպանում էն Միայն հայերի զինվաճ
ուժերը : Ամբողջ Մի օր ամենակատաշի դիմադրությունից հե-
տո, նոր Միայն օսմանցիներին հաջողվում է քաղաքը վերցնել
հայերից : Հարց է ճագում, թե ինչո՞ւ բացատրել այդ : Բանն այն
է, որ հակառակ նրան, որ էջմիածինը դեմ էր ակատագրման
շարժման, սակայն Երեվանի խանության մեջ Տողովուրդը
համարում էր պատագրական շարժմանը և զինվում էր
իր պատության համար պայքարելու և հավանաբար հայ
ունեին Սյունիքի ապստամբական կենտրոնների հետ :

Երեվանի խանության նվաճումից հետո օսմանական
զորքերը ձգտում են անցնել գեար Սյունիքը և այնուհետո
էլ կասպիական ափերը՝ Բագուն գրավելու համար, սակայն
այդուժեղ նրանք դեմ են առնում Հարաբաղի հայերի ուժը
դիմադրությանը . Մի դիմադրություն, որ կազմակերպված էր

Գառձակրից Մինչեւ Մեղրի: Այդ ամբողջ ճակատով հայկական կան զինված ուժերը ստիպված եին դիմադրել օսմանական բազմահազար զորքին: Այդպիսի վճռական մուտքուին հջորածնի կաթողիկոսը հատուկ նամակ է գրում Եայրի Հասան Ջալալյանին, որպեսի նրանք անձնատուր լինեն օսմանական զորքին, չդիմադրեն օսմանյիներին և թույլ տան նրանց անցնելու դեպի կասպիրական ափերը: Իսկ հջորածնի առանձին ներկայացուցիչներ ապստամբ հայերի մեջ տանում էին իրենց քայլայիշ աշխատանքը, լքում և ջլատում առաջացնելով հայերի մեջ, Կորելով՝ Միասնոթյունը: Լքում էին առաջացնում նաև Ագուրին, զոկական այդ շրջանի առելորականները, միանալով օսմանական զորքի հետ և իրենց շահերը կապում էին օսմանական նվաճումների հետ: Օսմանյիները նույնպես շահագրգուված էին այդ կազմակերպմամբ: Նրանք իրենք մի քանի անգամ առաջարկել էին հայկական զինված ուժերին, որ ենթարկվեն իրենց և միայն դուրս գան ընդդեմ Պարսկաստանի և Թուսաստանի: Բայց այդ նրանց չի հաջողվում: Իրենց ազատագրության համար պայքարի ելած հայերը ամենամեծ եռանդով, բայց ամենաշավարին պայմաններում սկսում են մաքառել օսմանական բազմականին հղոր բանակի դեմ: Հայերը նորից դրմում են Պետրոս I-ին օգնելու իրենց, սակայն այդ օգնությունը չեն ստանում ուստական ցարրկություն: 1724 թվին Պետրոս I-ի և օսմանյան սուլթանության միջև կնքվում է մի դաշնագիր, ըստ որի նրանք բաժանում են Անդրկովկասը պաշտպանության սթերաների և Հայաստանը ու Վրաստանը, որոնց «Ապառագություն» էր գալիս Պետրոս I-ը, համաձայն

այդ բաժանման անցնում էին օսմանցիներին: Հայերը անտեղյակ կնքված պայմանագրին նոր և նոր պատվրակություն են ուղարկում շարի մոտ օգնություն խնդրելու: Պետրոս I-ը հայկական այդ պատվրակությանը հաճախարարում է համոզել հայերին, որ Եթե նրանք ուզում են ուսական տիրապետությունը ընդունել, թող գաղթեն և բնակչեն Գրիլանում: Որը նվաճան էր ուսական չորքի կողմից: Մա մի սոսկալի լուր էր հայերի համար: Այլ օգնություն այդ ժամանակ Պետրոս I-ը հայերին չուց տալ ի վիճակի չեղ: Այդ պատվրակությունը Պետրոս I-ի առաջարկությամբ ներկայանում է ապստամբ հայերին: Հայկական վիճակը ուժերի հրամանատարական խորհրդակցություն է տեղի ունենում, որտեղ նրանք պատվրակներին հանդիմանում են այն բանի համար, որ նրանք համաձայնել են Պետրոսի այդ առաջարկին: Հայերը իհարկե չեն գաղթում, որովհետև վտանգավոր էր այդ և թեկու հենց գաղթեցնելու համար և անհրաժեշտ էր ուսական գնդի ուժը, որպեսզի պաշտպանի գաղթող բնակչությանը պարունական և օսմանական հարձակութերը, իսկ այդ ուժը չկար: Հայերը կորականացեն մերժում են և Պետրոս I-ի մահից հետո նրա կնոջ Եկատերինա I-ի գաղթեցման առաջարկը և համար կերպով խնդրում են նրան օգնել իրենց ընդդեմ օսմանցիների և պարսիկների, թեև Եկատերինա Թագուհին շատ կոնկրետ կերպով խոսում էնք էր տալիս այդ օգնության մասին: Բայց այդ խոսումները մնում եին միայն թշթիք պատճեն: Այնպես, որ այս անքամ էլ հայերը օգնություն չեն ստանում: Հայերը համար ստեղծվում է շատ կրիստո-

Կան մղթենու: Մի կողմից նրանք ցարիկմի կողմից ոչ մը օգնություն չեն ստանում, իսկ մյուս կողմից նրանք ստրկված էին հերոսական պայքար մշել օսմանական ահեղ բանակի դեմ և պաշտպանվել պարսկական խաների հաճախակի հարձակումներից, որոնք ուզում էին իրենց տիրապետությունը վերահստատել Սյունիքում, այսինքն հայերի վրա:

Օսմանցիները ձգուում էին որքան կարելի է ջուտ հասնել Բազու, որովհետեւ այդ նպատակին հետապնդում էր նաև ռուսական զորքը, թեև այդ երկու պետությունների Միջև դաշնագիր էր կնքված: Սակայն օսմանցիներին խանգարում էր հայկական զինված ուժը Դարաբաղում:

1725 թվից ավելի հաճախակի է դառնում օսմանական բանակի գրոհը Դարաբաղի հայերի վրա:

Առաջին խոշոր ընդհարումը տեղի է ունենում ՄԵԾ Արշակի շրջանում: Այդ հարձակման ամենածակ հայերը դիմում են: Մի խորամանկ Միջոցի: Նրանք տեսնելով, որ օսմանական բանակը լավ զինված է և բազմաթարգի, հարուրաբում են, որ իրենք չեն ուզում կովել և ճամբա են տալիս օսմանցիներին: Օսմանական բանակը մտնում է Դարաբաղը և հայերը օսմանական զորքերին սպասարկելու պատըրվածով բաժանում են այն առանձին մասն խմբերի և բաշխում գյուղերի վրա, իսկ գրշերը կազմակերպում նրանց ջարդը: 5.000 հոգի օսմանական զորքըց կոտորվում են, իսկ դամբ Ֆանը հարված էր օսմանական բանակին: Դրանից հետո բավական երկար Ֆանակակ օսմանցիները պլում չեն հանդգնում հյուսիսային Դարաբաղի վրա հարձակվելու:

Այսուհետեւ 1726 թվին օսմանական կորքը մանուշէ Զա-
փանի շրջանը և գրավում է Միջարք Վայրեր : Օսմանցինե-
րի գրոհը Զափանի վրա որոշ խառնաշփոթություն է մոցնու
Դավիթ բեկի բանակում, լինում են առանձին հրամանատար-
ներ, որոնք լքում են Դավիթ բեկին ու անցնում թշնամու
կողմը, բայց Դավիթ բեկը հենված Խողովրդի օգնության
վրա համար ու հերոսական կովով մաքրումէ Զափանը
օսմանցիներից: Առանձնապես աշքի և Ընկույտ Հայի ծորի
ճակատամարտը, երբ Դավիթ բեկը համեմատաբար տակաչա-
թիվ կորքով մեծ ջարդ է տալիս օսմանական բանակին:
Հայերի հերոսական պայքարի հետեւանքով օսմանցիներին
չի հաջողվում Մի քայլ անգամ առաջ անցնել Զարաբարի
վրայով: Օսմանցիների արշավը դեսի կասպիսկան ավերը
կանելում է :

Ապստամբ հայերը թեև համար կերպով դիմադրում
են օսմանական հարձակվող բանակին և նույնիսկ հետ
եին շպրտում նրանց գրոհները, բայց ոչ Մի օժանդակու-
թյուն չստանալով ուսուական բանակից, նրա այդ դիմա-
դրությունը դառնում է օրիսամական և հուսահատական,
մանավանդ, որ հայերը կրկնում են նաև իրենց մրակ
դաշնակցի՝ Վրաստանի օգնությունից, որովհետեւ Վրա-
ստանն էլ չստանալով ուսուական օգնություն չկարողա-
ցագ դիմադրել օսմանցիներին, նվաճվում է վերջինների
կողմից, իսկ Վարստանգ թագավորը փարչում է ուսուների
մոտ: Բայսի այդ արգեն ուժի էր կանգնել Պարսկաստանը
Հյուսերին շահի որդի Թահմազ Միրզայի գլուխությանը
և հետապնդում էր աղվաններին դուրս քշելու և Սեթել

յան պետությունն իր նախկին տերիտորիայում վերականգնելու նպատակը: Իսկ ստեղծված այդ դրությունը ստիպում էր հայերին ելք որոնելու. Նրանք միայն իրենց ուժերով չեին կարող դրամարել և պարսիկներին և օսմանցիներին, մանավանդ որ ապստամբ հայերի մեջ էլ սկսել էր լրումը և առանձին շեկավարներ՝ մելիքներից նույնիսկ առելքականներից ուժանք անցնում էին Թղնամու Կողմը: Այդպիսի կրիտիկական շրջանում հայերը որոշում են դարձյալ միանալ պարսիկներին. այդ բանին ձգուում էր նաև Թագաժառանգ Թահմազը, որովհետեւ նրան հարկավոր էր այդ Օսմանցիներին դուրս քշելու համար: Եվ ահա Քաղաքական այդ նոր օրենտացիայի առաջին ազդանշանը տալիս է Դավիթ թեկը 1727թ: Նա հասուն պատվիրակության միջոցով դիմում է Թահմազին, որ արդեն շահ էր հայտարարվել, և առաջարկում է միացյալ կերպով պայքարել օսմանցիների դեմ: Թահմազը ընդունում է Դավիթ թեկի առաջարկությունը, նրա իշխանությանն է հաճանում Անդրկովկասի ամբողջ կրթուրա կան ուժերը, ճանաշում է Դավիթ թեկին որպես Պարարագի իշխանը, տալիս է նրան դրամ կտրելու իրավունք և ընդունում է Դավիթ թեկին որպես իր դաշնակիրը: Նոյն ուղրով են ըստու նաև մեծ և փոքր Սղնախների հայկական զինված ուժերը: Սակայն Պարարագի հայկական զինված ուժերը և նրանց ըրբանությունը երկար շեն կարողանում իրենց գոյությունը պահպանել:

1728 թվին մեղնում է Դավիթ թեկը: Նրանից մի երկու տարի ուշ մեղնում է նաև Եսայի Հասան Ֆալալյանը Գանձասարի կաթողիկոսը: Երկու ականավոր հրամանատարների մահը նաևր կերպով և անդրադառնում ապատամբության վարչական կուսակիր կրթուրա: Անոնեան ապատամբական զինված ուժի մեջ սկսում է

գալիքը ություն տեղի ունենալ՝ ազանցում է Դավիթ բեկի հա-
ջորդ և նրա սպառապետ Միքիթառը։ Դավաճանում են ուսանք
և անցնում թշնամու կողմը։ Այդ բոլորը տանում են ապառա-
բությունը դեպի ողբերգուական վարժան, բայթայվում են Աղ-
նարիները, բայթայվում է Դավիթ բեկի ստեղծած բանակը։
Սյունիքը նորից անցնում է պարսկական Ծի տակ։

Եհան այսպիսի վարժան է ունենում ապառագրական պայ-
քարի առաջին հոտապը, հայերի Մեջ։ Հակառակ այն բանի,
որ նա ունենում է ողբերգուական վարժան, բայց այնուամե-
նայնիվ Սյունիքի այս շարժումը հանդեսէ գալիս Մեր Ճո-
ղովորի պատմության մեջ, որպես մի փայլուն էջ. իր ազառա-
գրման համար մղված պայթարում։ Սյունեսքիների քսան
հակարանոց բանակը կակմած էր աշխառավոր գյուղապա-
թյունից։ Այդ գյուղապիները ոտքի էին ելեւ իրենց ազառա-
գրության համար, նրանց պայթարը ոչ միայն ողղված էր
պարսկական տիրապետության դեմ, այլ նաև բաների և բեկե-
րի դեմ, որոնք քամում էին այդ գյուղապիների արյունն ու բրունար։

Սյունեսքիների այդ ապստամբությունը անհաջողությամբ է
կերծանում, որովհետեւ Պարսկաստանը նորից ձեռք է բերու
քաղաքական այն դիրքն ու գերը Կովկասում, ինչ որ մի ժա-
մանակ կարողապավ ստեղծել Արա Տ-ը։ Պարսկաստանի այդ
վերելքին պակաս շաբուզ ջնպաստեց նաև ռուսիան շարիչ-
սի քաղաքականությունը։ Թեև Բուսաստանի և Օսմանական
պետության մեջ կնքվել էր մի գաշնագր՝ Անդրկովկասու կամ
Պարսկաստանը իրար մեջ բաժանելու, այնուամենայնիվ օրսակ-
ցությունն այս երկու բազոր պետությունների համար չէր
վերացվել։ Յարական կառավարությունը գրասկառ էր,

որ եթե ինքը չկարողանա իր ձեռքին պահել Անդրկովկասը. կամ Մերձ Կասպյան երկրները, ասք այլ երկրները կարող են անցնել Օսմանական պետության ձեռքը, իսկ դա կարգելաւեր հետագայում ուստահան առաջինազայտակը դեսի հարավ, դեսի Անդրկովկաս: Այդ տեսակետից էլ զարական իշխանությունը իր վերաբերմունքով սկսում է նպաստել Անդրկայրացյան հաստատված Թահիմակ Միրզային, այսինքն Անֆեյյանների թագաժառանքին, օգնում են նրան վերակացնելու իր ուժերը ընդդեմ աղվանների և օսմանական սուլա-նությանը: Թահիմակը Մականդրավազի (Պարսկաստանի հյուսիս արեվմոլան մասում) կազմակերպում է իր ուժերը, համարնորում է իր շուրջը պարսկական խաներին և դրու գալիս մի կոչմի աղվանների, իսկ մյուս կողմերս օսմանցիների քեմ:

1727 թվին Թահիմակը մոտ է գալիս Նազիր խանը՝ 5.000 կրնվորներով: Նազիրը սովորական ավագակ էր, մասնակցել էր ավագակայրն իսլմերի, գերվել էր, գերությունից փախել էր և կրազվում էր ավագակությամբ: Ավագակային ասպատակությունների ժամանակ ձեռք էր բերել որոշ փորձ, կազմակերպել էր իր ջոկատը և ահա այդպիսի ժամանակ նա իր Յառաջությունն է առաջարկում Թահիմակին և դառնում է Թահիմակի բանակի գլխավոր հրամանատարը: Նազիրը խանի ղեկավարությամբ սկսվում է հարձակումներ աղվանցիների վրա և 1728 թվին ազատում է Խորասանը աղվաններուց: Հետ են վերցնում Մեջրեթ և Հերաթ քաղաքները: Այս քառավոր հաղթանակից հետո Նազիրը խանը ստանում է « Թահիմակ Շուրի - խան » տիտղոսը:

1729 թվին աղվանցիները մի նոր պարունակում են

Կրում. Նադիր խանին հաջողվում է արդեն հետ վերցնել
Սպահանը, իսկ հաջորդ տարին, այն է՝ 1730 թվին Պարս-
կականից բոլորովին գույս են քում աղքաններին և, Պար-
կականում վերահաստավում է Սեֆեզյան գրքաստիան,
հանձին Թահմազ շահի: Դրանով իհարկէ դրությունը
շեր փրկվում: Պարսկաստանի Մի մասին այդ ճամանակ
տիրապետում էին օսմանյիները, իսկ մյուս մասը գտնվում էր
շարական Ռուսաստանի տիրապետության տակ: Նադիր խա-
նի առաջ խնդիր է դրվում հետ վերցնել նաև այդ մասերը:
Եվ ահա 1730 թվին սկսվում է պարսկա-օսմանյան
կորիչները, որոնց ընթացքում Նադիրը մեծ հաջողություններ
է ունենում: Նոյն թվին Մի ճակատամարտ է կազմակերպու-
թիքը շահը, որտեղ նա կատարյալ պարտություն է կրում
օսմանյիներից: Ահա այս պարտությունն առթիւ դառնում,
որպեսզի Նադիր խանը գահընկեց անք Թահմազին և նրա
տեղը դնի Թահմազի որդի Փոքրահանակ Աբասին՝ 1732
թվին: Փոքրիկ Աբասը իհարկէ Նադիր խանի ձեռքին
դառնում է Մի իհաղակիք: Փաստորեն երկրի ամբողջ տնօ-
րենը լինում է ինքը Նադիր խանը: Եվ նա շարունակում
է հարձակումները օսմանյիների վրա և Մի երկու տարվա
ընթացքում կատարյալ պարտության է մատնում օսմանյ-
ներին: Այսպես օրինակ՝ 1733 թվին նա պաշարում է Բազ-
դատը և վերցնում է: 1735 թվին Նադիր խանը պաշարում
է Երեվանը, Թբիլիսը, Գանձակը և այդ բույր քաղաքները
նորրդ հետ է վերցնում օսմանյիներից: 1735 թվին Եղան-
դի և Աղուրակի Մեծ Ընկան զերում տեղի է ունենում
պարսկա-օսմանյան վերջին ճակատամարտը: Այսուղ օմա-

նական բանակը կատարյալ պարունաքան է մատնվում և հետ
է շպիռվում: Այդ վճռական ճակատամարտորս հետո այլև
օսմանյիներին մնում էր հետ քաշգել և խաղաղություն
առաջարկել: Անդրկողմանը կրկին ընկնում է պարսկական տի-
րապետության ներքո: Ըստ այդ ժամանակներին հետ են
Քաղվում նաև ցարական զորքերը, Բագրի, Դերբենտորս
և Ռաշտից: Այդպիսով 1735 թվին Պարսկաստանը ոչ միայն
կարողանում է դուրս քշել և պարտության մատնել ազգա-
ներին, այլ վերականգնել պարսկական պետությունը, իր
նախկին սահմաններով:

1735 թվին պարսկաների և օսմանյիների մեջ կնքվում
է մի դաշնագիր, ըստ որի վերականգնվում են Պարսկաս-
տանը և օսմանյան պետության միջև երես սահմաններու-
մու հաստատվել էին 1638 թվի ծահ Սեֆիր և Մորաշ
Սուլթանի մրգե:

1736 թվին Մողանում Նադիր խանը հայտարարվում է
Նադիր շահ և վերջ է արգում սեթեվյան դինաստրային:

Նրա շահ հայտարարվելը կատարվում է վերին աստիճանի
խորհրդավոր և արտասովոր կազզով: Նրա շահ հայտարար-
վելու պատմությունը մանրամասն կերպով գրել է Արքահամ
Կրետացին, որն այդ ժամանակ եղել է իջորածնի կաթողիկոսը
և անմիջական մասնակություն է ունեցել Նադիրին շահ
հայտարարելու արարողություններին:

Նադիր շահը Պարսկաստանում հաստատում է ուժեց
մի պետություն: Նրա ժամանակ պարսկական պետությունը
բազականին կենտրոնացան բնույթ էր կրում, ուժեղանում
է նրա վերը բաղաքական կյանքում առաջաւոր Վիրայում:

Աղպիսի մի ուժեկ պետության ժամանակ աշխատագրական
 լարձումը հայկական բրահմանության ՄԵջ ճավանկել շեր
 կարող, այդ է պատճառը, որ մոտ երեսուն տարի պատա-
 կրական շարժումը, իր ազատության համար մղվող պա-
 քարը հայ իրականության ՄԵՋ տեղառվություն է ապրում:
 Դետք է անել . որ Նադիր շահը հայերի նկատմամբ տանու-
 ի, մոռանված որոշ քաղաքականություն, որից երեսում է . որ
 Նադիր շահը հաշվի է առել հայերի ազստամբությունները
 պարսից տիրապետության դեմ և առ հասարակ հայերի վերա-
 բերմունքը զեպի Պարսկաստան: Այդ քաղաքականությամբ նա աշխա-
 մում է պրեկ դեպի Պարսկաստանը եղած այն բացասական վե-
 րաբերմունքը, որը եղել է պարսկահայերի ՄԵՋ: Ամենը
 առաջ նա աշխատում է բարեկամական հարաբերություն-
 ներ հաստատել հայկական հոգեվորականության հետ, նայ
 և առաջ է ջմիաննի հետ: Աբրահամ Կրետացին, այդ ամսա-
 նակի կաթողիկոսը, դառնում է Նադիր շահը ամենամասիկ
 մարդկանցից ՄԵՋը: Նադիր շահը հասուն որպես գան-
 չուու է Շրան իր մոտ և խորհրդակցում զանազան խնդրու-
 թի շուրջը, 1735 թվի պարսկա օսմանական հաշուության
 պայմաններից ՄԵՋ է այն էր, որ Պարսկաստանը և օսմա-
 նակների միջև պատ կերպով առեվսուր կառարժի: Այդ
 առեվսուր կազմակերպման գործում Նադիր շահը խորհրդակ-
 ցում է կաթողիկոսի հետ և խորհուրդ է տալիս, որ նա կա
 մակերտի հայ առեվտրականների պատ երթեվեկությունը:
 Նադիր շահը հետ է Վերադարձնել տալիս Էջմիաննի այն
 կալվածքները ու գյուղերը, որոնք խլվել եին նրանից: Այս-
 հետև Նադիր շահը առանձնակի մուեցում է ունենում Պա-
 րսկադի թերիքներին: Նա հաշվի է առնում այն ապստամ-

ոթյանները, որոնք կատարվել էին Ղարաբաղում, պարսկական սիրակեռության դեմ: Ահա այսուղ, որպեսի ապահով մելիքների խոնարի հայտակոթյունը, Նադիր շահը վերականգնել է մելիքությունները: Նա Ղարաբաղում կազմակերպում է հինգ մելիքություններ, որոնք կոչվում են Խամսայի մելիքություններ: Այդ մելիքություններն են՝

Առաջինը - Գյուլիստանի մելիքություն, որը գտնվում է Դանձակից Մի Քիշ գետի հարավ Մոավ լեռան ստորոտում:

Երերորդը՝ Գյուլիստանի Քիշ գետի հարավ՝ Ջրաբերդի մելիքություն՝ Թարթար գետի հովտում:

Երրորդը՝ Խաչենի մելիքությունը, Խաչեն գետի հովտում: Չորրորդը՝ Գրանից գետի հարավ Շուշու մուտքքը՝ Վարանդի մելիքությունը:

Հինգերորդը՝ Վարանդից գետի հարավ Դիզակի մելիքությունը Այս հինգ մելիքություններն են, որը ստեղծվում են Նադիր շահի ձեռներեցությամբ: Այդ հինգ մելիքություններն իրար հետ կապվում են դաշնադրական կապերով, և ստեղծվում է այդ հինգ մելիքությունների միություն: Իսկ Սյունիքի հարավային մասերում՝ Շափանում մելիքությունները չեն կազմակերպվում այս ձեզով, այլ նախկին մասը մելիքություններն են Մուս, որոնք Քաղաքական կյանքում որեւէ դեր այլին չեն խաղում: Խամսայի մելիքները իրենց մելիքություններում բացարձակ խնքնորուց, խնքնիշխան մարդիկ են, ունեն իրենց սեփական բանակը: Ամեն Մի մելիք կարող էր դուրս բերել մոտ հայար պինդոր: Այդպիսով Կրանք կարողանում էր իրենց երկիրը պարունակել հարեւան խանությունների հարձակություններից:

Այսիր շահը ստեղծելով այդ մելիքությունները եւստ էին որոց նպատակադրությունից : Նախ և առաջ այդ մելիքությունների Միություն ստեղծելով ամրապնություն էր այդ մելիքների պաշտպանութափությունը հարեվան բանություններից , իսկ այդ մելիքները հանձն էին Ենթարկվություն այդ բանների հարձակութերին : Պաշտպաններով մելիքություններին բաներից , նադիրը աշրատում էր գրավել Հարաբերի հայկական բնակչության համակրանքը դեսի իր պետությունը : Աս մի քաղաքականություն էր, որ վարում էր Նադիր շահը : Բայս այդ մելիքություններին ստեղծում են մի տեսակ արքելակից հանգանանքներ , իրենց շրջապատի բանությունների սեպերատով ձգուուները առաջ տանելու , ճավախելու համար :

Ահա այդպիսի քաղաքականություն էր տանում նադիր շահը հայկական բնակչության նկատմամբ , հայկական քեողական այդ ուժերի նկատմամբ : Այդպիսի պիտի շարունակում է Մինչև 1750-ական թվականների դժուրը : Մինչև այդ Պարսկաստանը ներկայանում էր որ պես ուժեղ , կենորոնացած մի պետություն , բայց 1750-ական թվականներից սկսած Պարսկաստանը բայցում է իր նախկին ուղին՝ կազմակության , անկօման ուղին : Հենց այդ ժամանակներից է , որ նարկ հայկական բրագանության տեղ սկսում է արձարձակել Հայաստանը օտարերրութրապետությունը ապատելու գաղափարը :

1760 թվին սկսվում է ապատագրական պայմանը երերորդ հոտպար : Այս անգամ սահման շարժում գլուրի սնցուում էն հնդկական առեւտրուկտութերը : Հայաստա-

Առև 18-րդ դարում ստեղծվել էր բազմականիք կազմահերթ -
 կան հայկական առեվորական ջաղաթ: Այդ հայ առեվորա
 կանները տեղափորձել եին Կալկարայում, Մագրասում և այլ
 քաղաքներում: Այդ առեվորականների մեծագույն մասը Պար-
 կաստանից էր գնացել Հնդկաստան 17-րդ դարի վերջին -,
 18-րդ դարի սկզբին: Մի ժամանակ Հնդկաստանում հայ առե-
 տրականները մրցում եին անգլիական առեվորականության հետ.
 Նույնիսկ ծրանց հետ մրցություն եին կազմել: 18-րդ դարի
 կեսերին գրոթյունը բռնորոշին վորովում էր: Մրցակցությունը
 այնքան սրբել և խորացել էր, որ անգլիական կապրություն
 առեվորականությանը գործ եր քջում շուկայից: Երկրորդ հայ-
 գամանքն էլ այն էր, որ Հնդկաստանի հայ առեվորական
 տարրերու բազմականին մոտիկից Տանոքանում եին Եվրոպա-
 կան քաղաքական մուայնության, տեսնում եին Եվրոպայում
 կազմակերպված ու կայսրակերպվող ազգային բորժուական
 պետությունների օրինակը, որպիսի հանգամանքը իրենց մեջ
 էլ առաջ էր բերում հայրենասիրություն, ազգային պետություն
 ունենալու ձգություն: Եվ ահա հնդկահայ առեվորականու-
 թյունը սկսում է մոտածել իր սեփական երկր, պետություն,
 շուկան ունենալու մասին, որտեղ ինչքը կը լիներ տնօրինուր-
 իսկ այս սեփական երկրին ու շուկան հնդկահայ առեվորա-
 կանության համար կարող էր լինել Հայաստանը: Այսպիսի
 նկատառություն է, որ Հնդկաստանի հայ առեվորականության
 մեջ սկսում է արձարձնական և տարածվել Հայաստանը ուստի
 պետությունից ազատելու և հայկական պետության ստեղծելու
 միջով, գաղափարը: Ահա այդ գաղափարի իրականացման առա-
 ջին կազմակերպիչը հանդես է գալիք Կարկաթեսի Մի հայ

պուլաբանիկանի գավակ Հովսեփ քմբեր : Հովսեփ հայոց
թողել է անգլերեն լեզուով մի գիրք, որի մեջ նա պատ-
մում է իր ամբողջ գործունեությունը : Նա այդ գրքում պատ-
մում է, որ իր հայրը աշխատել է Հովսեփին անպայմանորեն
դարձնել առելքորական . իսկ ինքը՝ Հովսեփը ոչ մի ձգութ
չի ունեցել առելքորով պաղպակու : Հնդկականիք ; Հով-
սեփը ձգուել է կրնական դառնալ : իրեն՝ Հովսեփի մա-
տեն ազդեցություն է թողել Զաքարի Դավիթ բեկի առա-
տամբությունը պարկահան և օսմանական տրամադրություն-
դեմ : Այսինքն այն ակատագրական շարժումը, որը տեղի
էր ունեցել հայերի թե 1722-1730-թվականներին :
Հովսեփը ուսրվելով Դավիթ բեկի քաջազործությունները
պատմությամբ, նպատակ է դնում դառնալ կրնական
և նվիրվել Հայաստանի ակատագրական գործին : Մեծ վեճեր
են տեղի ունենում Հովսեփի և իր հոր միջև : Վերջուն
հայրը համաձայնում է, որ որդին կրնական դառնա,
տակայն մի պայմանով : որ որդին նյութական որեսէ պա-
հանի չներկայացնի հորը : Հովսեփը համաձայնում է և
կառու է մի արկածներով լեռու ճանապարհությունը :
Նա վարձվում է մի նավում որպես տեխնիկական ուրախու-
յա այդպիսով ընկնում է Անգլիա : Անգլիայում նա ձգում է
կրնական կրթություն սովորալ և պատահական մի դրս-
քանու հաջողություն է նորան Տանըթանալ մի պարեկի անձ-
նափորության հետ և նոր մթուցով օգնել կրնական
դպրու, որտեղ և սովորում է իր կրնական կրթությունը :
Այդուհետ վերջապահությունը հետո նա անմիջապես ուղեվորվում
է Հայաստան : Ին լրում է 1760 թիւն : Նա Հայաստան

Հ գալիս Թյուրքիայի վրայով։ Հայաստան մտնելիս նա ունեց
արդեն պատրաստի քաղաքական մի ծրագիր - Հայաստանի
պարսկական և օսմանական տիրապետությունից ազատելու մասն։

Հովհանքի իմրենի մոտ, ըստ նրա Յրագրի, ազատագրումը
պետք է տարածվեր ոչ միայն Պարսկահայաստանի վրա, այլև
Թյուրքահայաստանի վրա։ Այդպիսով նա դնում էր հայերի ան-
բողջական ազատագրումը օտարերկրյա Ծիր, այդ առաջին
կարեվոր հանգամանքն էր։

Երկրորդ՝ այդ ազատագրության համար հույս չպետք է
կապել դրսի օգնության հետ, օտարերկրյա մի թշն որ հեռակոր
պետության օգնության հետ։ Իրենց ազատագրումը պետք է
իրենց ձեռքը վերցնեն հայերը, բայց ոչ մեկուսացած։ Հայերի
հոսակի ժաշնակիցը որը կարող էր լրել զայ Վրաստանն էր
և ահա Հովհանքի Յրագրում գրվում էր հայերի և վրացին-
րի միացյալ ապստամբությունը օսմանյան և պարսկական
տիրապետության։ Դեմ և Հայաստանի ու Վրաստանի ազա-
տագրումը և այդ շարժման գլուխ պետք է կանգներ վրա-
ցական թագավոր Հերակլը, որպես ուշամականացես պատ-
րաստ ուժ ունեցող։

Երրորդ՝ հազքանակի զեպքում ստեղծելու էր հայ
կրոնական միացյալ պետությունը։

Ահա այն Յրագիրը, որով Հովհանքի իմրենը գալիս էր
Հայաստան գործելու համար։ Օրին գործունեության կամ
նրա Յրագրի հետ համեմատած քսրենի Յրագիրը ուներ ակն-
քանի առավելություններ և ունի իրեք։ Նաև այն, որ
նա կապում էր հայ Տողովրդի ազատությունը իր հայե-
ցան Տողովրդի միացյալ գործունեության հետ։

Երկրորդ՝ այն, որ նա Տողովորդի աշատագրման գործը
դնում էր Տողովորդի վրա, չեր կապում հեռավոր ինչ որ
ուժի օգնության հետ, սա դրական է այն իմաստով, որ նա
վերջի վերջու հրաժարվում է այդ խթութեականությու-
նոց: Բայս այդ Հովհաննեականությունը այդ Տրագորը, նա
Միաժամանակ դնում էր նաև Մի խնդրի, որպեսոր ապա-
հովվի հաղթանակը, որպեսոր ստեղծվի այդ ուժը, հարկավոր
էր պինել Տողովորդին: Նա գոնում էր, նախ պետք պատ-
րասպանել, պինել Տողովորդին, սովորեցնել զենք գործադրելը,
գորոցներ բայց, ուր Մարդկանց դաստիարակել հայրենամբու-
թյան և աշատասիրության գարափարոց, լուսավորել Տողովոր-
դին, կազմակերպել ապատամբության համար անհրաժեշտ գիտակից ու և այս ազատամբութել:

Ես նախ և առաջ սկսում է գործել Թյուրքահայաստանուն.
Թյուրքահայերի մեջ: Անձում է Սույ և Օջում սկսում է
շրջել գյուղի գյուղ, յունի գյուղակների հետ, որպեսոր
նրանք դաստիարակեն բենց որդիներին ազատության համար
պայմանագրելու: Օջում է Մինը գոտում է իր պինակիցը, որը
կարող էր սեծ գեր խաղալ այդ գործուն: Իս Մուրբ Կարա-
պետ վանքի վանահայր էր: Նա հակառակ նայ հոգեվորա-
կանության մեջամասնության ձգութեանը և հայագիտների,
համակրուտ Հովհաննեականությունը գաղափարների և իր վրա առ-
նում աշխատանքը՝ Տողովորդին պինելու համար և սկսում
է Մի եանդուն գործունեություն:

ՔՄինը Օջում տարածելով ապատագրական պայման
սաղմերը և թղթելով գործ այդ վանահայրը, ինքը գալի
է Քջարամիքի:

հջմրանում Հովսեփ իմրէիք քաղաքական մոլորի մէտ Ֆանոթանալոց հետո Մերձում են Նրա գաղաքարները, Ինգեպորականությունը շի ընդունում Հովսեփ իմրէիք և հայտարարում է Նրան, որպես բարտարնդիր, արկածախնդիր սնձնավորություն։ հջմրանի այդպիսի գործը ունի իր Միջարք պատճառները։

Նարի և առաջ հջմրանինը տնտեսական լայն կապեր և արտոնություններ ուներ. թե օսմանական քաջայոթյունների հետ և թե պարսկական իրանությունների հետ. Նա զարթնում էր, որ Հովսեփ իմրէիք աջակցելով անհաջողության դեպքում կը կորցնի այդ կապերը և տնտեսական այն զահոյթը, որը նա ստանում էր այդ վայրերից։ Երկրորդ, այդ ժամանակ, հատկապես հջմրանի հոգեպորականությունը և ինքը կաթողիկոսը սերտ կերպով կապահ էին Երեվանի խաչի հետ, ինչպես և այլ խանությունների հետ և որոշ շահով հոգանակորպում էին պարսկա խաների կողմից։ Բազմաթիվ դեպքեր կան, երբ պարսկական թեոդալական տպարար, խանը, դատարանը, ինքը շահը պաշտպանել են հջմրանի վանքի շահերը ընդդեմ աշխատավորության։ Կարելի է բերել Մի քանի օրինակներ։ հջմրանի կալվածքներին կից Խաթունարքի և հջմրանի Միջեւ կա Մի տեղամաս, որը կոչվում է Քյութափա (Մոխրաբլուր), ահա այդտեղ թնակություն է հաստատում՝ թուրքական Մի տեղ։ Այդ բանը հջմրանին դուր շի գալիք, որովհետեւ Ճեղուու շէր Նրան։ հջմրանին շանհանում էր Նրանց քշել այդտեղից։ Եթ խանը, եթ պարսկական դատարանը այդ վեճի ընթացքում պաշտպանում են հջմրանին. ըսդդեմ մահ-

Թեղական գյուղապետության: Մի որիշ փաստ և կարծէ
է թերեւ: Օշականի շրջանում գյուղապետուց բոլքան մա-
սա-
յած վայրերը մշակել են, բայց որովհետեւ նոր օշա-
կած այդ հողամասերը կրկ են հջմիածնի կալվաճքներին.
ապա հջմիածննը ցանկանում էր պատել իր կալվաճամերձ
հողերը իրեն համար ոչ ցանկալի բնակիչներից: Այստեղ նոյն-
պես պարսկական խանը և դատարանը պաշտպանում են
հջմիածնին և իրավունք են տալիս հջմիածնին քանդել գյու-
ղապետությի տնօքած այգիները և քշել նրանց այդ տարածություն-
ներից:

Սույնիսկ եղել են դեպքեր, եռք խանի և դատարանի հող-
մրց հջմիածննը պաշտպանվել է թեկերի, պարսկէ պանդական-
ների հետ ունեցած զժույցուների վեճերի ժամանակ:

Այս փաստերը ցույց են տալիս, որ հջմիածննը որպես
հոգեվորականության կենտրոնատեղին, հայաքաղաքայրը մեր-
ձեւել էր պարսկական այդ պաշտոններինը և իրեն կատ
շեր զգում այդ տեսակետուր: Ի վերջո հջմիածննը այն խա-
մանակ հանգեց էր զայիս որպես առավել խոշոր կալվաճա-
ստր: Հովսեփ իսրին Տրագիրը վարեցնում էր հջմիածնին
այդ կալվաճքներից պրեգուլ սպառնալիքով:

Ահա սրանք են այն պատճառները, որ դրվում են հոգե-
վորականության, հատկապես հջմիածնի վանականությանը.
բայց ասած դիրք բանելու գետի Հովսեփ իսրին Տրա-
գիրը և նույնիսկ թշնամական դիրք բանելու գետի նա:
Այդ հոգեվորականները իրենց թշնամական դիրքը բայցում
են նրանով, որ իբր թե այդպիսի մի շարժում կօրոգոր պար-
սկաներին և օսմանցիներին հայերի դեմ և հայերի գուությունը

անտանելի կարող է դառնալ և կոտորածների առիթ տալ: Նրանք
ի հարկե երբեք չերե ցանկածում, որ այդ ապստամբություն-
ները տեղի ունենան: Իջմիաձննը այնպիսի տեսակետ էր պաշտ-
պանում, ըստ որի Հայաստանի ապառագրումը կարող էր տե-
ղի ունենալ դրսի ուժով, մի քրիստոնեա մեճ պետության
ուժով, առանց հայերի անմիջական մասնակցությանը: Հով-
սեփ հմբել մերժված և հարաճված իջմիաձնի կողմից գնում
է Թերիլիր Հերակի մոտ: Ծանոթացնում է նրան իր ճրագրի
հետ, երապերում է նրան իր գաղաքարներով: Խօֆ Հերակիլ
խոսումներով սկսում է Կերակրել Հովսեփի հոմքին, սա-
կայն Հովսեփ հմբնը տեսնում է, որ գործը մնում է
Միայն խոսումների սահմանում: Բանն այն է, որ Հովսեփ
ի միջը բայի քաղաքական ճրագրի առաջադրումից, նա
կոնկրետ միջոցներ է նշում, ինչպես օրինակ՝ պինդորա-
կան դպրոցներ բաց անելու հարցը, պինդորական երամա-
նատարական կազրեր պատրաստելու հարցը, ճողովրդին
պինելու հարցը և այլն: Հերակիլ հավանում է նրա ա-
ռաջադրած խնդրներին, և ի սրտե ցանկածում էր իրա-
գործել այդ ճրագրրը, սակայն ամեռող հարցը նրանումն
էր, թե որքան ի վիճակի էր Հերակլու կազմակերպեց այդ
գործը: Վրացական պետությունը այդ ձաւութեա ապրու-
մէր Ֆանք պայմաններում, Քայքայվումներ երկրի ունենու-
թյունները, Քայքայվում էր պետական ապարատը, օպրաստո-
ւում ավանդականությունը, կորունդեր և ապահանան ունենու-
թյունները, և որ ամենից կարենը էր, պահանջանեցերը,
երիտաթները և ապառութերը, Քայքելով իրենց փոք-
րի կայզածքներում, որենի մասնակցություն Հերակի

կործնելությանը շերն ուզում չուց տալ: Ավելին, նույնիւն
շատ գեղաբեր շերն էլ ճանաշում Հերակլի իշխանու
թունը: Դրությունն այն աստիճանի էր հասել, որ Հերակլ
ինքն էլ իր հոր Միջոցով դիմել էր Կարրի օգնելու իրեն
պատվելու պարսկական տիրապետությունից: Ահա այսպի-
սի Վրբակ էր Վրաստանում և այդ Վրեակը թույլ չէր
տալիս Հերակլին գործնական Քայլերի դիմելու առաջա-
ռը Քաղաքական ծրագրություն համար:

Այդ բանը Հովսեփ իմրենի թվում էր մի տեսակ
արհանդիքանք իր հասցեին: Հովսեփը Կարճում էր, որ
Հերակլը կամ Վրացական արքունիքը արհանդիքում է իր
մտքերը, գաղափարները, որովհետեւ նա եկել էր դատար-
կաձեռն, Միջոցներ չուներ, հանձնարարականներ չուներ և
այլն: Իսկապես Հովսեփ իմրենը եկել էր Հայաստան, որպես
սուկական Մի գործիշ, առանց որեվէ Միջոցներ ունենա-
լու և նա շատ ճիշտ կերպով արտահայտել էր իր մոգերը
այդ խնդրում: Նա հայտարարել էր, որ նա սուկական Մի
կինվոր է, որը ցանկանում է իր ուժերը նվիրել հայրենի-
քին, Տողովրդին: Բայս իր սեփական Կյանքից և ձեռ-
քերից նա ուրիշ բան չունի: Այդ հանգամանքը ստիպում
է իմրեն մռածել այդ մասին: Նա 1761 թվին աշխանք
թողնում է Թբիլիս և գտնում Կոնգոն, Միջոցների մա-
սին մտածելու և հանձնարարականներ վերցնելու:
Կոնգոնում էլ նրան Միջոցներ շեն տալիս և նա Կոնդո-
նից անցնում է Պետերբուրգ: Այդ ժամանակ ուսուական
պետության գլուխ անցել էր Եկատերինա Ռ-ը: Հովսեփ
իմրենի ձգուումն էր Կապակ ուսուական արքունիքի հետ

և նա կապուժ է, նույնիսկ ստանում է հանձնարարաց ան
սեր Հերակլի հասցեով, որպեսզի Հերակլը օգնի և
գլուխողի Հովսետի. Ծրագրի իրագործումը:

1763 թվին Մենք գարձաւ Հովսեփ իմրենին տեսնում
ենք Թքիւրութ հանձնարարականներով. որու բոստումնե-
րով: Այսուղ սակայն դրությունը բոլորովին չի փորփում
Հովսեփ իմրենի նկատմամբ: Նոյն սառը վերաբերմունքն է
նկատվում Հերակլի կողմից: Շատ ափսոսու Հերակլը այն
բանի համար, որ իր ակագ որդին կենդանի չէ, թե չէ նա
կռւխավորեր գործը և կիրագործեր իմրենի քաղաքական Ծրա-
գիրը, իսկ ինքը Տերացած է և հնարավորություն չունի գու-
րավորելու այդ շարժումը: Ահա այսպիսի հանգամանքներում
ճնշում է գործ դնում Հերակլի վրա նաև հջմրանինը, որտեղ
այն համանակ կուրողիկոն էր ընարդել Արմյոն երեքանուրին:

Ահա այս անձնագորությունը, որը բայց իր պաշտոնական
ժիրքի, Ֆուժիկ անձնագորություն էր Հերակլին, գրում է
մի նամակ և այդ նամակում բնդրում Հերակլից, որ գուրու
վուարի Հովսեփ իմրենին, Հնդկաստանի եկած այդ «քար-
տարինդրին»: Ի հարկե այս հանգամանքը չէր կարող դեռ
շրացալ, Հերակլ կանցում է Հովսեփ իմրենին իր մոտ
և առաջարկում է հեռանալ: Հովսեփ իմրենի և Հերակլի
հարաբերությունները մի քիչ սառել են: Այդ հարաբերու-
թյունների թուլակման մի առիթ ևս կար: Հովսեփ իմրենը
իր թողած գրքում պատմում է, որ Հերակլը ցանկանում էր,
որպեսզի Հովսեփ իմրենը ամուսնանա իր աղջիկներից մեկի
հետ, մինչդեռ նա հրաժարվում է, որովհետև ուներ կիսու
զավակներ: Ի հարկե սա առիթ էր, որ նպաստեր Հերակլի

Ղերաբերմտեղի սանցանը : Հովսեփ հմիկը ստրպառքին Աղջնել Թրիմը , որից հետո նա իր գաղափարները առաջ տաշելու համար հույսը կապում է Ղարաբաղի մելիքների հետ : Մոտավորացես 1763 թվին նա մոնումէ Ղարաբաղ : Ինչպես Օրին , այնպես էլ Հովսեփը որոշ հույս ուներ , որ Հայաստանի պատագրության գործի մեջ գեր կարող էն բաղադր Ղարաբաղի մելիքությունները : Այդ մելիքությունները դիտվում էին որպես ինքնուրույն հայկական իշխանություններ , որոնք իրենց ծովում կարող էին պատրաստել այն անհրաժեշտ ուժը , որը հարկավոր կրներ հայաստան պատելու համար : Եկ ահա այդ հույսերով Հովսեփը զնում է Ղարաբաղ , սակայն Ղարաբաղից ևս որեցէ հուսագրություն ստանալ չեր կարող : Նա մոտավորացես 7-8 տարի ապրում է Ղարաբաղում , բայց այդ 7-8 տարվա ընթացքում նա կոնկրետ որեցէ ձեռնարկության դրմել չի կարողանում : Որպեսուի հասկանալի լրիք , թե ինչու այդտեղ էլ իմինը անհաջողություն է ունենալ , հարկավոր է ճանորդանալ այն ժամանակի մելիքությունների գրության հետ : Ինչպես տեսանք Նադիր շահի ժամանակի այդ մելիքությունները կազմում էին մի միություն , սակայն Նադիր շահի մահից հետո գրություններ մի քիչ փորսում է : Նախ և առաջ 18-րդ դարի կեսերին , 1740-ական թվականների վերջերից սկսած , Ղարաբաղի կաշուային մասում սկսվում է հիմնադրվել մի բանակություն , որը անվանվում է Ղարաբաղի կամ Փանահիրանի բանություն : Այդ բանության հիմնադրին էր թուրքական մի շեղի ցեղասպետ Փանահ ադունակ : Ժամանակի ընթացքում նա Կարողանում է ձեռք բերել մի շարք շրջաններ , ինչպես և բանի պաշտոն : Նա

Կաբանական շրջանում իր տիրապետությունը ոչ թե սկսում է Ընդարձակել դեպի Ծովերը, այլ դեպի տափաստանները։ Մոտավորապես 1750-ական թվականի սկզբին նա կարողանում է դաշտային շրջանի զգայի Տասը նվաճել և կցնել իր խանությանը։ Նա դեռևս ուստի արևոտ անում առաջանալ Ծովերը, թե արդեն նա հանդես էր բերում ձգուում իր իշխանությանը Ենթարկելու նաև Եղուային Դարաբաղը։ Եվ ահա մի առիթ հնարավորություն է տալիս Փանահ խանին առաջ խաղալու դեպի Եղուային Դարաբաղը։

Կարանդի մեջիք Հովսեփին սպանում է իր եղբայր Շահնազարը և Մելիքությունը վերցնում իր ձեռքը։ Այդ դեպքը մյուս Մելիքների կողմից դիտվում է որպես վաղեմի սովորությունների խախտում, որպես շարագործություն և նրանք՝ Գյուխտանի, Ֆրաբերդի, Խաչենը և Դիլայի Մելիքները Ֆրայյալ Կերպով հարձակվում են Կարանդի Շահնազարի վրա, որպեսի պատճեն նրան։ Շահնազարը պաշտպանվելու համար դիմում է Փանահ խանին և նրանից օգուտթյուն խնդրում։ Այս արդեն բավական էր Փանահ խանին, որպեսի նա օգտագործի Խամսայի Մելիքների մեջ Տագան խուզությունը և նվաճել նրանց երկրները։ Ծնորիկ այն հագամանքի, որ Կարանդի Մելիքությունը գտնվում էր Դիլայի և մյուս երեք Մելիքությունների միջև Փանահ խանը ինձկվում է Կարանդի Մելիքությունը՝ կտրում է Դիլայի Մելիքությունը մյուս երեք Մելիքություններից, շեղուում է նրան և սկսում է առանձին-առանձին հարվածը այդ Մելիքություններին։

Այդ մրցակցության ընթացքում Փանահ խանին հա-

յողվում է նվաճել ամբողջ Խաշենի Մելիքությունը։ Այդպիս սովորութանից շարքից նաև Խաշենի Մելիքությունը։ Մնում են Գյուլհստանի և Ջրաբերդի Մելիքությունները։ Այնուհետև Փանակ խանը իր դիրքերը լեռնային Ղարաբաղում բազականին ուժեղանալուց հետո Ղարանդի Մելիքությունից ստանում է որոշ տերրիտորիա, 1752-1754թթ. Կառապուցում է Մի քերդ, որ հետագայում ստանում է « Ծուշի » անունը և դարձնում է այդ խանության կենտրոնը։

Ծուշի քերդի գառուցումը ավելի է ամրացնում Փանակ խանի դիրքերը Ղարաբաղում և Փանակ խանի իշխանությունը գալում է Մի սպառնալիք հայկական Թշնաման Մելիքությունների համար։

Ահա այսպիսի իրադրությունն էր Ղարաբաղի Մելիքությունների մոտ, եռք Հովհանքի իմրենը հեռանում է Թբիլիսի և 1763թվին գնում է Ղարաբաղ։ Մոտ 7-ից 8 տարի նա ապրում է այդ Մելիքությունների մոտ, բայց այդ ժամանակաշրջանում նա ոչ մի դրական հետեւանդիք համար չի կարողանում, որպեսուել թուլացած, ուժից ընկած և Ղարաբաղի այդ ուժեղ խանության կու գնալու սպառնալիքի տակ իրենց գոյությունը հայից պահող Մելիքությունները շեին կարող որեւէ կոնկրետ քայլ կատարել Հովհանքի իմրենի Ջրագիրը կենսագործելու համար։

1770թվին Հովհանքի իմրենը հեռանում է Ղարաբաղը և գնում է Հնդկաստան։ 1772թվին իմրենը Հնդկաստանում Մի քանի քաղաքներ Բարքանեց հետո գնում է հատակում և Մադրաս քաղաքում, իսկ Մադրասում այդ ամանակ ձեղագերպաշտի եր Մի փոքրիկ խմբակ։ Այդ խմբակը

աղքահի ընկում Շահամիր Սուլթանուս Շահամիրյան
Ակա Գրիգոր Դոջաջանյանը և ուրիշները: Այս Մարդիկ
հնդկահայ հարուստ առեվտրահաններից էին: Շահամիրը
սկզբից եղել է արհեստավոր, ինչպես և նրա հայրը, բայց
հետո դարձել էր հարուստ ակնավաճառ: Առեվտրահան
էր նաև Գրիգոր Դոջաջանյանը: Ահա այդ մարդիկ Մար-
դրաստում իրենց գործնեության առարկան էին դարձրել Հայ-
աստանի ապառագրման իդեան: Հովսեփ իմրենց Հայա-
տանում որոշ արդյունքի շհասնելով սահայն առանց
հոսահատվելու գնում է Մադրաս և Միանալով Մադ-
րասի այդ խմբակին այդտեղ է շարունակում իր գործու-
նեությունը, միայն տարբեր Մեթոդներով սկսելով գործը:

Մադրասի այդ փոքրիկ խմբակը բոնում է գրավոր
աշխատաբայր և պրոպագանդիստ ուզին: Այդ խմբակի
ղեկավար Շամիր Սուլթանուս Շահամիրյանը Մադրասում
հիմնում է տպարան, որի կառավարիչ է նշանակում իր
որդի Հակոբ Շահամիրյանը և նրա դաստիրակ Մովսես
Բաղրամյանին, որը քահանա էր, Պարաբաղսի: Բաղրա-
մյանը եղել էր սյունիքում բանական երկար ժամանակ:
Իր սկզբնական կրթությունը ստացել էր Սյունաց աշ-
խատիում, իսկ հետո գնացել Հնդկաստան և դառնել
դաստիրակ Շահամիրյանների տանը, որոնց զավակներին
սովորեցնում է հայերեն լեզու և գերականոթյուն:

Այդ խմբակի գործնեության առաջին արգասիքը
լինում է Մի գիրք, որի վերնագիրն է «Նոր տետրակ
որ Կոչի Խորդորակ»: Այդ գիրքը լույս է տեսնում 1772
թվականին, այդ գույնու Մադրասի խմբակը գնում է իր բա-

զագական մտքերը, Հայաստանը Պարսկական և Օսմանի:
տիրապետությունից ազատելու մասին և նշում է այն միջա-
ներ, որոնցով պետք է այդ ազատությունը ձեռք բերվի:

Երկրորդ գրքը, որ լոյսէ տօնում բազականին ուշ,
Կոչվում է «ՈՐՈԳՎՅԱ ՓԱՌԿՅԱ»: Այդ գրքում մանրանան
պարզաբանվում է, թե Հայաստանը ազատագրելուց հետո
ինչպիսի քաղաքական կարգեր պետք է հաստատվեն այն-
տեղ: Իս փաստորեն մի սահմանադրությունէ, իամ այն-
ի ճիշտ օրենքների հավաքածու:

Մադրասի խմբակը իր ագրտակալի հիմքում գրել է
հետեւյալ սկզբունքները: Ամենիկ առաջ այն, որ քարոզում
են՝ ինչպես բույր մյուս Տաղովորդները, այնպես էլ հայ
ժողովուրդը իրավունք ունի ազատ կերպով տնօրինելու
իր բախուր, սակայն այդ իրավունքը իւշած է օտար որրա-
պետողների կողմից, հարկավոր է նորից ձեռք բերել այդ:
Այնուհետև՝ այդ կարող է տեղի ունենալ միայն մի միջոցով,
երբ հայերի մեջ կարթենի ազատության ոգին, հայրենակ-
րության ոգին և հայ ճնշողները իրենց որդիներին կնետն
դաստիարակել ազատություն ձեռք բերելու գաղաքարներով:
Ապա այդ ազատությունը ձեռք պետք է բերվի ապահովու-
թյան միջոցով, որը պետք է կազմակերպված մուանչան
կերպով տեղի ունենա, և նախ քան այդ ապահովությունը,
հարկավոր է որպեսով ժողովուրդը կինքի և սովորի
պենք գործածել, վարժի կինըորական գործում: Այդ բանի
համար բերված են օրինակներ այլ ժողովուրդների պատրո-
թյուններից: Ինչպես օրինակ լուսիրայի, Բաղամիայի, Շա-

սաստանի պատմություններից, այն իմաստով, որ այդ տեսչ
սրանք էլ մի ժամանակ ընկած էին օտար տիրապետողների
շնի տակ, բայց նրանք պայքարեցին, կովեցին իրենց ազա-
տության համար և ստեղծեցին իրենց սեփական պետությու-
նը : Պետք է սովորել նրանցին : Հետաքրքրություն այն է, որ
